


ԷԶՄԻԱԾԻՆ



1964

ՌՆԺԳ
ԻԱՏԱՐԻ

Ապրիլ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դ

1964



ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆՊԱՆԻ ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻՐԻԿԻՈՍ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱՐԱՊԻ-	3
ԿՈՍԻՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԴԱՐԱՆԱԿ ԶԱՐԵՆ Ա ԿԱՐԱՊԻԿՈՍԻ ՄԱՆՎԱՆ ԽԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԿ	5
ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻՐԻԿԻՈՍ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԱՊՅՈՒՆԸ ԱՄՆԵՎԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ.	7
ՎԱՊԳՆԵ Ա ԿԱՐԱՊԻԿՈՍԻՆ	8
ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻՐԻԿԻՈՍ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԱՄՆԵՎԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱՊ-	10
ԳՆԵ Ա ԿԱՐԱՊԻԿՈՍԻՆ	13
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—ՀԱՐԱՊՅԱՆ ՎԱՊԳՄԱՐ	14
ՓՐԻԶԻ ԲԱՅԱՓԱՆ Ա ՍԱՐԻ ՀԱՐԱՊՅԱՆ ԱՌԻԿ ԱՌԻԿ ԲԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՍԱՐԻ ՎԱՊԱՐԱԳ Ա	15
ԲԱՐՈՂ ՄԱՅՐ ՏԱՆԱՐԱՈՒ	16
ՀՈՂԵՆԱՆՊԱՅԱՆ ԲԱՆՊԻՍԱՎՈՐ ՎԱՊԱՆՈՒ ՄԱՅՐ ՏԱՆԱՐԱՈՒ ՄԵԾԻ ՏԱՆԵՆ ԿԻՐԻԿԻՈՍ ԵՐԵՎԱՆԿԱ-	18
ԲԻՂԱՆԱԿ Տ. Տ. ԶԱՐԵՆ Ա ԿԱՐԱՊԻԿՈՍԻ ՄԱՆՎԱՆ ԱՌԱՅԻՆ ԽԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԿ	21
ՀԱՅԱՐԱՐԱՐԱՊՅՈՒՆ	23
ՎԱՐՊԱՆԱՆՑ ԱՌԻՐ ՄԱՅՐ ԱՐՈՒՈՒ	26
Մ Ա Յ Ր Ա Ք Ո Ւ Ո Ւ Մ	34
ՎԱՊԻԿԱՆԻ ԵՐԿՐՈՂ ԺՈՂՈՐ	36
ՆԵՐԻՆ ԲԵՄԵՐԻ ԽՈՐԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՐ ՄԱՅՐ ԱՐՈՒ ՍԱՐԻ ԷՎԻԱԾՆՈՒ	45
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՐԱՐԱՊԵՏՈՒՅԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ԲԵՆԱԳՈՒՈՐ	48
Հ. Տ. ՍԻՐՈՒՆԻ—ՊԵՐԻՍ Ա ԽՐ ԴԵՐ	56
Հ. ՔՅՈՒՐՅԱՆ—ՊԱՄԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՆԱՄԱՆԵՐ	58
Հ. ԽԱՓԱՆՅԱՆ—ԻՎՐՈՅՆԵՐ ՈՒ ԳՐԱՆԵՐԸ ՄԻՋՆԱՂԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ	60
Հ. ԳԱՎԹՅԱՆ—ԺՁ ԴԱՐԻ ԲԱՅԵՐԵՆ ՎԱՊԱՐԱՐ (ԲԱՐՈՂԱՐՔ) ԲԵՆԱԳՐՈՐ ՄԻ ԲԱՐՈՂԱ-	
ԳՅԱՆ ԲԱՐԱՐԱՐԱՊՅՈՒՆ	
ՍԱՀԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ—ԲԱՐՈՂԱՎԵՐ	
ԲՂԻՍԿԻՆ—ԱՄՆԵՎԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆՊԱՆԻ ԼԱՆՊԱՅԻ ԽՈՂՅՈՒՆ ԳԵՐԱՆՈՐԸ	
Տ. ԷՄԻԼԻԱՆՈՍ ԲԱՅՆ ԵՊԻՍԿՈՊԱՆԻՆ	
ԲՂԻՍԿԻՆ—ՌՈՒՄԱՆՑԻ ԲԱՊԱՐԱՆ ՎՐՈՒՄ. ՎԱՊ ԲԵՐԵՆԱՆՈՒՄԻ ՄԱՆԵՆ ՈՒ ԲԱՐՈՂԱՐ	
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ	



Խմբագրության հասցեն՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1964 թ.



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝
ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԶԱՐԵՀ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԱՀՎԱՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՐՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՑ
ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ,
ԶՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂԶՈՅՆ

ՅԱՆԹԻԼԻԱՍ

Այսօր, երբ Ձերդ Սրբութիւնը և Աթոռիդ միաբանութիւնն ու ժողովուրդը երկիւղածութեամբ կ'ոգեկոչեն յիշատակը հանգուցեալ Զարեհ Ա Կաթողիկոսին, Մենք եղբայրաբար Ձեր կողքին կը գտնուինք, Ձեզի վշտակից և Ձեզի աղօթակից:

Մեծ վիշտ մը եղաւ, այո՛, նաև Մեզի համար, վաղաժամ ու ողբերկազան մահը սիրեցեալ Զարեհ եղբօրը Մեր, որմէ եօթը տարիներ առաջ, տխուր օր մը, սիրոյ համբուրիւ բաժնուած էինք, ուրախ օր մը Վիրար վերստին ողջունելու յոյսով: Զանի անգամներ, Մեր սրտի բովանդակ ջերմութեամբ, փնտռեցինք Մենք այդ ուրախ օրը, որ սակայն, աւա՛ղ, ուշացաւ, և հոգեւոյս Հայրապետը Իր աչքերը փակեց տրտում, յուսաբեկ:

Այսօր, մեզի ամենուս կը մնայ աղօթել միայն, որ Տէրը յաւերժական խաղաղութեան մէջ, սուրբ և պայծառ պահէ հանգուցեալ Հայրապետի բարի ու արդար հոգին, հոգի մը, որ շատ սիրեց իր Մայր Եկեղեցին և իր ժողովուրդը համայն, հոգի մը, որ լուռ տառապեցաւ անոնց ցաւերով, և անձայն շիջեցաւ, ըսելու համար բոլոր հայերուն՝ «Սիրեցեք զմիմեանս»:

Այսօր, Մեր աղօթքին մեջ կալ նաև լոյսը և հաւատքը վառ, թէ կենդանի և
Անոր լոյս հոգին, որ այժմ բոլորովին անխտիր կը բաշխուի իբրև սիրոյ և միութեան
և խաղաղութեան խորհուրդ:

Երակաշնորհ Հայրապետի լիշատակին առաջ, մեր սուրբ սեղաններուն բոլոր
սպասաւորները և մեր ազգին բոլոր պաւակները անգամ մը ևս թող ուխտեն՝ մէկ
և ամբողջ ու անխռով պահպանելու Հայաստանեայց Ս. Եկեղեցին և համայն ժո-
ղովուրդը հայոց:

Ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն և Հայաստանի Մայր Հողէն՝ ող-
ջոյն և օրհնութիւն աստուածային՝ հանգուցեալ **Զարեհ Ա. Կաթողիկոսի** լոյս լիշա-
տակին:

Թող Աստուած հարցն մերոց անշարժ պահէ քրիստոսակերտ մեր Ս. Եկեղե-
ցին, և յաւէտ կենդանի ու շէն հաւատացեալ ժողովուրդը մեր, մէկ ու անբաժան:

Փրկչի Իշման Ս. Տաճարին մէջ, Մեր նախագահությամբ հանդիսաւոր հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի 16 փետրուարին, երջանկայիշա-
տակ Հայրապետի մահուան առաջին տարելիցին առթիւ: Հրահանգած ենք մեր բոլոր
թեմերուն, որ նոյն առթիւ հոգեհանգստեան պաշտօն կատարեն իրենց եկեղեցիներ-
ուն մեջ:

Զերդ Սրբութեան աղօթակից Եղբայր՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-3-ն փետրուարի
1964 Փրկչական ամի,
և ի տուարիս Հայոց ՌՆԺԳ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:





ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա.
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Եղբայր ի Զրիստոս.

Ուրախութեամբ տեղեկացանք, որ ողջամբ վերադարձած էք Ա. Աթոռ և ձեռնարկած Ձեր բարձր պաշտօնի պարտաւորութեանց:

Նոր տարուան և Ա. Ծննդեան կրկնակ տօներուն առթիւ Մեր Ձեզի լղած շնորհաւորագիրը լիայլս ենք որ ստացած էք իր ատենին: Մենք ստացած ենք Ձեր շնորհաւորական գրութիւնը, որուն համար սրտագին շնորհակալութիւններ կը յայտնենք:

Այս առթիւ կ'ուզենք յայտնել, որ բարձրաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոս Աջապահեան, Մեր հրաւերին ընդառաջելով, 31 դեկտեմբեր 1963, լետ միջօրէին, վերադարձաւ Ա. Աթոռ՝ առաջնորդութեամբ Լիբանանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Տաճատ սրբապան արքեպիսկոպոսի և երեք վարդապետներու, ու տեղաւորուեցաւ յատկապէս իրեն համար յարդարուած միաբանական սենեակին մէջ:

Կը յայտնենք նաև, որ 19 յունուար 1964, կիրակի օր, Կաթողիկոսարանիս Ա. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, եպիսկոպոս պիտի ձեռնադրենք ու օծենք Ա. Աթոռիս միաբաններէն գերապատիւ Տ. Տ. Գարեգին և Արտաւազդ ծայրագոյն վարդապետները:

Կը փափաքէինք նաև իմացնել Ձեզի, որ Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկալիշատակ Տ. Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի վաղաժամ վախճանման առաջին տարելիցին առթիւ, 16 փետրուար 1964, կիրակի օր, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն մէջ, եկեղեցական փառաշուք հանդիսութիւններով և հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւններով պիտի ոգեկոչենք երանաշնորհ Հայրապետին մա-

քոր լիշատակը և պիտի աղօթենք Անոր բիւրեղի նման ջինջ ու պայծառ հոգւոյն խաղաղութեան և հանգստեան համար:

Սիրելի՛ Վեհափառ Եղբայր ի Բրիստոս.

Այսու գրով կը լայտենք Ձեզի, որ այս առիթով կը սպասենք, որ Ս. Երուսաղէմի մէջ Ձեր կողմէ տրուած հաւաստիքներուն համաձայն, Մեզի ուղղեալ պաշտօնագրով մը օրհնէիք անթափաչ լիշատակը Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Տ. Տ. Զարեհ Ա Կաթողիկոսին և մաղթէիք, որ լուսոյ Արարիչը Տէր Յիսուս Բրիստոս, Իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ Աստուծոյ հաւատարիմ ծառային և Մեր սրտահաղորդ Եղբոր բարի հոգին և դասէ վԱյն ի շարս ճշմարիտ և երանելի հայրապետաց Հայաստանեայց՝ Ս. Եկեղեցւոյ:

Կը վստահեցնենք Ձեզ, որ Ձեր այս գրութիւնը ոչ միայն սփոփիչ դեր պիտի ունենայ Մեր կսկծալից սրտին վրայ, այլ և օգտակար ազդեցութիւն պիտի ունենայ սիրոյ ոգիին չօրացման և անոր գործնականացումին Մեր հաւատացեալներու կեանքին մէջ:

Աղօթելով Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անշարժութեան և Ձերոյ Վեհափառութեան արևշատութեան համար, մնամ եղբայրական սիրոյ ողջունիւ,

Աղօթակից


Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

13 յունուար 1964

ԱՆԹԻՒԼԻԱՍ





**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Եղբայր ի Զրիստոս.

Այսու կը լայտնենք Ձերդ Եղբայրութեան, թէ հաճոյքով և գոհունակութեամբ ստացած ենք Ձեր 3 փետրուար 1964 թուակիր կոնդակը, որով կ'օրհնէք անթառամ յիշատակը Ս. Աթոռոյս երջանկայիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսին:

Այս առթիւ, Վեհափա՛ռ Եղբայր, հաճեցէք ընդունիլ Մեր և մեր միաբանութեան սրտագին շնորհակալութիւնները և լաւագոյն մաղթանքները Ձեր քաջամողջութեան ու երջանկութեան համար:

Կ'աղօթենք ի բոլոր սրտէ Հայաստանեայց Եկեղեցւոյ անշարժ ու անսասան և հայ ժողովուրդի անխռով պահպանման համար:

Այս առթիւ կը լայտնենք նաև, թէ ստացած ենք Ձեր 15 և 25 յունուար 1964 թուակիր վոյգ պաշտօնագրերը, որոնց պիտի պատասխանենք ի մօտոյ:

Կրկնելով Մեր շնորհակալութիւններն ու սրտագին մաղթանքները Ձեր երջանկութեան ու հայ ժողովուրդի բարօրութեան համար, մնամ եղբայրական սիրով ջերմ ողջունիլ,


Աղօթակից

Խ Ո Ր Է Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

15 փետրուար 1964
ԱՆԹԻԼԻԱՍ





Ն Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Քրիստոնեական Եկեղեցու կամարների տակ վերստին հնչում են Փրկչի հրաշափառ և սուրբ հարության օրհներգերն ու ալելուիաները, Լույսի և Կյանքի մեծ ավետիսը:

«Այսօր լարեալ ի մեռելոց
Փեսայն անմահ և երկնաւոր,
Քեզ աւետիք խնդութեան,
Հարսն ի յերկրէ եկեղեցի»:

(Ներսէս Լամբրոնացի)

Ա. Հարության տունը՝ Զատիկը, մարդկության հոգևոր և բարոյական վերածնության տունն է գերազանցապես:

«Այսօր Զատիկ մեր զենմամբ Քրիստոսի,
Արասցուք տօն ցնծութեամբ,
Նորոգեալքս ի հնութենէ մեղաց»:

(Շարական)

Հարության գերբնական եղելությունը եպակի դեպք է կրոնների պատմության մեջ, Սուրբ Ավետարաններով, առաքելական բարոյությամբ և նահատակությամբ ավանդված Եկեղեցուն և հավատացյալներին:

Առաքյալների և առաջին քրիստոնյաների բարոյության և վկայության գլխավոր նյութն էր Քրիստոսի հարությունը: Առաքյալ և Ավետարանի բարոյիչ լինել նշանակում է վկա լինել Փրկչի հարության. «Վկայ յարութեան Նորա ընդ մեզ լինել» (Գործք Ա 22):

Քրիստոսի հարության բարոյությունը հանդիսացավ հիմնաքարը Եկեղեցու կազմակերպության և սկզբնավորությունը նոր կյանքի և նոր շարժման:

«Քրիստոսի հարությունը, — ասում է Վեհափառ Հայրապետը Վատկական Իր քարոզում, — որպես գերբնական եղելություն մը, եկավ հիմքերեն հեղաշրջելու մարդկության պատմությունը և նոր իմաստ ու նոր ընթացք տալու անոր: Գերբնական եղելություն մը, որ նոր շունչով վերանորոգեց մարդոց և ժողովուրդներու հոգիները, լուսավորեց և նոր ուժերով ու շնորհներով լեցուց Կանոնը և բացավ մարդկության առաջ նոր ճանապարհ բարոյական բարձր ըմբռնումներու և ստեղծագործ կյանքի»:

Բարոյապես սնանկացած, հավատից, տեսիլից և հոգուց դատարկված հին աշխարհը, Քրիստոսի հարության ավետիքով վերակենդանացավ և ուղեկորույս մարդկությունը գտավ իր փրկության ճանապարհը:

«Քրիստոսի հարությունը, — ասում է Վեհափառ Հայրապետը, — դարձած է աղբյուր տևական ապրումներու և ներշնչումներու հավատալի մարդոց ու ազգերու ներաշխարհին մեջ: Հարության հրաշքը դարձած է հոգեկան սնունդ և մարդկային կյանքի ոգեբարոյական պայման»:

Քրիստոսի հարության գերբնական եղելությունը, իբրև խորհուրդ և ոգեկան արժեք, իր նշանակությամբ և հոգևոր-բարոյական ներգործությամբ, հավերժաբար պատկանում է քրիստոնեության բոլոր դարերին և սերունդներին:

Քրիստոսի հարությունը կյանքի հաղթանակն է մահվան դեմ. «մահուամբ զմահ կոխեաց». լույսի հաղթանակը խավարի դեմ. «այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեակ լուսովն և ընչ ծագեաց լուս գիտութեան». հոգու հաղթանակը մարմնի դեմ. «Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն, իսկ յարութեամբ Միածնիդ զգեցաք զանմահութիւն»:

Քրիստոսի հարության դեպքը մարդու հոգևոր և բարոյական կատարելության և աշխարհի ներդաշնակության բանալին է:

Եկեղեցին Քրիստոսի հարության պատգամով իր հավատացյալներին տալիս է նոր կյանքի, «յարուցեալ և փառաւորեալ, առաւել կենսք»-ի հավերժության խոստումը:

Գարնան հետ, ամեն տարի, Քրիստոս խորհրդավոր կերպով հարություն է առնում Ի՛ր հավատացյալների, Ի՛ր Եկեղեցու համար. «Արի՛ որ ննջեալ և կանգնեաց ի մեռելոց և լուսաւորու լիցի քեզ Քրիստոս» (Եփես. Ե 14):

Քրիստոսի հարությունից բնան դար հետո ևս, ամեն Ջատկի առավոտ, նորից մեր դեմ է կանգնած հարուցյալ Փրկիչը, որպես կյանքի աղբյուր, ճշմարտության քարոզ, հավերժական կյանքի հրավեր, ինչպես հարության առավոտ, Ջատկի միաշաբաթի օրը, «վաղ քաջ ընդ առաւօտս», և ասում է մեզ. «Ես եմ, մի՛ երկնեյիք. Վի՛ խնդրէք Վկենդանին ընդ մեռեալս»:

«Այսօր,— ասում է Վեհափառ Հայրապետը,— Քրիստոսի հարության ավետիսը մեզի համար նվիրական հրավեր մըն է հաստատ մնալու մեր նախնյաց հավատքի վեմին վրա և հավատարիմ՝ ավետարանական բարոյականին»:

Հարության տոնն իր ավետիքով ու ապրումներով, իր սրբազան խոհերով և ներշնչումներով, ամենից ավելի խոսում է նաև հավատացյալ հայ մարդու սրտին:

Քրիստոսի հարության հրաշքին առաջին հավատացողներից մեկն է եղել մեր ժողովուրդը, իր կյանքի փորձով:

Հայ ժողովուրդը Հիսուսի նման չարչարվել է խաչը ուսին, բարձրացել իր արյունոտ Գողգոթան և միշտ ցմրուր քամել դառնության բաժակը իր համոզմունքների, իր հայրենի սրբությունների, հավատի և ազգային-հոգևոր ինքնությունության համար, բայց երբեք չի կորցրել իր հարության, իր փրկության հույսը: Եվ մի օր հայ ժողովուրդը վերածնվել է իր վերքերից, արյուններից, առասպելական փյունիկի նման:

«Անցյալի մեջ,— քարոզում է Վեհափառ Հայրապետը,— հայ ժողովուրդը իր կյանքը և իր գոյատևումը իբրև ազգություն, կաթարի ամեն բանե առաջ իր կրոնական հավատքին: Ան կրցավ տոկալ, հաղթահարել պատմության բոլոր արհավիրքները և ամեն նախատակություն հետո վերածնիլ, որովհետև ճշմարտապես հավատաց, թե Քրիստոս «մահուամբ զմահ կոխեաց» և «յարեաւ ի մեռելոց»: Հայոց պատմության ճանապարհը տևապես տառապանքի և

խաչելության ճանապարհ մը եղավ, որուն ընթացքին հայ ժողովուրդը, բազում անգամներ, իր մահով մահը հաղթեց և մեռելներն հարություն առավ: Մենք ինչպե՞ս չհավատանք Քրիստոսի հարության, երբ պատմական վավերական ապացույցը ունինք մեր ժողովուրդի վերածնունդին, մեր ժողովուրդի հարության»:

Քրիստոսի հարության ավետիսը մեր ժողովուրդին բերել է լավագույն և արդար կյանքի հույսն ու խոստումը:

Մեզ չեն կարողացել գերեզմանել ոչ ժամանակը, ոչ արհավիրքները և ոչ էլ մեր թշնամիները: Մենք լույսի, առաջադիմության, հավերժության ժողովուրդ ենք: Մեր տառապանքների Գողգոթայից, տեսել և ողջունել ենք մեր հարության լուսածագը:

Այսօր, հարության հավատով և տեսիլքով վերածնվել է մեր ժողովուրդը ճշմարտապես, իր հայրենի հողի վրա, ուր ապրում է և ստեղծագործում խաղաղ պայմաններում:

«Եմուտ ի նոսա շունչն, եղեն կենդանի և կանգնեցան, կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ բազում յոյժ յոյժ» (Եզեկ. ԼԷ 10):

Դա էլ մեր ժողովուրդի հարությունն է: Ո՛ր եք փնտռում նրան այժմ, հայ ժողովուրդին, մեռելների՝ մեջ, Դեյր-Էլ-Ջորի անապատներում, թե՞ Եփրատի ալիքների մեջ:

«Զէ աստ, այլ յարեալ»:

Ժողովուրդները չեն մեռնի, եթե անձնասպան չլինեն:

Այո, հարյավ հոգին որբ հայ ժողովուրդի: Հարյավ նա և իր Փրկչի հետ քալում է դեպի հավերժություն:

Փա՛ռք մեր ժողովուրդի և հայրենիքի վերածննդին:

«Աստվածակառույց Ս. Էջմիածնի կատարներեն,— բարեմաղթում է Վեհափառ Հայրապետը,— այս խոհերով և այս իղձերով, ցնծությամբ կավետենք հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսի համայն հայ հավատացյալ ժողովուրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, աղոթելով որ սուրբ հարության շնորհքները առատապես բաշխվին մեր Եկեղեցիին և Մեր բոլոր զավակներուն, որպեսպի անոնք շարունակեն իրենց առաքելությունը այս աշխարհի վրա, մեր ազգի մեծ լուսավորիչներու անմար ջահը բարձր բռնած իրենց ձեռքերուն մեջ»:

«Փա՛ռք յարութեան քո, Տէր»:

Փա՛ռք հարաշափառ հարության քո, ժողովուրդ իմ, ժողովուրդ հայոց:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մարտի 29-ին, կիրակի, «Զատիկ, յարութիւն Տեառն մեռոյ Յիսուսի Քրիստոսի»:

Առաւոտյան ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, բաճանապետական լրիվ զգեստավորման մեջ, եկեղեցական թափուրով, ամպնովանու տակ, խնկով ու շարականով, Վեհարանից առաջնորդվում է Մայր Տաճար մեծածախնդես շուքով, մատուցելու զատկական հայրապետական սուրբ պատարագը:

Մայր Տաճարը լիքն է ուխտավոր բազմութեամբ:

Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերով, տեղ են գրավել Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ծննդարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտօնեությունը և այլ հրավիրյալներ:

Սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը հաջողությամբ կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը:

Վեհ, հաղթական ու սրտառուլ հնչում են «Քրիստոս յարեալ ի մեռելոց» և «Գովեա երուսաղէմ դՏէր» մեղեդիները:

Սուրբ սեղանին սպասարկում են գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանները, վարդապետներ և սարկավազներ:

«Հայր մեր»-ի ժամանակ բարոզում է Վեհափառ Հայրապետը:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Մեր Սուրբ և Առաքելական Եկեղեցին վերստին կուգա մեզի ամենուս ավետելու հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուս Բրիս-

տոսի: Այս մեծ ավետիսով, գարուն կիջնե աշխարհի վրա, այս մեծ ավետիսով գարուն կուգա մեր հոգիներուն: Նոր կյանքի սոսափյուն բնության մեջ, նոր կյանքի լուսաբաց մարդկային հոգեկան աշխարհին ներս:

«Փա՛ռք հրաշափառ յարութեան քո, Տէր»:

Քրիստոս, Իր ծնունդով և Իր բարոյությամբ, բայց մանավանդ Իր հարությամբ, եղավ «լուումն օրինաց և մարգարէից»:

Քրիստոսի հարությունը պատմական գերբնական իրողություն մըն է, մեզի ավանդված Ս. Ավետարանով: Գերբնական եղելություն մը, որ եկավ հիմքերեն հեղաշրջելու մարդկության պատմությունը և նոր իմաստ ու նոր ընթացք տալու անոր: Գերբնական եղելություն մը, որ նոր շունչով վերանորոգեց մարդոց և ժողովուրդներու հոգիները, լուսավորեց և նոր ուժերով ու շնորհներով լեցուց զանոնք, և բացավ մարդկության առաջ նոր ճանապարհ՝ բարոյական բարձր ըմբռնումներու և ստեղծագործ կյանքի: Վերջին երկու հազար տարիներու ընթացքին, քրիստոնեության մտածումի թռիչքով, զգացումի ջերմությամբ և տեսիլքներու և որոնումներու խոյանքով հորինված բոլոր հրաշալիքները, որոնցմով լեցուն է այսօր աշխարհն ամբողջ, Քրիստոսի աստվածային հարության փառքը կ'պատմեն: Սակայն, ինչ որ թերևս առավել կարևոր է ու նշանակալից, այն է, թե Քրիստոսի հարությունը դարձած է աղբյուր տևական ապրումներու և ներշնչումներու, հավատավոր մարդոց ու ազգերու ներաշխարհին մեջ: Հարության հրաշքը դարձած է հոգեկան սնունդ և մարդկային կյանքի ոգեբարոյական պայման: Հավատալ Քրիս-

տոսի հարության՝ հոգեկան վիճակն է այդ, ավետարանական ոգեկանությամբ ու բարոյականով լուսավորված մարդուն: Մանավանդ այս իմաստով, այս լույսին ներքև է, որ կհայտնվի մեզի ճշմարտությունը մեծ առաքյալի խոսքին: **«Եթե Բրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոյութիւն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր»** (Ա. Կորնթ. ԺԷ 14):

Այսօր, Բրիստոսի հարության ավետիսը մեզի համար նվիրական հրավեր մըն է հաստատ մնալու մեր նախնայաց հավատքի վեմին վրա և հավատարիմ՝ ավետարանական բարոյականին: Անցյալի մեջ հայ ժողովուրդը, իր կյանքը և իր գոյատևումը իբրև ապգոյություն, կպարտի ամեն բանն առաջ իր կրոնական հավատքին: Ան կրցավ տոկալ, հաղթահարել պատմության բոլոր արհավիրքները և ամեն նահատակությունն հետո վերածնիլ, որովհետև ճշմարտապես հավատաց, թե Բրիստոս «մահուամբ վճար կոխեաց» և «յարեաւ ի մեռելոց»: Հայոց պատմության ճանապարհը տևապես տառապանքի ու խաչելության ճանապարհ մը եղավ, որուն ընթացքին հայ ժողովուրդը, բազում անգամներ, իր մահով մահը հաղթեց և մեռելներն հարություն առավ: Մենք ինչպե՞ս չհավատանք Բրիստոսի հարության, երբ պատմական վավերական ապացույցը ունենք մեր ժողովուրդի վերածնունդին, մեր ժողովուրդի հարության:

Բրիստոսի հարության ավետիսը մեզի համար հրավեր մըն է սուրբ պահելու այդ մեծ հիշատակը իբրև հոգեկան ապրում, իբրև մեր հոգիները ներշնչող և բեղմնավորող լույս, իբրև մեր կյանքին նպատակ և մեր աշխատանքին իմաստ տվող ճշմարտություն, իբրև մեզ բարոյապես հլորացնող ու անպարտելի դարձնող ոգեկան ուժ: Բրիստոսի հարության լույսով, մենք պիտի շարունակենք հավատալ հայ ժողովուրդի կյանքի մշտանորոգ ուժերուն և անոր հավերժության: Հիսուս այսօր ալ կըսե մեզի՝ **«Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք»** (Յովհ. ԺԴ 20):

Բրիստոսի հարությունը մեր հույսն է, մեր պահն է, մեր հաղթությունն է, մեր ուրախությունն է:

«Փա՛ռք հրաշափառ յարութեան քո, Տէր»:

Բրիստոսի հարության ավետիսը հրավեր մըն է նաև ուղղված բոլոր մարդոց և աշխարհի բոլոր ժողովուրդներուն, որ անոնք ապրին սիրով և խաղաղությամբ: Վասնզի Բրիստոսի հարությունը գերազույն հաղթանակն է սիրո և խաղաղության հիշանին, սիրո և խաղաղության գաղափարին: Մանավանդ հարության ավետիսով, մարդկային աշխարհի մեջ հլոր ու համատարած կհնչե խաղաղության ձայնը և հաշտության ու եղբայրության պատգամը, հորիզոնն հորիզոն:

Նաղաղություն աշխարհաց, սեր ու եղբայրություն մարդոց և ժողովուրդոց. անա հրամայական պատգամը մեր ժամանակներուն, մեր ժամանակ-

ներուն, այո՛, երբ աշխարհակործան պատերազմներու ուրվականը կխռովե կյանքը և խիղճը համայն մարդկության: Մենք Պողոս առաքյալի խոսքը պիտի վերծանենք, մեր օրերու կյանքի պայմաններուն մեջ, ըսելով. Եթե հարուցյալ Բրիստոսի խաղաղության պատգամը պիտի չկարողանանք կենսագործել աշխարհի վրա, ընդունայն է մեր հավատքը, ընդունայն է մեր քարոյությունը:

Աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության կենսագործման աստվածահաճո ճանապարհին վրա, բարերար, վճռական դեր կարող են կատարել աշխարհի կրոնքները, հատկապես քրիստոնեական եկեղեցիները: Այս տեսակետն անշուշտ որ հուսադրիչ և գոտեպնդիչ մեծ երևույթ մըն է այն ճիգը, որ ի գործ կդնեն մեծ ու փոքր քրիստոնյա եկեղեցիները, իրարու մերձենալու ավետարանական սիրով և գործակցելու իրարու հետ փոխադարձ հարգանքով, ի խնդրի քրիստոնեական իդեալներու կենսագործման մարդկային աշխարհի մեջ: Եվ Մենք կխորհինք, թե այդ իդեալներու գերազույնը և իր այժմեությանը առաջնահերթը խաղաղության իդեալն է, որուն շուրջ պետք է համախմբվին բոլոր եկեղեցիները և բոլոր կրոնքները:

Հայաստանյայց եկեղեցին ամենաջերմ ուրախությամբ կողջունե համաքրիստոնեական մեծ շարժումը և կհավատա, թե մոտ ապագային կրնա միխթարական իրողություն մը դառնալ քրիստոնյա եկեղեցիներու, բոլոր եկեղեցիներու եղբայրության լույսը և գործակցությունը, ավետարանական սիրո ոգիով, ամեն եկեղեցի պահպանելով իր դավանաբանական մտածելակերպը, պատմականորեն ծնունդ առած ու դարերու հույվովյալ վարձագած իր ավանդություններն ու իր կրոնական-ազգային հոգեբանությունը և իր ինքնագույն, անպայման ղեկավարությունը:

Աստվածակառույց Ա. Էջմիածնի կատարներն, այս խոհերով ու այս իղձերով, ցնծությամբ կավետենք հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուս Բրիստոսի, համայն հայ հավատացյալ ժողովուրդին, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, աղոթելով, որ սուրբ հարության շնորհները առատապես բաշխվին մեր եկեղեցիին և Մեր բոլոր զավակներուն, որպեսզի անոնք շարունակեն իրենց առաքելությունը այս աշխարհի վրա, մեր ազգի մեծ լուսավորիչներու անմար ջահը բարձր բռնած իրենց ձեռքերուն մեջ:

Հարուցյալ Փրկչի Իջման Ա. Սեդանի առաջ, կաղոթենք նաև Մեր սրտի բովանդակ ջերմությամբ, որ Տերը անփորձ ու բովանդակ պահե մեր Ա. եկեղեցին, Իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսո Պատրիարքությանց հայոց Աթոռները և օրհնե անոնց միասնական սուրբ աշխատանքը և խա-

ղաղ ու եղբայրական գործակցությունը՝ ի պահպանություն և ի հոգաոր շրտություն հայ հավատացյալ ժողովուրդի կյանքիս, մասնական ի սպիտակ աշխարհի Սեր պանդուխտ վազակներուն, որոնք Եկեղեցիին կհայցեն իսաստուն, հեռատես և կենարար առաջնորդություն, համարապետուն իրենց եկեղեցական-ազգային կյանքին միության և խաղաղության: Մենք կհավատանք Երուսաղեմի ողջագուրումի ոգիին և կմնանք անոր հավատարիմ բանիվ և գործով, սպասելով նույն վերաբերմունքը և գործելակերպը բոլորեն, ի սեր Եկեղեցիի և ազգի: Թեև վերջերս անսպասելի կացություններ կպարզվին այդ եկեղեցաշեն ոգիին հակառակ, սակայն Մայր Աթոռը կմնա հետևողական ու լավատես, ամեն բանե վեր ապավինելով Աստուծո ողորմության և հայ ժողովուրդի արդար խղճին:

Եվ արդ, սիրեցյալ հավատացյալ վազակներ Մեր, երբ տոնական ուրախությամբ ձեզի կավետենք հրաշափառ հարությունը մեր Փրկչին՝ Հիսուսի, Մեր աղոթքն ու մաղթանքն է մանավանդ, որ Տերը իր շնորհներով լեցնե ձեր սրտերն ու հոգիները բոլոր, և պահե ու պահպանե զձեզ անփորձ և անվտանգ, խաղաղ ու բարօր:

Սիրելի՛ հավատացյալ վազակներ Մեր, դուք, որ հավաքված եք այս Ս. Տաճարին մեջ և դուք, որ Մեզ կյսեք հեռուներեն, լուսաշող Ս. Էջմիածնեն և վերածնած Մայր Հայրենիքեն, կշնորհավորենք զձեզ բոլորդ Բրիստոսի հարության մեծ ավետիսով և հայրական սիրով կաղոթենք բոլորիդ կյանքի բարօրության և խաղաղության համար:

Մանավանդ դուք, հեռավոր պանդուխտ վազակներ Մեր, սուրբ հարության շնորհներով անսասան ու կենդանի պահեցեք ձեր հավատքն ու ձեր հայկական հոգին, ձեր աչքերը միշտ հառած դեպի Հայաստան աշխարհ, Մայր Երկիրը ձեր լուսաբնակ նախնյաց և դեպի լուսո խորան Ս. Էջմիածին, քրիստոսաշեն Մայր Աթոռը ամենայն հայոց:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացեք, միախառնեցարուք, միաբան լերուք, խաղաղությամբ արարեք և Աստուծո խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ: Ողջոյն տուր միմեանց ի համբոյր սրբութեան» (Բ Կորնթ. ԺԳ 11—12), և «Ընդ հաշտութեան Աստուծոյ մի-

մեանց արկցուք գիրկս սիրով և միաբան գոչեցուք» Բրիստոս լարեալ ի սեռեցոյն» (Շարական):

«Շնորհք Տեառն մերոյ Տիսուսի Բրիստոսի և սեր Աստուծոյ եղիցին ընդ ձեզ ամենեսին»:

Ամեն:

Նույն օրը, երեկոյան ժամը 11.30-ին, Երեւանի ռադիոկայանից ձայնասփռվում է Վեհափառ Հայրապետի բարոգը:

Հավարտ սուրբ պատարագի, Նորին Ս. Օծուխյունն առաջնորդվում է Վեհափառ շնորհավորություններ ընդունելու:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր ձեռնարանի դասախոսական կազմի և ուսանողության ու բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետի զատկական տոնը շնորհավորում է գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը:

Ապա Նորին Ս. Օծուխյունը խոսք առնելով, շնորհավորում է հայ ժողովրդի մեծագույն տոնը՝ Զատիկը, և օրհնելով բոլոր ներկաներին, բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մեր նվիրապետական Աթոռների, թեմերի պայծառության, Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և հայ ժողովրդի բարօրության, բարգավաճման, աշխարհի խաղաղության համար:


Երեկոյան ժամը 4-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է զատկական իր սեղանին մասնակից դարձնել Մայր Աթոռի միաբանության և հյուրերին:

Վեհաբանում, զատկական սեղանների շուրջ, ստեղծվում է չերմ, հայկական մթնոլորտ: Շնորհավորության և բարեմաղթության բաժակաճառեր են արտասանվում Վեհափառ Հայրապետի կենաց, Մայր Աթոռի անսասանության, Մայր Հայրենիքի և հայ ժողովրդի բարօրության ու բարգավաճման համար:

Խմբովին երգված Տերմեհական աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով փակվում է զատկական տոնի հանդիսության նվիրված ընդունելությունը:

Ս. Հարության տոնի առթիվ փոխանակված շնորհավորականները կտրվեն ամազգրի մայիսի համարում:— Խմբ.:





**ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՇՏՈՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ**

Փետրվարի 16-ին, Մեծ պահոց Արտաքսման կիրակին, Մայր Տաճարում, հավարտ սուրբ պատարագի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոն, Մեծի Տանն Կիլիկիո հանգուցյալ երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան առաջին տարելիցի առթիվ:

Առավոտյան ժամը 12-ին, Մայր Տաճարում, մեղմ և դաշն, պաշտվում է սուրբ պատարագը Ավագ Սեղանի վրա, փակյալ խորանի առաջ:

Սուրբ պատարագին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը:


«Հայր մեր»-ից առաջ, երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի կյանքի և գործունեության մասին դամբանական է խոսում

Հոգևոր ձեռնարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը՝ «Միմոն Յովնանու, սիրե՞ս զիս» բնաբանով (Յովհ. ԻԱ 16—17):

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան հատուկ պաշտոն հոգեկույս Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի մահվան տարելիցի առթիվ:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունում է ցավակցություններ և օրհնելով ազգն ու Եկեղեցին, պաժառույթուն է մաղթում Հայաստանյայց Եկեղեցուն և մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդին:

Խո՛ւնկ և աղո՛թք երջանկահիշատակ Տ. Զարեհ Ա Կաթողիկոսի հիշատակին:





Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մայր Աթոռ, ցավոք սրտի, տեղեկացավ ի մասին անսպասելի ներկայության և գործունեության, Ս. Էջմիածնի իրավասության ենթակա Մարսելի թեմի մեջ, Կիլիկյան Աթոռի միաբան Ս. Արտավազդ եպիսկոպոսի, որի հետևանքով Մարսելի հայ եկեղեցական համայնքի ծոցում առաջացած է ներքին խռովություն և պառակտում: Ստացված են բողոքագրեր Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ Ս. Սերովբե արքեպիսկոպոսից և Մարսելի հայոց թեմական և եկեղեցական վարչության կողմից:

Մայր Աթոռ այս պարագան համարում է եկեղեցական կանոնների բացահայտ խախտում և բոլորովին ոչ համաձայն Երուսաղեմի 26 հոկտեմբեր 1963 թվականի ողջագրության ոգուն: Որով, խիստ բաղձալի է և անհրաժեշտ, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը անհապաղ պարտն ու պատշաճը տնօրինի, ի պահպանումն Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց, նվիրապետական մեր Աթոռների իրավասությանց սահմանների և սփյուռքահայ եկեղեցական կյանքի միասնության ու խաղաղության:

9 մարտի 1964 թ.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ





ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 6-ին, հինգշաբթի, Մայր Աթոռում հանդիսութեամբ նշվում է տոնը «Մբոց վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին»:

Առավոտյան ժամը 11-ին, օրվա տոնի առիթով, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը Մայր Տաճարում մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ:

Սուրբ պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ, Ավագ Սեդանի ատյանում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ, կատարվում է հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց ազգիս Հայոց»:

Հավարտ սուրբ պատարագի, իջման Ս. Սեդանի առաջ, պատարագիչ սրբազանը բարոդում է հետևյալ բնարանով. «Այսուանտն և մեք որ այսչափ շուրջ գմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեցումք և զմեղս կարեւորս, համբերութեամբ ընթացումք ի պատերազմ որ առաջի կայ մեզ. հայեցումք ի զօրագուման հաւատոց և ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրախութեան որ եմա առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց զամօքն, նստաւ ընդ աջմէ Աթոռոյն Աստուծոյ» (Եբր. ԺԲ 1—2):

Ապա, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, կատարվում է հայրապետական մաղթանք: Այսօր Նորին Ս. Օծուծյան անվանակոչութեան տոնն է:

Տաճարում ներկա եղող հավատացյալները աջահամբույրով շնորհավորում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչութեան տոնը:

Հանդիսութեան ավարտին, Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, որտեղ ընդունում է շնորհավորութիւններ:

Հետմիջօրեի ժամը 2-ին, Հոգևոր Ծննդաբանի հանդիսասրահում, Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, տեղի է ունենում գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին: Հանդիսութիւնը բացվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվագով և «Նորահրաշ պսակաւոր» շարականով:

Բացման խոսք է ասում Ծննդաբանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը:

Հոգևոր Ծննդաբանի ուսանողները հաջողութեամբ կատարում են «Թէ հայրենեաց» խմբերգը, «Արիացեալք» և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականները:

Արտասանվում են Եղիշէի «Տիկնայք փափկասունք»-ը և Վահան Թեքեյանի «Եկեղեցին Հայկական»-ը:

Բ լսարանի ուսանող բարեշնորհ Ժիրայր սարկավագ Գալիաբջյանը ընթերցում է մի սրտառուչ ուղերձ՝ Վեհափառ Հայրապետի անվանակոչութեան տոնի առթիվ գրված:

Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված այս հանդիսութեան գլխավոր բանախոսն էր «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ծննդաբանի դասախոս Ա. Հատիտյանը, որը վեր է հանում Ղևոնդյանց եկեղեցական ուխտապահութեանն ու Վարդանանց հերոսամարտի հոգևոր, մշակութային և հայրենասիրական նշանակութեանը:

Հանդիսութեանը վերջանում է Վեհափառ Հայրապետի հայրենասիրական պատգամով և «Պահպանիչ»-ով:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ ՈՒ Մ

Փետրվարի 14-ին, ուրբաթ, «Տեառնընդա-
ռաջ»: Մայր Տաճարում պատարագեց գերա-
շնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը և
քարոզեց «Եղոյս ի յայտնութիւն հեթանոսաց»
բնարանով:

* *

Փետրվարի 15-ին, շաբաթ, երեկոյան ժամը
7-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսութեանց
արահում, Վեհափառ Հայրապետը կրօնա-
բարոյական թեմայով բովանդակելից դասա-
խոսութիւն կարդաց Մայր Աթոռի միաբա-
նութեան և Հոգևոր Ճեմարանի ուսանողու-
թեան համար: Դասախոսութիւնը լսվեց մեծ
հետաքրքրութեամբ:

* *

Փետրվարի 16-ին, կիրակի («Աւռախ-
ման»), Մայր Տաճարում պատարագեց ար-
ժանապատիվ Տ. Հովհաննէս քահանա Մա-
րությանը:

* *

Փետրվարի 23-ին, կիրակի («Անառակի»),
Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ.
Մուշեղ վարդապետ Պետիկյանը, քարոզեց
հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝
«Աստուած ոչ կամի զմահ մեղաւորի» բնա-
րանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:

* *

Փետրվարի 29-ին, շաբաթ, երեկոյան ժամը
7-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայ-
րապետը խոսեց Մայր Աթոռի միաբանութեան
և ուսանողութեան, հայրապետական իր շոր-
քող ուղևորութեան տպավորութիւնների և
հուշերի մասին:

* *

Մարտի 1-ին, կիրակի («Տեոնեսին»), Մայր
Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մու-
շեղ վարդապետ Պետիկյանը՝ «Արարէք ձեզ
քարեկամս ի մամոնայէ անիրաւութեան»
բնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:

* *

Մարտի 1-ին, կիրակի, Երևանի Ս. Սարգիս
եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն
վարդապետ Բերբերյանը՝ «Տուր զհամար
տնտեսութեան քո» բնարանով:

* *

Մարտի 8-ին, կիրակի («Դատաւորին»),
Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ.
Արսեն վարդապետ Բերբերյանը, քարոզեց
Արարատյան թեմի փոխանորդ հոգեշնորհ Տ.
Վահան վարդապետ Տերյանը՝ «Տէր, ուստ մեզ
կալ յաղօթս» բնարանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:

* *

Մարտի 8-ին, կիրակի, Երևանի Կոնդի Ս.
Հովհաննէս եկեղեցում քարոզեց հոգեշնորհ
Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը՝ «Աս-
տուած իմ, բաւա զիս զմեղաւորս» բնարա-
նով:

* *

Մարտի 14-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Գրի-
գորի Լուսաւորչին մերոյ սոսկալի շարչարա-
նացն և մտին ի վիրապն»: Մայր Տաճարում,
իջման Ս. Սեդանի առաջ, պատարագեց Բաք-
վի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ

եպիսկոպոս Սանթրոյանը և քարոզից «Զպակասութիւն շարժարանաց Տեառն ի մարմնի բում կրեցեր» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Մարտի 15-ին, կիրակի («Գալստեան»), Մայր Տաճարում պատարագից հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանը, քարոզից հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, բնաբան ընտրելով «ՅԱթոռն Մովսիսի նստան դպիրքն և Փարիսեցիք»:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Մարտի 21-ին, շաբաթ, երեկոյան ժամերգութիւնից հետո, Մայր Տաճարում հոգեհանգստյան պաշտոն կատարվեց Երեանի Ս. Կաթողիկէ եկեղեցու ծխատեւր, հայր և որդի Տ. Ստեփանոս (ծնված 1828 թ.) և Տ. Խաչատուր (ծնված 1873 թ.) Տեր-Գրիգորյան քահանաների հիշատակին, նրանց հարազատների խնդրանքով:

Լուսահոգի քահանա հայրերը երկար տարիներ ծառայել են Երեանի Ս. Կաթողիկէ եկեղեցում և մահացել են նույն՝ 1913 թվականին:

* *

Մարտի 22-ին, կիրակի, «Մաղկազարդ»: Մայր Տաճարում պատարագից գերաշնորհ Տ. Հակակոյուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և քարոզից «Եւ դրդեցաւ քաղաքն ամենայն» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան, ավանդական հանդիսութեամբ, կատարվեց «Դռնբացէք»-ի արարողութիւնը:

* *

Մարտի 26-ին, Ավագ հինգշաբթի, «Յիշատակ ընթերցաց»: Մայր Տաճարում պատարագից հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պե-

տիկյանը:

Երեկոյան ժամը 5-ին կատարվեց «Ոտնաբույս»-ի արարողութիւնը, հանդիսագրութեամբ գերաշնորհ Տ. Հակակոյուն արքեպիսկոպոսի:

Ժամը 7-ին Մայր Տաճարում պաշտովեց Փրկչի մատնութեան և շարժարանաց կարգը:

Արարողութեան ներկա էր Վեհափառ Հայրապետը և քարոզից Հիսուսի փրկագործ շարժարանաց մեծ խորհրդի մասին:

* *

Մարտի 27-ին, Ավագ ուրբաթ, առաւոյտյան ժամը 11-ին, Մայր Տաճարում պաշտովեց Հիսուսի խաչելութեան կարգը:

Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսագրութեամբ, կատարվեց Բրիստոսի թաղման կարգը, եկեղեցական թափոքով:

* *

Մարտի 28-ին, շաբաթ, «Ճրագալոյց Զառկի»: Երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարում, Հոգեւոր Ճեմարանի ուսանողները ընթերցեցին Դանիելի գիրքը: Ճրագալոցի հանդիսավոր պատարագը մատուցեց գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը:


Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որն արարողութեան ավարտին եկեղեցական թափոքով առաջնորդվեց Վեհաբան:

* *

Մարտի 30-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»: Մայր Տաճարում պատարագից հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետը:

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն «վասն համօրէն ննջեցելոց»:





ՎԱՏԻԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ ԺՈՂՈՎԸ

1963 թվականի հուլիսի 16-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոնական գիր էր ստացել Վատիկանից, որով Նորին Սրբութիւնը Պողոս Զ Սրբազան Պապի անունից, Նորին Գերագնացութիւն կարգինալ Բեան սիրալիր հրավեր էր ուղղում՝ երկու դիտորդ ուղարկելու Վատիկանի եկեղեցական երկրորդ ժողովին, իրրեւ ներկայացուցիչներ Հայաստանայաց Առաքելական Եկեղեցու:

Ամենայն Հայոց Հայրապետը սիրով ընդունում էր հրավերը և նկատի ունենալով նաև 1962 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Եպիսկոպոսական ժողովի կողմից հայտնված ցանկութիւնը, որովում էր ընդառաջել Վատիկանի հրավերին և նշանակել երկու դիտորդ Հայաստանայաց Առաքելական Եկեղեցու անունից:

Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, 1963 թվականի սեպտեմբեր 2-ի նիստում, լիազորում էր Մոսկովայի հայոց հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Պարգե Եպիսկոպոս Գևորգյանին և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պր. Գրիգոր Բերմեզյանին՝ ներկայացնելու Հայաստանայաց Առաքելական Եկեղեցին Վատիկանի երկրորդ եկեղեցական ժողովում, դիտորդի հանգամանքով:

Սուրբ քաղվածարար ներկայացնում ենք Վատիկանի եկեղեցական երկրորդ ժողովի Հայ եկեղեցու պատվիրակների կողմից Վեհափառ Հայրապետին տրված զեկուցագրի գլխավոր մասերը:

Վատիկանի եկեղեցական երկրորդ ժողովի նստաշրջանի աշխատանքներն սկսվում են 1963 թվականի սեպտեմբերի 29-ին և շարունակվում են մինչև դեկտեմբերի 4-ը:

Ժողովը տեղի է ունենում Հռոմում, Ս. Պետրոս Մայր Տաճարում:

Վատիկանի եկեղեցական երկրորդ ժողովի աշխատանքներն սկսվում են սեպտեմբերի 29-ին, կրոնական արարողութեամբ և սուրբ պատարագի մատուցմամբ:

Ժողովի պաշտոնական բացումը կատարում է Նորին Սրբութիւնը Պողոս Զ Սրբազան Պապը՝ բոլոր ժողովականներին, հյուրերին և դիտորդներին ուղղված ողջույնի ուղերձով:

Ժողովի զործնական աշխատանքներն սկսվում են սեպտեմբերի 30-ին:

Վատիկանի եկեղեցական երկրորդ ժողովը բնութեան է առել հետևյալ հարցերը.

1. Եկեղեցին:
2. Եկեղեցու նվիրապետութեան կազմի մասին և հատկապես Եպիսկոպոսների մասին:
3. Ամուսնացյալ սարկավաղների մնայուն կարգը վերահաստատելու մասին:
4. Աստուծո ժողովուրդը, և հատկապես աշխարհականները:
5. Սրբութեան կոչումը եկեղեցու մեջ:
6. Եպիսկոպոսների և թեմերի վարչութեան մասին:
7. Էկումենիզմի մասին:

Վիճարանութեանների ընթացքում ի հայտ եկավ, որ Կաթոլիկ եկեղեցու մեջ գոյութիւն ունեն մի քանի դիրքավորումներ.

1. Իսլամ-իսլամական թեր, որը եռանդուն կերպով կանգնած է ավանդական կարգերն ու սովորութեաները պահելու տեսակետի վրա:

2. Ֆրանսիական և լատինական ամերիկյան խումբը պահանջում է բարենորոգումներ:

3. Հյուսիս-ամերիկյան խմբավորումը առաջարկում է եկեղեցու արդիականացում:

ներկա պահանջներին և պայմաններին համաձայն:

4. Ասիական և աֆրիկյան եկեղեցիները պահանջում են առաջնային ուշադրություն նվիրել միսիոներական շարժման վրա:

5. Մերձավոր Արևելքի ներկայացուցիչները պահանջում են ավելի մեծ ինքնուրույնություն և ներքին ինքնավարություն:

«Եկեղեցի» գլոբալ մեջ խոսվում է ընդհանրապես Քրիստոնեական եկեղեցու մասին, այլ ոչ թե միայն Կաթոլիկ եկեղեցու մասին:

Ելույթ ունեցող հոնտոնները ցույց տվին, որ վատիկանի ժողովի գլխավոր նպատակներից մեկն է եկեղեցին բարենորոգել և կազմակերպել, որպեսզի այն կարողանա համաբալ ընթանալ ժամանակի պահանջների հետ և հարմարվի արդիականության պայմաններին:

Ժողովի օրակարգի կարևոր հարցերից մեկը նախագծի երկրորդ գլուխն էր՝ «Եկեղեցու ճվիրապետական կազմի մասին և հատկապես եպիսկոպոսների մասին»:

Այս հարցը ունի երկու մաս.

ա. եպիսկոպոսների հավաքական դասը՝ որպես իշխանություն.

բ. Այդ իշխանության գործադրության ձևերը, որոնք բնորոշվեցին 5-րդ գլխում՝ «Եպիսկոպոսների և թեմերի վարչության մասին» վերնագրի տակ:

Այս խնդիրը առաջ բերեց հակընդդեմ տեսակետների ուժեղ բախումներ: Այստեղ է, որ իտալո-իսպանական խմբավորումը ամբողջ ուժով կանգնեց պահպանողական և ավանդապահության դիրքերի վրա, մինչ ֆրանսիական, ամերիկյան և մերձավոր-արևելյան պատգամավորությունները պահանջեցին Պապի իշխանություն և Կաթոլիկ եկեղեցու կառավարման գոյություն ունեցող կարգի հիմնական վերանայում:

Շատ պատգամավորներ պահանջեցին վերանայել Կուրիայի, Սրբազան ժողովի և նույնիսկ իրավասությունը գոյություն ունեցող կարգը Կաթոլիկ եկեղեցում:

Թե՛ նախագիծը և թե՛ հոնտոնները առաջարկում էին կազմել թեմերի ազգային եպիսկոպոսական ժողովներ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար պետք է հավաքվեն Վատիկան և քննարկեն հարցերը. տրված որոշումները պետք է գործադրվեն համապատասխանաբար Կուրիայի և Սրբազան ժողովի կողմից: Մի տեսակ «եպիսկոպոսական ժերակուլտ», որի որոշումները ենթակա են Պապի հաստատմանը:

Տեղերում, եպիսկոպոսները ունենում են ներքին ինքնավարություն և գործելու լայն ազատություն:

Ժողովում խոսվեց նաև Պապի անսխալականության մասին: Պապը անսխալական է, պնդում էին ոմանք, ոչ թե ձեռնադրությամբ, այլ եպիսկոպոսների հավաքականության համագործակցությամբ՝ եկեղեցիով:

Թեմական եպիսկոպոսներին առաջարկվեց 70 տարեկանից հետո հրաժարվել, ճամբաբաց անելու համար երիտասարդներին, որպեսզի հնարավոր լինի եկեղեցու գործերը վարել ավելի համարձակ, եռանդուն և ոգևորությամբ:

Երկրորդ գլխում քննարկվեց նաև ամուսնացյալ սարկավազների մնացուցիկ կարգ հաստատելու հարցը, որը տեղի տվեց բուռն վեճերի: Իտալո-իսպանական ճակատը կտրական կերպով մերժում էր նման միտքը, առարկելով, որ դա կխանդարի կուսակրոն բաժանաների գործունեությանը:

Սակայն Ասիայի, Աֆրիկայի և լատինական Ամերիկայի ներկայացուցիչները իրենց համար կենսական անհրաժեշտություն էին համարում ամուսնացյալ սարկավազների կարգի վերահաստատումը: Այս սարկավազները պիտի կատարեն հավատացյալների առաջին անհրաժեշտության պահանջները՝ մկրտել, պսակել, թաղել և այլն:

Երրորդ գլխում քննարկվեց «Աստուծո ժողովուրդը և հատկապես աշխարհականները» հարցը:

Եկեղեցին հոգևորականի և հավատացյալի միասնությամբ ամբողջացած հաստատություն է: Ուստի, երկուսն էլ ունեն հավասար իրավունք և պարտականություն եկեղեցու պայծառացման գործում: Աշխարհականն էլ բաժանա է ըստ կոչման և ըստ հավատի: Կոչ է արվում աշխարհականին օգնել եկեղեցուն գիտելիքներով, խորհուրդներով և գործունեությամբ, իր ընտանեկան, հասարակական և քաղաքական գործունեությամբ լինել վկան հավատի: Իսկ եկեղեցին, գործուն կերպով պետք է մասնակցի հավատացյալի նյութական և հասարակական պայմանների բարելավմանը:

Առաջարկվում էր նույնիսկ կանանց գործուն մասնակցությունը եկեղեցու գործերին, ընդհուպ մինչև եկեղեցական ընթացիկ ժողովին նրանց մասնակցությունը:

Բուռն կերպով դատապարտվեց ցեղային խտրականությունը, քանի որ բոլոր մարդիկ հավասարապես Աստուծո ժողովուրդի անդամներն են:

Նախագծի չորրորդ գլուխը կոչվում է «Սրբության կոչումը եկեղեցում»: Այս հատվածի հիմնական նպատակն է ամրապնդել եկեղեցու ներքին կառուցվածքը, ապահովելով հոգևորականի և հավատացյալի կենցաղի և գործունեության սրբությունը, դեպի եկե-

դեցին նվերվածութիւնը և աստվածային պատգամների գործադրութիւնը կյանքում, Զգտումն է ստեղծել բրիստոնեական միասնական և հավատալոր հասարակութիւն: Սրբութեան ձգտումը ուժի ներշնչանքն է: Հավատացյալը պետք է կարողանա նմանվել Քրիստոսի երկրավոր կյանքի օրինակին: Կոչ է արվում, անձի մարտիրոսութեան գնով, քարոզել Ավետարանը ամեն տեղ: Լինել աղքատ, շփոթել ունեւորութեան, լինել հնազանդ իշխանավորներին:

Վատիկանի երկրորդ ժողովի երկրորդ նստաշրջանի ամենագլխավոր և հիմնական նպատակը արտահայտվեց վեցերորդ գլխում, որի վերնագիրն է «Էկումենիզմի մասին»:

Նախագիծը բաղկացած էր երեք գլուխներից.

1. Կաթոլիկ էկումենիզմի սկզբունքները:
2. Էկումենիզմը գործադրութեան մեջ:
3. Կաթոլիկ Եկեղեցուց բաժանված բրիստոնյաների մասին:

Այս գլխի հիմնական գրութիւնները հետևյալներն էին.

1. Մեկ է Քրիստոս, մեկ է նաև Նրա Եկեղեցին:

2. Այդ մեկ, Մայր Եկեղեցին Կաթոլիկ Եկեղեցին է, մյուսները բաժանվել ու հեռացել են Նրանից, դարձել են «բաժանյալ եղբայրներ», որոնց այժմ Մայր Եկեղեցին կոչ է անում վերադառնալ մայրական Եկեղեցի, վերամիավորվել և կազմել մեկ ամբողջու-

թիւն «Քրիստոսի փոխանորդի և Պատրոսի հաջորդի» քահանայապետութեան ներքո:

Առաջարկվում է եղբայրական սեր միմյանց նկատմամբ: Ամեն ջանք գործադրել՝ յանց նկատմամբ: Համար բրիստոնյաներին բաժանելու համար քրիստոնյաներին բաժանող արգելքներն ու տարբերութիւնները:

Ուստի, ժողովը «հորդորում է բոլոր կաթոլիկներին, որ զգուշանան այն ամեն խոսքերից, դատումներից ու գործերից, որոնք չեն համապատասխանում նոր ոգուն և դժվարացնում են փոխադարձ սիրալիք հարաբերութիւնները»:

Այժմ ընդունվում է, որ աստվածաբանական վարդապետութեան արտահայտման տարրեր ձևերը ոչ թե հակադրվում են միմյանց, այլ՝ լրացնում:

Թե՛ նախագիծը և թե՛ ժողովականները շեշտեցին, որ Վատիկանի ժողովի գլխավոր առաջադրանքը բրիստոնեական եկեղեցիների միութեան վերահաստատումն է, որի համար անհրաժեշտ է դիմել հնարավոր բոլոր զոհողութեանց ու զիջումների:

Հայ Եկեղեցու դիտորդ պատգամավորութիւնը Հռոմում գտնված օրերին արժանանում է ջերմ և սիրալիք ուշադրութեան:

Մեր պատվիրակութիւնը այցելում է նաև Վենետիկ, Ս. Ղազարի Ախիթարյան միաբանութեան և Մուրադ-Ռաֆայելյան վարժարան, տանելու համար Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնութիւնները:





ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, վերջին տարիներում գեղեցիկ սովորություն է դարձել, տարին գեթ մի անգամ, Մայր Աթոռում հրավիրել ներքին թեմերի թեմակալ առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների ժողով, տնտեսական ընթացիկ տարվա առթիվ:

Այս տարի, մարտի 12-ին, չորեքշաբթի օր, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, գումարվում է տարեկան վերահիշյալ համագումարը: Նիստին ներկա են Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ հոգեւոր՝ Ս. Վահան վարդապետ Տերյանը, թեմականներ արժանապատիվ Ս. Սարգիս քահանա Անդրեասյանը, պր. Սուրեն Արեշատյանը, պր. Պարգե Շահբաջյանը, Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանը, թեմականի անդամ արժանապատիվ Ս. Նորայր քահանա Սարգիսյանը, Կիրովականի ծխատեղ արժանապատիվ Ս. Վաղգեն քահանա Գարագյոզյանը, եկեղեցական խորհրդի անդամ պր. Ա. Բոչաջյանը, Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ գերաշնորհ Ս. Պարգե եպիսկոպոս


Գևորգյանը, Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, թեմականի անդամներ պր. Սուրեն Ավչյանը, պր. Գևորգ Դուրգարյանը, Ադրբեջանի հայոց թեմակալ առաջնորդ գերաշնորհ Ս. Հուսիկ եպիսկոպոս Սանթրույանը, թեմականի անդամ պր. Ն. Աթաջանյանը:

Ժողովը բացվում է Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով և «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր» մաղթանքով:

Այնուհետև նորին Ս. Օծոթյունը ողջունում է ներքին թեմերի թեմակալ առաջնորդների, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների ներկայությունը խորհրդակցական սույն ժողովում և հաջողություն է մաղթում ժողովի աշխատանքներին:

Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ պր. Գառնիկ Քեհայանը հանգամանորեն և զուլս առ զուլս ներկայացնում է ժողովին 1963 թվականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ներքին թեմերի բյուջեների կատարողականը և 1964 թվականի նոր բյուջեի նախահաշիվը:

Ցուրաքանչյուր թեմի 1963 թվականի բյուջեի կատարողականի և 1964 թվականի նոր բյուջեի նախահաշիվի շուրջ սկսվում է մտքերի փոխանակություն:



Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանության և երբին թեմերի թեմականների ու ներկայացուցիչների հետ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գլուխ առ գլուխ քննում է թեմերի 1963 թվականի կատարողականը, արձանագրելով իր գոհունակությունը:

Սույն ժողովում հաստատվում է նաև ներկայացված 1964 թվականի նոր բյուջեն, որոշ փոփոխություններով:

Ներքին թեմերի թեմականների և թեմական ու եկեղեցական խորհուրդների միացյալ նիստը իր աշխատանքներն ավարտում է գիշերվա ժամը 8-ին:

Ժողովի փախումը կատարում է Վեհափառ Հայրապետը, իր գոհունակությունն և օրհնությունը հայտնելով թեմերում կատարված վարչական-տնտեսական կազմակերպված աշխատանքների համար:

Ժամը 9-ին, Նորին Ս. Օծությունը բարեհաճում է իրեն սեղանակից դարձնել բոլոր թեմական առաջնորդներին, թեմական և եկե-


ղեցական խորհուրդների և Մայր Աթոռի միաբանության անդամներին:

Սեղանների շուրջ ստեղծվում է վանական ջերմ մթնոլորտ: Բաժակներ են առաջարկվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաստատության և Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արեւատության:

Ելույթներ են ունենում գերաշնորհ Տ. Հայկազուն, Տ. Կոմիտաս, Տ. Պարգև, Տ. Մաշտոց, Տ. Հուսիկ սրբազանները, հոգեշնորհ Տ. Վահան վարդապետը, արժանապատիվ Տ. Սարգիս, Տ. Վաղգեն քահանա հայրերը, թեմականի անդամներ պր. Ս. Արեւատյանը, պր. Ս. Ավչյանը, պր. Պ. Շահբաղյանը և ուրիշներ:

Ընդունելությունը վերջանում է գիշերվա ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի՝ Մայր Աթոռի պալատության, Մայր Հայրենիքի բարօրության համար կատարած բարեմաղթություններով և օրհնություններով:





Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ արվեստի
վաստակավոր գործիչ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

(Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հայ ժողովուրդը նշում է իր բաղմամբ տակ զավակների հարուստ համաստեղության լավագույն ներկայացուցիչներից մեկի, հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր, արգասավոր գիտնական ու մեծ հայրենասեր, ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 100-ամյակը:

Թորոս Հարությունի Թորամանյանը ծնվել է 1864 թվականին Շապին-Գարահիսարում (Թուրքիա), հողագործի ընտանիքում: Դեռևս մանուկ հասակում զբաղվելով ծնողներից, իր բարեկամների օգնությամբ նրան հաջողվում է միջնակարգ, ապա և բարձրագույն կրթություն ստանալ (1893 թվականին ավարտում է Պոլսի Վեդարվեստից ակադեմիայի ճարտարապետական բաժինը): Թ. Թորամանյանի ստեղծագործական գործունեությունը, որպես ճարտարապետ-նախագծողի, ընթանում է սկզբում Պոլսում, իսկ այնուհետև Բուլղարիայում, որտեղ մինչև 1900 թվականն աշխատելով մի քանի քաղաքներում, նախագծում ու կառուցում է մենատներ:



Սակայն իր իսկական կոչման գիտակցումը թելադրում է թողնել այդ գործը և նվիրվել հետազոտական աշխատանքի: Գիտելիքները հարստացնելու համար նա ուղևորվում է Եգիպտոս, ապա՝ Փարիզ, ունկնդրում ակադեմիկոս մասնագետների դասախոսությունները՝ արվեստի և ճարտարապետության պատմության վերաբերյալ:

1903 թվականին Թ. Թորամանյանը, հետազոտություններ կատարելու համար, բանասեր Կ. Բասմաճյանի հետ Փարիզից Հայաստան է գալիս: Հայրենի երկիրը դուրսում է նրան իր բազմաթիվ ու հոյակապ ճարտարապետական հուշարձաններով: Նա ուխտում է մնալ այստեղ և իր կյանքը նվիրել հարազատ ժողովրդի ճարտարապետական հարուստ ժառանգության ուսումնասիրման գործին:

Նյութական ու բարոյական աջակցությունից համարյա զուրկ, մշտական կարիքի մեջ է ընթանում Թ. Թորամանյանի հայրենանվեր աշխատանքը: Արհամարհելով իր ճանապարհին հենց առաջին պահից կանգնած դժվարությունները, նա 30 երկար ու ձիգ տարիներ է ընթացրում կատարեց իսկական գիտական սխրանք:

Սկսնակ հետազոտողի համար գիտական մկրտություն հանդիսացավ հայ ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից մեկի՝ Զվարթնոցի տաճարի պեղմանը մասնակցելը: Տաճարի մնացորդների չափազորությունը, բացված ամրոցը կոմպլեքսի գլխավոր հատակագծի կազմումը զուգակցվեցին պահպանված բեկորների խորագին ուսումնասիրությամբ, որը և Թ. Թորամանյանին հնարավորություն տվեց ձեռնամուխ լինելու տաճարի առանձին զրկագների, իսկ հետո նաև՝ ամրոցը տաճարի նախնական ձևերի վերակազմության նախագծի մշակմանը: Հարկավոր էր ունենալ խորաթափանց միտք, ճշմարիտ կռահման ունակություն՝ պահպանված ավերակների շնչին տվյալներով զոգարի վրա վերստեղծելու տաճարի երբեմնի հոյակապ ձևերը:

1905—1909 թ. թ. ընթացքում Ն. Մուրի դեկավարությամբ գործող Անիի հնագիտական արշավախմբի կազմում Թ. Թորամանյանը նկարում, չափազորում ու լուսանկարում էր

Բաղրատունյաց մայրաքաղաքի աշխարհիկ ու եկեղեցական շենքերը, մշակում դրանցից մի քանիսի վերակազմության նախագծերը, վերադարձվում առանձին հուշարձանների վերանորոգմամբ: Ինչպես շատ հայագետների, այնպես էլ Թ. Թորամանյանի համար Անին գիտական մի կատարյալ դպրոց հանդիսացավ:

Անիում աշխատելու տարիներին և հետո Թ. Թորամանյանը գրեց և պարբերական մամուլում ու առանձին գրքերով հրատարակեց մեծ քանակությամբ թղթակցություններ, ուսումնասիրություններ: Դրանցից գիտական առավել հետաքրքրություն են ներկայացնում «Էջմիածնի տաճարը» (որն, ի դեպ, Թ. Թորամանյանի միակ աշխատությունն է, որ լույս է տեսել նաև ուսեքեն՝ Ն. Մուրի թարգմանությամբ), «Անի քաղաք, թե ամրոց», «Հայաստանի արքունական և իշխանական պալատներն ու անոնց ներքին կենցաղը» աշխատությունները և այլն: Դրանց զուլի-գործոցը, անտարակույս, «Տեկորի - տաճարը» մենագրությունն է, որտեղ Թ. Թորամանյանը չբավարարվելով տաճարի մանրագին ուսումնասիրությամբ, կատարում է նաև լայն ընդհանրացումներ հայկական ճարտարապետության առանձնահատկությունների վերաբերյալ: Հենց լայն ընդհանրացումների կատարելու անհրաժեշտություն է թելադրում նրան չսահմանափակվել Անիի քաղաքապարիսպներով ներփակված տարածությամբ և հետազոտության համար ներգրավել բազմաթիվ նոր հուշարձաններ՝ Խծկունքն ու Արգինան, Երերույքն ու Մրենը, ապա դուրս գալ Շիրակի բարձրավանդակը, անցնել Արագած լեռան բոլոր փեշերով (այժմյան Ադինի, Արթիկի, Թալինի և Աշտարակի շրջանները) և Արարատյան դաշտն ու նրա մերձակա մասերը:

Տարբեր ժամանակների ու բազմաբնույթ հուշարձանների ուսումնասիրության կոմպլեքսային մեթոդը թույլ տվեց Թ. Թորամանյանին կազմել հայ ճարտարապետության կազմավորման ու զարգացման պրոցեսի, ինչպես և նրա առանձին փուլերի հատկանիշների ամրոցական պատկերը, ստեղծել նրա ընդհանուր պատմական զարգացման տեսությունը:

իր հիմնական դրույթներով Թ. Թորաման-
յանը համարձակ կերպով հերքեց հայկական
ճարտարապետության ինքնուրույնությունը
չճանաչելու այն տեսակետները, որոնք տեղ
էին գտել արվեստների ու ճարտարապետու-
թյան պատմության եվրոպական մի շարք
աշխատավոր հետազոտողների (Շ. Տեքսիե, Օ.
Շուալի, Շ. Դիլ և այլն) աշխատություննե-
րում ու ցույց տվեց իր շինարար ժողովրդի
մեծ ավանդը ճարտարապետության համաշ-
խարհային գանձարանում:

Հայաստանում սովետական կարգերի հաս-
տատումից հետո հայրենասեր գիտնականի
համար ստեղծվում են բարենպաստ պայ-
մաններ: Նա հանդիսացավ հնությունների
պահպանության կոմիտեի կազմակերպիչնե-
րից մեկը, ստեղծեց պատմական թանգարա-
նի ճարտարապետության բաժին, մասնակե-
ցեց հնագիտական արշավներին, աշխատակե-
ցեց արվեստի և գիտության ինստիտուտին և
այլն:

Այդ տարիներին, մինչև իր մահը (1934 թ.)
նա անդուլ զբաղվում էր գիտական հետազո-
տությունների արդյունքների մշակմամբ, հայ
ճարտարապետության վերաբերյալ պատրաս-

տելով մի սովորածավալ մենագրություն,
որն այդպես էլ թերավարտ մնաց:


Մահվանից տարիներ հետո լույս տեսավ
նրա «Նյութեր հայ ճարտարապետության
պատմության» երկհատոր աշխատանքը, որը
հայ ժողովրդի բազմադարյան ճարտարապե-
տական-շինարարական ժառանգության մի
հանրագիտարան է:

Հայ ժողովրդի ճարտարապետական հա-
րուստ ժառանգության պրոբլեմների ուսում-
նասիրության ու լայն պրոպագանդման հա-
մար, իհարկե, բավական չէր մեկ կյանք,
թեև ինքը և այնպիսի արդասավոր մարդու, որ-
պիսին, անտարակույս, հանդիսանում էր Թ.
Թորամանյանը: Դրա համար կպահանջվի
դեռ շատ գիտնականների քրտնաջան աշխա-
տանք:

Բայց այն, ինչի միայնակ հասավ մեծ
գիտնականը նախասովետական տարիների
բացառիկ անբարենապաստ պայմաններում,
իրոք կարող է միայն հիացմունք պատճառել
և խոր երախտագիտություն լցնել մեր սրտե-
րը նրա պայծառ հիշատակի նկատմամբ:

26 մարտի 1964 թ.





Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

22. «ՀՈԳԵՎՈՐ ՏԵՐԸ»

Հայ եկեղեցին կաթողիկոս մը հողը դրավ Պոլսո մեջ: Հակոբ Դ Զուղայեցին, աչքերը փակած 1680 օգոստոս 2-ին սուլթաններու մայրաքաղաքին մեջ, թաղվեցավ Բանկալթիի հայոց գերեզմանատունը:

Ուրիշ կաթողիկոսներ ալ իրենց Աթոռն հետու փակած են իրենց աչքերը և օտար հողը մտած: Բայց հայ ժողովուրդը ոչ իսկ կհիշե անոնց մահն ու գերեզմանը: Բանասերներն է միայն, որ անոնց գերեզմանով կգրադին:

Հակոբ Զուղայեցին հավերժացած է հայ ժողովուրդի սրտին մեջ, իբրև խորհուրդ և իբրև խորհրդանշան: Ան անգամ մըն ալ եկեր է Պոլիս, երկու տասնյակ տարիներ առաջ, 1664-ին: Այն ժամանակ սուլթաններուն մայրաքաղաքը կուգար իր Աթոռին հոգերուն համար, հարթելու համար վեճեր և կնճիռներու առաջքը առնելու համար: Բայց այդ ճիգերուն համար չէր որ ան պիտի ապրեր: Այդ ճիգերը, ընդհակառակը, հայ ժողովուրդին պիտի հիշեցնեին շրջանը այն դժվար պայքարներուն, զորս հայ հոգեւոր պետեր մղեր էին իրարու դեմ անհաշտ ոտոխներու պես, և որոնց մեջ կողմերին մեկը Հակոբ Զուղայեցին էր եղեր, ավա՜ղ:

Այս անգամ ալ ան Պոլիս կուգար՝ երթալ Եվրոպային պատմելու համար հայոց ցավերը ու ճար մուրալու համար: Արդարև, 1679 դեկտեմբերին Զուղայեցին Պոլիս կհասնե, բայց աչքերը կփակեր հայոց ցավերուն դարման չգտած: Դառն էր եղեր իր ամբողջ կյանքը, ինչպես բովանդակ հայ ժողովուրդինը: Ցնորքներով օրորվեր էր ան՝ հայ ժողովուրդին պես: Օրհասականի անկողինն մեջ անգամ զինք վրդովեր էին այդ ցնորքները: Բայց ան այս աշխարհէն կմեկնե խռով, որովհետև չէր կրցեր սփոփանք ապահովել իր հոտին:

Ջաքարիա անուն հայ ճարտարապետ մը շիրիմ մը կկանգնե անոր գերեզմանին իբր պատսպարան և անոր վրա ալ քանդակել կուտար:

Հանգստաբանս այս հրաշափառ և

պատուելի

Վայելչադիր յօրինաւածովք ի հանդիսի,

Ունի աւանդ գմաճուր մարմին

բազմեւջանկի

Տեառն Յակոբայ Հայոց ընտրեալ

Հայրապետի

Որ փոխանորդ Հօր մերոյ Սրբոյ

Լուսաւորչի

Կարողիկոս օծեալ նորին օրհնեալ գանի:

Եւ արդ տապանս բուծիչ ախից

մարմնականի

Յուսով ի սա դիմեցելոց հրաշիւք յայտնի:

Զկազմող սորին յիշել ի Տէր զարմիւք

հայցի

* Ետունակված «էջմիածին» ամսագրի 1962 թվականի N N Թ-ից, ԺԲ-ից, 1963 թվականի N N Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-Ժ-ից, ԺԱ-ից, ԺԲ-ից և 1964 թվականի N Ա-ից:

ԶԶաբարիայն որ ի խալիֆայ եհուսականի,
Հազար հարիւր քան և ինն Հայոց թրվի,
Երկրորդ ամուր ամսոյն Հոռոմոց օգնատուսի:

Բանկալթիի հայոց գերեզմանատան ճիշտ մեջտեղը, Հակոբ Զոտայեցիի այդ գերեզմանը ամբողջ երեք դար սրբատեղի և ուխտավայր մնաց Պոլսո հայ ժողովուրդին համար: Հայ ժողովուրդը երեք դար ուխտի վազեց անոր, ինչպես պիտի երթար սուրբի մը աճյուններուն: Սո՛ւրբ, Զփոքրացնենք նվիրական բառերը: Սովորական իմաստով սուրբ մը չկար անոր մեջ: Երբունի մըն էր միայն ան, որ իր ժողովուրդին սիրուն նվաստութիւն ալ կրեց: Փոխարեն՝ կտակ մը թաղված էր հողեղին մարդուն հետ մեկտեղ: Այդ կտակին էր որ ուխտի կուգար հայ ժողովուրդը:

«Ժողովուրդը, որ ստեպ յուր հարգանքը կըլռէ,—կըսէ Օրմանյան,—ոչ այնչափ բարձր միտքերու տեսութիւններով, որչափ զգալի բարութեան ու առաքինութեան, պարկեշտութեան ու բարեպաշտութեան պարագաններով, ամենեն զորավոր վկայութիւնը տված է յուր հայրապետին, անոր գերեզմանը իբրեւ ուխտատեղի ճանչնալով մահվան առաջին օրերէն սկսելով և անկեալ տեղանքով և ընդունելով երկնային շնորհաց պարգեւներ: Քանքեցին կվկայեն, թէ Հակոբի գերեզմանը առէ՛ւ սփանշիս ի բոշկութիւնս և որովհետեւ երկուշարթի եղած է թաղման օրը, յամենայն երկուշարթի առնեն պատարագ քանանայն Ղալաքու, և գնան ի գերեզմանն հայրապետին, զի ժողովուրդք գան յուխտ և օրհնեն գերեզմանն և տան խաչնամբոյր: Եվ կհավելու, թէ և ես գնացի անդ և ետու պատարագ առնել⁵⁰⁶: Այդ առթիւ կպատմեն, թէ նշանավոր տաճիկ մը, իշխան մեծ առաջի վագրին, Փիր Յաղուպի, այսինքն Հակոբ կաթողիկոսի հրաշքով անդամաբոկոսութենէ բժշկվելով, անոր գերեզմանին ծառայութիւն կըներ»⁵⁰⁷:

Ու զրուցները դարեւ դար անցան, հրաշքները պատմվեցան սերունդի սերունդ, ու մինչև մեր օրերուն ուխտավայր պահեցին այդ գերեզմանը:

«Մեծ ուխտատեղի է կաթողիկոսին դամբարանը,—կըրէ մեզի ժամանակակից հայ բանասերը,—ուր ամեն շաբաթ օր ամենակերպ ուխտավորներ կղիմեն իրենց բուժումը հայեցելու: «Նօգաւոր Տէր» անունով ճանչցւած է այն և կավանդվի, թէ հին օրերու մեջ գիշեր մը անոր վրա եղած է ճառագայթագեղ լույս, զոր մոտակա թուրք զինվորատնէն նշմարած են ու անոր գլխին վերեւ բերած կախած են լապտեր մը: Մինչև վերջին ժամա-

նակներս կվառեն զայն ամեն գիշեր յուրն ալ իրենցմէ ըլլալու պայմանով»⁵⁰⁸:

Արդարեւ, հայուն հետ մեկտեղ թուրքն ալ կհավատար, թէ սուրբ մը կար թաղված այդ գերեզմանին մեջ, որ կպատուհասեր իր քունը խանգարող սրբապղծները: Այսպես հավատացեր էին փաշաներն ու սուլթանները ու կես ձգեր էին իրենց փորձերը գերեզմաննոցը հայն խելու: Համիդ, որ ցեղեր կփողոտներ, այդ գերեզմանն ինքն ալ կվախնար: Չգալով գերեզմաննոցին ու թողուց, որ խաղաղ քնանա Հոգեւոր Տէրը քանի մը տասնյակ տարի իր գերեզմանին մեջ:

Ինչե՛ր տեսան Հոգեւոր Տիրոջ աճյունները իրենց գերեզմանին մեջ մեր օրերուն ալ: Տեսան թուրքին շատ մը փորձերը գերեզմաննոցը հափշտակելու, բայց և պոռթկումը հայ ժողովուրդին, որ մեկ գիշերվան մեջ մատուռ մը կանգնեց գերեզմաննոցին կողքին, որպեսզի ամբարիշտները մեռնին իրենց դաշնուհի մարմարակիւն: Տեսան շաբաթ շաբաթ ուխտի թափոնները, որ կմտնէին ժամին խոնկ ու աղոթք բերելու համար իրենց, ու հայ մանուկները, զորս դպրոցներ կբերէին ամեն մայիսի՝ թարմանալու համար իրենց շուրջի խոտերուն վրա: Տեսան, թէ ինչպես երիտասարդ թուրքերը, Համիդի ձեռքն խելի հետո լուծը, փորձեցին կտրել գերեզմաննոցը ու հայր հանկարծ, բռնկած, բոլոր թաղերն հոն լեցվեցաւ գիշերը, կրկին հյուսելու համար թուրք բռնավորներուն ցերեկը փլցուցած պատը: Տեսան, թէ ինչպես զինադադարին, Պոլսը զրավել և ազգերուն ազատութիւն շնորհելի հետո, եվրոպացիք իրենք փորձեցին այս անգամ գերեզմանները պղծել՝ պողոտա անցնելու համար հայոց գերեզմաննոցին մեջն:

Հոգեւոր Տիրոջ հեք աճյունները հասկցա՞ն արդյոք, թէ նվիրական մեր մասունքները մեզմէ խելու փորձեր հաճախ Հոռոմն ալ ըրաւ, թէ իր գործակալները փորձեցին ապացուցանել, որ հայ կաթողիկոսներուն է եղած այդ գերեզմաննոցը, թէ դավանական մոլուցքը, որ երբեմն գիտնական կարծված ուղեղներն անգամ կգայթակղեցնէ, տարիներով թուրթ ու մեկան սպառել տվաւ անոնց, որպեսզի փաստեն, որ կաթողիկ եղած են Բերայի հին հայերը և հետեաբար Բանկալթիի այդ գերեզմաննոցը իրենցն է: Այդ աճյունները լեցին՝ արդյոք, թէ անոնք փորձը ինչ հայ ժողովուրդն խելու իր Հոգեւոր Տէրը, և հիմնված այն զիջումներուն վրա, զորս ան պատրաստ եղած էր ընելու իր ժողովուրդի ցավերուն սիրուն, և մուրհակի մը վրա, զոր կորզեր էին դողաճար մատնեբն օրհա-

⁵⁰⁶ Զաբարիա սարկապազի «Պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 91:

⁵⁰⁷ «Ազգապատմութիւն», Բ, էջ 2619:

⁵⁰⁸ Դուլտ. Վ. Հ. Թարգման, «Երեմիա Չելեպիի Քեօ-միւրճան, Ստամբուլ պատմութիւն», Բ, Վիեննա, 1932, էջ 603:

սակաւնի մը, տեղը կուգին դառնալ անոր գե-
րեզմանին ալ և անկէ բխող հրաշքներուն...
Գիտէ՞ն արդո՞ք այդ աշխուհիները, թէ հայ
կաթողիկէ պատմագիրը հազիվ թէ կը արեւմտի
իրենց հրաշքներէն մասնիկ մը շնորհ ընել
հերձմանով հայերուն ալ, թույլ տալով, որ
անոնք ևս սփոփանք խնդրելու զան իրենց
վիշտներուն համար:

Այս մեծարո շիրիմը, — ըսած է այդ պատ-
մագիրը, — որուն բոլորտիքը երկաթի վան-
դակ մը կպատէ և մեղտեղը մշտապէս կան-
թեղ կախված է, դեռ Կոստանդնուպոլիս հա-
յոց գերեզմանատան մէջ հարգութեան և
պաշտան կրնդունի իր ազգակիցներէն, որոնք
թեպետեալ այսօրվան օրս դժբախտաբար նույն
երանաշնորհ կաթողիկոսին կաթողիկէ հոռ-
մեական հովատքէն դեռ հեռացաւ օտար են,
այստեմենայնիվ իրենց անձկութեանց և
վշտաց մէջ անոր օգնութեանն ու բարեխոսու-
թեանն դիմելով, իրավցընէ կաթողիկէ ճշմար-
տութեան հաղթանակը կը արձագանգեն»²⁰⁹:

Ըսեք բոլոր այդ հոգովով աղքատներուն, թէ
այդ գերեզմաննոցը հողի կույտ մըն է ինք-
նին, զոր օր մը մարդիկ կրնան ետ խլել հա-
յնէն, թէ իրավ ալ թուրքը վերջ ի վերջ զայն
մեզմէն խլեց, որովհետեւ նոր օրերու մէջ այլևս
անոր հողը չէին ոչ ոսկորները, որոնք կընա-
նային հողին տակ, ոչ ալ մատուռը, որ
կհակեր քիչ մը անդին, և հետեալաբար հարթե-
ցին գերեզմաննոցը ու վրան թաղ մը շինեցին,
ձեզ ալ տանիլ թաղելով Ս. Նորդոգութեան
բակը, այնպէս որ հիմա ոչ Բանկալթիի եր-
բմանի գերեզմաննոցը կա, ոչ ալ Հոգեւոր Տի-
րոջ դամբարանը:

Ըսեք վերջապէս անոնց, թէ բան մը կա
սակայն, զոր ոչ որ պիտի կարենա խլել, թէ
ոչ Սենի ափերէն Արևելք խուժող կեղծ աս-
պետները, որոնք դաշունահարեցին հայ ե-
րազները իրենց կոնսակէն, ոչ Ալպիները, որ
հայ տեսիլները օրորեց իր եննգ օրորներով՝
դահիճը առանձին ձգելու համար հետո իր հեք
դոհին հետ, ոչ հեռավոր մարդասերները,
որոնք ճիւղաղը աղատ թողուցին, որպէսզի
ան իր դոհը խողխողէ ու հետո դացին անոր
դիակն ամբըն՝ սուտ արցունքը աչքերնուն, ոչ
Աստուծո անունով հայ ժողովուրդի խիղճը
շարշարող եղկիկները, որոնք հայ դատը
խոշտանդեցին արքայութեան մէջ սփոփանք
խոստանալով հայ մարտիրոսագրութեան, և
որոնք Բարբարոս անպարտ արձակեցին, որ-
պէսզի Քրիստոսը խաչէն, պիտի չկրնան այդ
բանը խլել հայէն:

Արդարեւ, ծերունի կաթողիկոսի մը աճյու-
նին մնացորդներն էր, որ հողին տակէն հա-
նեցին՝ պատուարելու համար հայ եկեղեցւոյ

²⁰⁹ Հ. Ալեկսանդր Պալման, «Պատմութեան կաթողիկէ
վարդապետութեան ի Հայոց», էջ 165:

մը հովանիին տակ: Հոգեւոր Տիր միշտ պիտի
մնա իր տեղը՝ հայ ժողովուրդի սրտին մէջ:
Հոգեւոր Տիրոջ գերեզմանին մէջ հայ ժողո-
վուրդը իր դատն էր, որ պահպանած էր:

23. ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԸ ԿՐԵՆԵՔ ԴԱԳԱՂ

Հիմա, որ պատմութեան կհանձնենք նաև
այս դարը, շենք կընար անգամ մը ևս շանդ-
ալ տալու տագնապահներուն, զորս ապրեցաւ
և հոգեւոր, զորս ան իր հաջորդներուն թո-
ղոց:

Տագնապահներ, որոնց մեջէն անցաւ ան,
հետեանք էին առաջին հերթին իր զույգ լու-
ծերուն հայ հայրենիքը ճնշող ու ճզմող
հարկան երկու բռնապետութեանց տակ:
Հարստահարված ու հալածված, ան ապավին
շունեցաւ իր կսկիծներուն մէջ: Քարուքանդ
եղաւ քանիցս Հայոց աշխարհը այս դարուն
ու սովն ու երաշտը, հարկերն ու հուսահա-
տութիւնը բազմիցս տարտղնեցին հայ օջախ-
ները:

Հայ եկեղեցին ևս տագնապով սկսաւ ու
տագնապով փակեց այս դարը: Եղան հոգեւոր
պետեր, որոնք Աթոռը իրարմէն հափշտակելու
համար, զիջանեցին ամեն ստորութեան, և
ուրիշներ, որոնք փորձեցին վաճառքի հանել
Հայ եկեղեցւոյ ավանդութիւնները: Հայ եկե-
ղեցին դարը կիսակէ հոգեքը ուսին:

Դարը գործախտ ժառանգութեան մը ևս ձգեց
իր ետին: Մարդոսական փորձերը, որոնք
ամբողջ դար մը տագնապահներով ողողներ էին
հայ կյանքը, և մանաւանդ Պոլիսը, դարուն
վերջերուն հասունցուցեր էին զարհուրելի
պալար մը, որ չէր կրնար չպայթիլ շուտով:
Կաթողիկ պրոպագանդը, որ ի սկզբան քաղց-
րութեամբ փորձեր էր դանդաղեցնում ծոցը
թափանցել, հիմա արդեն մտած էր դաշնակա
և բռնութեանց շրջանը: Ծեղք բացած արդեն
հայութեան ներսը՝ եղբայրը կարեր եղբորը
զեմ, դավալը՝ հօրը, ու կսպանար Պոլսո հայ
տարեգրութեանց մէջ դժնդակ նոր էջ մը բա-
նալ:

Ընթերցողներս չեն կրնար հուզումով հետե-
ված չըլլալ Հայ եկեղեցին քանդելու համար
Հոռմի կատարած փորձերուն, ինչպէս որ այս
տողերը գրողը չէր կրնար առանց դառնութեան
բերել պատմութեանը՝ այդ փորձերը պատ-
մելու համար իր կարգին իր ընթերցողներուն:
Մարդ որքան ալ ուղե վերեն նայիլ դավանա-
կան հարցերու վրա և իրենց էութեան մէջ
ծիծաղելի գտնէ անոնց անունով մղված պայ-
քարները, չի կրնար ցատումով շեղվիլ, երբոր
կտեսնէ, որ այդ պայքարները մղված են հա-
ճախ հայ ժողովուրդը ներսեն ճեղքելու հա-
մար: Եվ որքան ալ զմայլանքով խոնարհի
մարդ մեծ անուններու առջև, որոնք պատկա-
նած չեն Հայ եկեղեցւոյ, և սակայն հայ ժո-

դովորդի պատմության մեջ տիտաններու նման կցցվին, և որքան ալ հարգանք ունենա մարդ այն աղնիւլ զեմքերուն հանդեպ, որոնք կաթուղիկ Եկեղեցւոյ ծոցին մեջ իսկ հայր երբեք չխամբեցուցին իրենց ներքը և անոր ի սպաս գրին իրենց միտքն ու ձիգերը, չի կրնար պաղարշուն մնալ հողերուն առջև, որ հայ ժողովուրդին բերալ կաթուղիկ բարոգութիւնը փոթորիկներով լեցուն այս դարուն, ինչպես որ պաղարշուն պիտի չլինա մնալ և վաղը, երբ այդ բարոգութիւնը դավանական վեճերու կերպարանք առնէ և հայ ժողովուրդը պատակտե ներսնէ: Ժիշտ է, հայ ժողովուրդը ամուր կուլաններ ունի այսօր դիմադրալիլու համար փորձութիւններուն և Հայ Եկեղեցին մինակը չէ այլևս փոթորիկներուն դիմացնելու համար հայ ժողովուրդը, բայց ներքի չէ սպունդ բաշել տխուր էջերուն վրա, դուրս մեր պատմութիւնը կրեք մեզի, և անգոսնել դասերը, դուրս անոնք մեզ կուտան:

Եվ սակայն, տաղանայներով լեցուն այս դարը երկունքի դար մը պիտի բերեր նույնպես ետեան: Հակառակ ճգնաժամներուն, որ հայ ժողովուրդին պարզեք էր անցնող հարյուրամյակը, ճիգեր ալ ըրեր էր սակայն՝ լուսի կետեր դրոշմելու համար անփառունակ այդ խաւարին մեջ: Միակ սփոփանքն է, որ այդ զոքարալ դարը կուտա իր էջերը պրպտողին, թեև շատ դուլդն է այդ սփոփանքը բաղդատմամբ այն իսկիծներուն, որոնք նույն այդ էջերեն կ'ոսին:

Կրթական գործը, օրինակ, նույն այս դարուն է, որ զարկ սկսած էր նտանալ Պոլսո մեջ: Անշուշտ այդ դարեն առաջ ալ մայրաքաղաքին մեջ կային կրթարաններ: Եթե հիմնովելու ըլլանք վիպաութեան մը վրա, զոր կ'գտնենք Ամիրդովլաթ բժշկապետին կողմէ 1480-ին Մարտիրոս արեղայի գրել տրված Սաղմոսի մը հիշատակարանին մեջ, այդ թվականին «ի դուռն Չարխափան Ս. Աստուածածնի» պետք է գոյութիւն ունեցած ըլլա կրթարան մը, ուր կուսուցանէին Մատթեոս Սեբաստացի և Աբրահամ Տրապիզոնցի վարդապետները և ուր կուսանէր ինքը գրիչն ալ, Ղազար անուն ուրիշ արեղայի մը հետ մեկտեղ:

Պոլսո մեջ հայ դպրոցի մը մասին առաջին հիշատակութիւնն է սա, իսկ դպրոց ըսելով պետք է անշուշտ հասկնալ այն կրթութիւնը, որ կավանդէր եկեղեցիներու համեստ մեկ խուցը, և որ միշտ այնտեղ ավանդվեցալ զեռ բանի մը դար:

Պոլսո մեջ հայ դպրոցի մը ուղղակի հիշատակութիւնը կ'գտնենք հազիւ Ժէ դարուն սկիզբը: Ժամանակակից հիշատակարանի մը մեջ կ'ըսվի արդարեւ. «ի թուին ՌՄԲ (1603) էին երեք վարդապետք ի Ստամպոլ քաղաքի. 3ակոր բարունապետն Զէյթունցին որ դաս

կու հրամէր զԱետարանն Մատթեոսական. և Մաղաքիա վարդապետն Բոխաթեցի դաս կ'ասէր զԱրարածքն, և Զաքարիա վ. Վանեցին ասէր զԲարոգութիւն մեկնիչ. և էր Ստամպոլ քաղաք իբրեւ զերկինս և կամ զԺամանակն Կոստանդինուսի և զԹարգմանչացն»:

Պիտի չուզենք փորձիլ Պոլսո հայ դպրոցներուն շարքն անցնելու այն կրթարանը, զոր Կղեմն Գալանոս միսիոնարը 1641-ին բացալ Ղալաթիո կողմը բացառապես հայ մանուկներուն համար, որոնց հավանաբար, կաթուղիկ սկզբունքներու հետ մեկտեղ, զանազան գիտելիքներ ալ կուսուցանէր անոնց իսկ լեզվով և որոնցմէ հասունցան իսկական ձեռնասուններ ալ վաստակելու համար իրենց կարգին նաև ուրիշները:

Չենք տարակուսիր, որ իրենց խուցերուն մեջ հայ մանուկներու ուսում կուտային Ժէ դարուն Պոլսո մեջ գոյութիւն ունեցող վեց հայ եկեղեցիները, և որ հետեւաբար Քումբափուի, Սամաթիո, Հիսարդիբի, Չինիլի համամի, Պալաթի և Ղալաթիո թաղերուն մեջ կային մանրակար հայ դպրոցներ: Չեռագիրները, որոնք այդ եկեղեցիներու խուցերուն մեջ գրվեցան, ապացուց են, որ հայ տաղը կուսուցվէր անոնց մեջ:

Գարուն կեսերուն, հայերը դպրոցի շէնք մը կ'ունենան Չինիլի-համամ թաղին մեջ և սակայն շուտով դայն կ'կորսնցնեն տխուր պարզաներու տակ: 1652-ին այրեր էր նույն թաղի Ս. Սարգիս եկեղեցին և վերաշինվէր Աբրո Չեքիբի առատածնութեամբ: Աբրո մեկնած էր արդեն Մոռա կղզին, երբ լուր կ'առնէ, թէ թուրքերը կուզեն եկեղեցին քանդել, առարկելով, թէ առանց պետական հրամանի է շինված: Իսկույն լուր կ'փութացնէ Պոլիս Երեմիա Չեքիբին, որպեսզի աճապարի բանդէլ տալ եկեղեցիին երեք խորանները և պատ հյուսիս տալով անոնց առջև, դպրոցի վերածն ժամը: Երեմիա Աբրոյի պատվերը կ'կատարէ իսկույն և եկեղեցին կ'վերածվի այսպես դպրոցի: Օրվան պատրիարքը՝ Ղազար, որուն ծանոթ են արդեն մեր ընթերցողները ալլապես տխուր իր մյուս արարքներն, թուրքերուն մատնանիչ կընէ եղելութիւնը և անոնք, բնական է, կ'վրցնեն դպրոցը⁵¹⁰:

«Վիպասանութիւն յԱպրո Չէլպի» վերնագրով իր տաղերգութեան մեջ Երեմիա Չեքիբի կ'պատմէ, թէ ինչպես Ս. Սարգիս եկեղեցին վերածվեցալ դպրոցի:

Թէ գիտաբերն սրբութեան մեր յօրինեալ Որմով գերեւորն պանարան իբրու ծածկեալ և լզլառեանն մինչ ի դուռնս ի բաց քողեալ

510 «Բաղմավեպ», 1925, էջ 260.

Հիսսիս հարաւ բարձր ի յերկրէ բազմոց
շինեալ.
Ամս ինչ դպրոց ժողովրդեան իր գայն
ցուցեալ:

Իր հետագա տողերով ալ Երեմիա կպատ-
մե, թե ինչպէս Ղազար պատրիարք մատնեց
ու շնչել տվաւ հայ դպրոցը.

Ղազար հարիւր և մետասան քվական
հասեալ (1662).

Յարում ամի գործիս եղեալ գոր հանցեալ.
Վէզիրալէմն ընդ աւալիս անգրադարձեալ,
Յատուր Զատիկ կիրակի յայսր մըտեալ,
Նոր կիրակէ երկուշաբթին յոյժ ժամանեալ,
Մարդ առաքեալ գեկեղեցեաց գորունսն
կեմեալ.

Ան և բեկումն ըզմեմ պատեալ խաւար
ծածկեալ.

Մէջ մատախուղ վարանք բախմանք գմեզ
պաշարեալ.

Յուդայ եղբայր Ղազար անունն որ պատրիկ
լեալ,

Յայնքմ վայրի գմատնութեան ժամըն
գրեալ...⁵¹¹:

Կհետեւին անեծք ու լուտանք շարաշուք
հոգեւորականին հասցեին:

Հովանարար այս դեպքին կակնարկեն այն
բանի մը տողերը, զորս կգրեն Երեմիա մեզ
պտտցուցած ժամանակ Պոլսոյ թաղերը.

Մեզ ոչ մէտընէլք պիտոյմք՝
Բանգի մերս որ խափանեցան.

Յաւ է մեզ գալոյ յիտեմք՝
անգլուսն ազգ մերս՝ անկրկան⁵¹²:

Տաղանայի նույն դարուն է, որ Պոլսոյ մեջ
կընդօրինակվին բանի մը տասնյակ հայերեն
ձեռագիրներ, ճիշտ այն վեց եկեղեցիներու
խուցին մեջ, որոնց շուրջ համախմբված էին
վեց «քեմամաթ»-ները ու կհրահրէին Պոլսոյ
հայ կյանքը խոռովող վեճերը:

Սույն վեց եկեղեցիներու մեջ գրված կամ
ընդօրինակված ձեռագիրներն հազիւ բա-
ռասունի չափ հասած են մեզի, բայց այդ
թիւին իսկ բավ է ցույց տալու, որ հայ միտքը
կփորձեր միշտ շխամբիլ հակառակ գինք
շրջապատող դաժան պայմաններուն, և իր
շուրջի աղմուկին:

Մեզ հասած ձեռագիրներու գրիչներուն մեջ
բացառապէս կփայլին երկու անուններ՝
ակնցի Հակոբ դպիրը և Պալաթու Արիստակէս
բահանան, որոնք դարուն ամեննն բեղմնա-
վոր դեմքերն կհամարվին, եթե պահ մը մեկ
կողմ թողունք Երեմիա Չեկերի Քյոմյուրճյա-
նը, որ ամբողջ գրադարան մը լեցուց և որուն

⁵¹¹ Դեպի. Վ. Հ. Թարգմանք, «Երեմիա Չէլէպիի Քէօ-
մյուրճեան, Ստամբուլոյ պատմութիւն», Բ, էջ 579:

⁵¹² Անդ, Ա, էջ 114:

մտքի ու գրչի վաստակին մասին արդեն խո-
սեցանք:

Պոլսոյ մեջ է, որ իրենց գրչի վաստակը
արտադրած են դարուն կարկառուն շատ մը
դեմքերը՝ իրենց Պոլիս գտնված օրերուն:
Ասոնցմէ մեկն էր, օրինակ, Սիմեոն Լեհացին,
որ իր Պոլիս առաջին այցին ժամանակ, Աղա-
րիա Սասնեցիի խնդրանքով, Մխիթար Գոշի-
րատաստանագիրքն ու Կանոնագիրքը օրինա-
կած է 1609-ին, հիշատակարանին մեջ
խնդրելով ներել «գրիս անյարմարութեան և
սխալանացն», «զի էի պանդուխտ և դարիպ
օտար երկրիս և միտք իմ ցնոր և սփիւռ և
միայն զկատարումն փութայի»: Երկար ուղև-
որութենէն մը հետո, երբ 1614-ին կրկին
կուգա Պոլիս այնտեղէն Երուսաղեմ անցնե-
լու համար, տարի մը կստիպվի մնալ այն-
տեղ, որպէսզի ճանապարհածախս հայթաթեմ
գրչի աշխատանքով պարագայով: «Կացի անդ
(ի Կ. Պոլիս) ամ մի,— կգրե իր Ուղեգրութեան
մեջ,— աշխատելով և վաստակելով գրագրու-
թեամբ, զի ժողովեցից պաշար Սուրբ Երուս-
սաղէմ գնալ, զի և անդ էի ուխտ արել: Եւ
Ստամբուլ գրագիրն խիստ խիյամթ ունէր. և
թէպէտ կարգաւորեց շատ են, գրող չկայ. զի
կարդայն ա՛յլ արուեստ է և գրելն ա՛յլ: Եւ
տուին ինձ յովով գիրք գրել աշխարհականք և
կարգաւորեք և քահանայք: Իսկ ես ջանացի և
խայրաթ անէի, և գտնէի ցայգ և ցերեկ
փութայի ճեպէի հանապազ, զի վաստակեցն
ճանապարհի խարճ. զի ձեռս զատ չէր մնա-
րի. և օրն 50—60 դրամ վաստակէի և
Աստուած շէն պահէ Ստամբուլ ժողովուրդն և
գրահանալս, զի այն ամն ժողովեցի ութսուն
դուրուշ»⁵¹³:

Այդ տարին իր ընդօրինակած ձեռագիրնե-
րուն մեջ հայտնի է «Շարակնոց»-ը, զոր ա-
մարտած է 1615 հունիսին, «ի դուռն Սրբոյ
Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին»,
թաղն Վրանկու:

1618-ին Երուսաղեմէն դարձին Սիմեոն հա-
պիւ երկու ամիս կմնա Պոլիս, և սակայն
կընդօրինակեն, Միքայել Թոխաթեցիով հեմ
մեկտեղ, Սողոմոնի գրերն և ԺԲ մարգարե-
ները, «ի դուռն Սուրբ Նիկողայոս Սքանչելա-
գործի, որ կալ յԱտրանայ դուռն»:

Պոլիս աղետող կարկառուն դեմքերն է նա
Աղարիա Սասնեցին, համբավավոր աստղա-
գետ, տոմարագետ և տաղաշափ, որ Պոլսոյ
մեծ հորինած է 1608-ին «Կարգ և թիւ կաթմ»
դիւստաց Հայոց»:

Պոլիս գտնված իր տարիներուն գրչի աշ-
խատանքով պարագայած է նաև Գրիգոր Դաւ-
րանադեցին, դարուն հայտնի դեմքերն միկ-
Դատանադեցին ինքն իսկ կպատմե, թէ
1612-ին Ղալաթիոյ թաղը խորհուրդի նստա-

⁵¹³ Սիմեոն Անգալոյ «Ուղեգրութիւն», էջ 210:

էին ինքր, Հովհաննէս Խուլ և Զաքարիա Վանեցիին, Գրիգոր Կեսարացիին Պատրիարքական Աթոռին բռնու և իշխանութիւնը իրենց միջև բաժնելու համար: Այս եռապետութեան համար կ'հորինվի կանոնագիրը մը, որուն չի հաւելիր սակայն Դարանաղեցիին և իր կողմն կառաջարկն ուրիշ մը, որուն մեջ ծանրակշռութիւնը եկեղեցականներու բարեկարգութեան և ժողովուրդին մտավոր կրթութեան վրա կ'ընթերցէ և որ սակայն կ'մերժվի մշտաւ երկուքին կողմն: Դարանաղեցի կ'ավելցնէ. «Որպէս և յետ ժամանակի արարաք (նման կանոնագիրը մը) ի հետ ողորմածոց Ազարիային, որ տակաւին պահեալ եմ պատուով զնորա սուրբ ձեռագիրն, որ յաղագս Աստուծոյ է գրեալ»⁵¹⁴:

Չենք գիտեր, թե այն տարիներու ընթացքին, երբ Պոլսո Պատրիարքական Աթոռը գրավեց հնգիցս, գրչի ինչ արտադրութիւններ ունեցաւ դարուն ամենն զարգացած հոգևորականներն մին, Գրիգոր Կեսարացիին, որ ժամանակակիցներն հռչակված էր «բաջ հոնտոր», «բաջ և անյաղթ փիլիսոփայ», «բանիւրուն և սիրող իմաստասիրական հանձարող», և որ հեղինակած է գանձեր և տաղեր, բարոգրիք, դատաստանագիրք և կանոնագիրք, գիտական երկեր թարգմանած է արաբերեն, ու պատրաստած է երկրագունդ մը հայերեն տառերով ու լեզվով:

Տարակույս չկա, թե նա իր կարևոր երկերն մեկը, «Թուականք և պատմութիւն յԱզմայ մինչև ի մեր ՌՁԵ (1636) թուին», որուն համար «աշխատեալ էր մինչև վախճան իւր», հորինած, կամ գոնէ ավարտած է Պոլսու Արգարե, Գրիգոր Կեսարացի, որ 1629-ին 1632 թաղված էր Կեսարիա, իր թեմը, 1633-ին Սիս երթալ և կաթողիկոսի ընտրութեան նախագահելէ հետո, նոր կաթողիկոսին՝ Սիմեոն Սեբաստացիի հետ միասին եկած էր Պոլիս, մերջին անգամ մոն ալ հաջողելով գրավել Պատրիարքական Աթոռը և գայն պահելով մինչև իր մահը, 1636-ին⁵¹⁵, թաղվելու համար, բացառիկ արտոնութեամբ մը, Ղալաթիո Ս. Լուսավորիչ եկեղեցով մեջ:

Գրիգոր Կեսարացի սրբազրութիւններով ալ պարապած պետք է լլլաւ: Երուսաղեմի մատենադարանին մեջ կա 1672-ին Պոլիս գրված Սադոս մը (թիվ 1596), որ ընդօրինակված է Կեսարացիի կողմն սրբագրված օրինակի մը վրայէն⁵¹⁶:

Գրիգոր Կեսարացի մտավոր կյանք կստեղծեր նաև իր շուրջը: Ուսած իր օրերու մեծագույն դեմքերն մեկուն՝ Սրապիոն Ուհայե-

ցիի մոտ, ան իր կարգին հասցուց ականավոր ձեռնասուններ, որոնցմէ մեկն էր Մովսէս Տաթևացի կաթողիկոսը: Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա գտնված օրերուն, ի հեռուս այն պայքարներուն, զորս կ'մղեր երկու մրցակիցներու, Հովհաննէս Խուլի և Զաքարիա Վանեցիի հետ, չէր լքած Հայ Եկեղեցիով ավանդութեանց հանդէպ իր նախանձախնդրութիւնն ու իր ձեռնասունները: Երբ Սիմեոն Լեհացի Պոլիս կուգար 1609-ին, «էր պատրիարքն Հայոց վարդապետ մի կեսակրոն, առաքինի և սրբասնեալ, յոյժ իմաստուն և հմուտ Հին և Նոր Կտակարանաց, ճշնող և պահեցող». «և ունէր սա ջուղայեցի աշակերտ մի բանասէր՝ անունն Մովսէս, յոյժ խոնարհ և հեղ, առաքինի և սուրբ, կոյս և բնտիր»⁵¹⁷: Լեհացի կ'ավելցնէ, թե ինք ևս կես տարի մնաց Կեսարացիի մոտ, «առ ոտս որոյ» պիտի գար նաև, ճիշտ նույն տարին, Ազարիա Սասնեցիին ալ, դարուն ուրիշ փառքերն մեկը:

Իր շուրջ ստեղծած մտավոր կյանքին մեկ ապացույցն ալ այն ճոխ մատենադարանն է, զոր ուներ Գրիգոր Կեսարացիին և զոր կտակեց զանազաններու: Իր գրքերը, ինչպես և Պոլսո մեջ ունեցած համարվալոր իր այգին, ստիպված է սակայն վաճառել իր եղբորորդին՝ Հակոբ քահանա Կեսարացիին, որպեսզի հատուցվին ծախքերը, զորս բրած էր Շահին Չեյրեքին, զայն Ղալաթի եկեղեցին թաղելու համար:

1609-ին Պոլսո մեջ իր հորինած կառունադրքին հիշատակարանին մեջ, Ազարիա Սասնեցիին, ակնարկելով այն դժվարութիւններուն, որոնց կ'հանդիպեր աղբյուրներ հայթաիթելու համար իր երկասիրութեան, կ'ընդհատէ իր բաց եղեալ գտկարութիւնս մարմնոյս... ի յերկրէ երկիր և ի գաւառէ ի գաւառ: շրջեալ որունէի և հարցանէի, և եյեալ ի հարկնի գաւառէս իմոյ ի Սասնոյ և յուղի անկեալ եկի ի աստուածապահ քաղաքն Կոստանդնուպոլիս, զի լուսայ իթէ դտանի ի պատրիարքն Կոստանդնուպոլիս Գրիգոր Կեսարացի քաջ հոնտորն և անյաղթ փիլիսոփայն, որ էր յցեալ աստուածաշունչ գրովը, ոչ թէ միայն Հին և Նոր Կտակարանք, այլ և արտաքին գրոց. և նա ի բազում գրեանս և ի բազում տեղեաց ժողովեալ էր ի մի: Զոր ես անարժանս յարեգայ ի նա. և աշակերտեալ առ նա՝ տեսի գտիեղբրայոյս առաքելոցն և սուրբ ժողովոցն կանոնս և յոյժ ուրախացեալ ետու գտաւիարեք»⁵¹⁸:

Այլապես հաւ ձեռագիր մատաններով հատուտ էր նույն օրերու Պոլսու Ազարիա Սասնեցի, երբ 1609-ին Պոլիս կ'գտնվեր և

⁵¹⁴ Դարանաղեցի, «Ժամանակագրութիւն», թիվ 176:

⁵¹⁵ Ա. Ալպոյաւեյան, «Պատմութիւն հայ Կեսարիո»,

Ա, էջ 917:

⁵¹⁶ Անդ, էջ 918:

⁵¹⁷ Սիմեոն Լեհացի, «Ուղեգրութիւն», էջ 8:

⁵¹⁸ «Հանդես ամսօրյա», 1936, էջ 321—322:

աղբյուրներ կփնտռեր իր կանոնագիրքը շարադրելու համար, կվկայե նույն կանոնագրերի հիշատակարանին մեջ, թե առատ էին Պոլսո մեջ նման աղբյուրները: «Եւ էր յուրով գրեանք ի Կոստանդնուպոլիս և գտանէր զո՛ր և խնդրէր որ և ես գտի զորս ի քահանայս և զորս ի աշխարհականս և զորս ի այլազգիս. զորոնմանք բաղում աղաշանօք հազիւ տային ինձ վասն նախանձու»⁵¹⁹:

Արդ, զարմանալի պիտի ընթի, եթե այդ դժնդակ դարուն ձեռագիրներ կընդօրինակվին Պոլսո հայ թաղերուն մեջ: Այդ վեց գլխավոր թաղերեն Պալատն է, որ առաջնութունը կշահի: Անոր Ս. Հրեշտակապետ եկեղեցվո հովանին տակ հիսնամյա շրջանի մը (1632—1680) մեջ գրված ձեռագիրներն 11-ը հասած են մեզի: Սաղմոս մը 1631-ին արտագրված, 1634-ին ընդօրինակված ճաշոց մը և Հայսմավուրը մը, կանոնագիրք մը (1636), Հարանց վարք մը (1640), Նարեկի մը (1669) և Ճաշոց մը (1672), վերջին վեցն ալ գրված Արիստակես քահանայի ձեռքով, ճաշոց մը (1680) և Ավետարան մը, որ հավանաբար նույն այդ դարուն է ընդօրինակված:

Զինիլի համամի Ս. Սարգիսը կհետևի իրմե մնացած ձեռագիրներու թվով: 1641-ին, 1645-ին և 1651-ին այնտեղ ընդօրինակված են 3 Հայսմավուրքներ, Աստվածաշունչ մը 1651-ի և 1660-ի միջև, երկու Սաղմոսներ 1648-ին և 1668-ին, քարոզգիրք մը 1648-ին, Միքայել Աստուծո 1649-ին և Ավետարան մը 1654-ին:

Հիսարգիրի Ս. Նիկողայոսի հովանին ներքև հաջորդաբար ընդօրինակված են Ծարական մը (1615), Հայսմավուրք մը (1627), Սաղմոս մը (1629), Աստվածաշունչ մը (1647), ուրիշ Ավետարան մը (1674) և կանոնագիրք մը, որ նույն դարու ընդօրինակություն է հավանաբար:

Սամաթիո Ս. Գևորգ եկեղեցվո մեջ գրված ձեռագիրներն 5-ը միայն հասած են մեզի՝ Սաղմոս մը (1650), Մաշտոց մը (1668), Սուտ Կալիսթինեսոսը և Սիրաբը պարունակող հավաքածո մը (1694) և Պղնձե քաղաք մը (1696):

Հալաթիո Ս. Լուսավորչի անվան տակ ընդօրինակված են երկու խորհրդատետրեր 1636-ին և 1663-ին, Ավետարան մը 1664-ին և Ճաշոց մը 1672-ին:

Քուլքափուի Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ գրված են Մաշտոց մը և Ավետարան մը 1671-ին և երկու Հայսմավուրքներ՝ մեկը 1676-ին, իսկ մյուսը Փիլիպոս կաթողիկոսի օրով:

Ուրիշ քանի մը ձեռագիրներ ևս նույն այդ դարեն կմնան, բայց չեն հիշատակեր, թե ո՛ր թաղն են ընդօրինակված, ինչպես Սաղմոս մը, որ գրված է 1634-ին, 1678-ին հորինված տաղաչափյալ Սաղմոս մը և 1688-ին գրված ձեռագիր մը, որ կպարունակե Կիպրիանոսն ու Ուրբաթագիրքը:

Հավանաբար դեռ ուրիշներ ալ մնացած ըլլան այս դարուն Պոլսո մեջ գրված հայերեն ձեռագիրներն, և ուրիշ շատեր կորսված ըլլան: Դարուն աղմուկին մեջ համեստ ձիգ մը կմատնե այսքանն ալ:

Հայ գաղթականությունը Պոլսո մեջ այս դարուն նոր թափ մը առավ, սկիզբը դնելով եռուն գործունեության մը, որ հետագային Պոլիսը պիտի դարձնե ամենեն բեղմնավոր օջախներն մեկը հայ տպագրության, ըլլա իր լույս ընծայած հատորներու թիվով, ըլլա իր ի հայտ բերած հոգաձուլյալը:

Կես դար հազիվ անցած այն օրեն, երբ Մեղապարտ Հակոբ Վենետիկի մեջ կտպագրեր առաջին հայերեն գիրքը, Պոլիս ալ իր առաջին տպարանը ունեցած էր, որ սակայն գործեր էր կարճ ժամանակ մը միայն, հազիվ երկու տարի, 1567—1568: Այդ տարիներուն է, որ Պոլսո մեջ լույս ընծայվեր էին քերականութուն կամ այբբենարան մը 1567-ին, ժամագիրք մը, պարզատոմար մը և պատարագամատուց մը 1568-ին և Մաշտոց մը 1569-ին: Այսքանով ալ կսահմանափակվի գործունեությունը տպարանին, զոր Պոլսո մեջ քացի էր Արզարդյի, թեև հայ բանասիրության մեջ պնդողներ եղան, թե Արզարի Պոլիս հասած միջոցին արդեն հայ գիրք տպագրելու փորձն եղած էր այնտեղ, և թե 1567-ին տպված քերականութուն-այբբենարանը արգասիքն էր մուկին մեջ մնացած համեստ աշխատավորի մը՝ Հորդոբոսի, որուն եկած էր գործակցիլ Արզարի վրդկիացին:

Պետք է ավելի քան դար մը ուսունով՝ հայ տպարան գտնելու համար Պոլսո մեջ: Պոլսո այս երկրորդ տպարանին նախաձեռնությունը կպարտիքը դարուն մեծագույն դեմքերն են՝ միա Չելբի Քյոմյուրճյանի, որ իր ալլազան գրադամներուն մեջ իսկ փորձեց, որ կրկին ձեռնչե Գութեմբերգի մեքենան Թուրքիո մայրաքաղաքին մեջ, և որ սակայն երկու գիրք միայն կրցավ լույս ընծայել՝ «Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդուս արցնցն Տեսնոն Ներսէսի Կյալեցուց» 1677-ին և «Տնօրինական տեղիք» 1688-ին: Կարճ տեղեց Երեմիա Չելբիի նախաձեռնությունը, բայց ան պոռթկումն էր հաստնցող մտահոգությամբ մը և իր արձագանքը պիտի ունենար շատ շուտով: Եվ իդուր չէր, որ լեռ զայն պիտի հռչակեր, ինչպես տեսանք, Պոլսո հայ տպագրության իսկական նախահայրը:

⁵¹⁹ Հ. Ն. Ալիեյան, «Ազարիա վ. Սասնեցի», «Հանգես ամսօրյա», 1936, էջ 322:

Դարուն վերջերն է, 1694-ին, որ Պոլսո մեջ նոր տպարան մը կհիմնեն Գրիգոր Մարգվանեցին, հայ տպագրության պատմության ամենեն կարկառուն դեմքերեն մեկը, որ և տաղարան մը կտպեն հոն 1698-ին: Գրիգոր Մարգվանեցիի տպարանը պիտի շարունակեր հաջորդ դարուն ալ, հարթելով ճամբան հայ տառիկն հավերժացման նվիրված անխոնջ աշխատավորներու ամբողջ փաղանգի մը: Ան էր, որ իրարու կապեց երկու դարերը իրենց մտքի ճիգին մեջ:

Եվ վերջապես դարը դատ մը կտակեց իր հաջորդին:

Անցյալ դարուն ալ հայ տառապանքը երկիցս ճամբա եկեր էր Հայոց աշխարհին՝ երթալ ճանկոտելու համար կոնծած խղճմտանքը ինքզինք քաղաքակիրթ հորջորջող մարդկության: Ու երկու անգամուն ալ ետ էր դարձեր հուսահատ՝ սև վարշամակը միշտ գլխուն:

Տազնապի դարը վերստին հասունցուցեր էր հայ գիտակցությունը և զայն ճամբա հաներ էր անգամ մը ևս Եվրոպայի դուռը բախելու, հուսալով որ ան հիմա կբացվի իրեն: Այս անգամ ալ սակայն Եվրոպան ծիծաղեր էր իր միամտության վրա ու զայն ձեռնունայն դարձուցեր էր ետ:

Հայ ժողովուրդը հիմա ինքն էր, որ պիտի ստեղծեր իր դատը: Ան պիտի տակավ հասկընար, թե ոչ իր հոգեւոր պետերու գեոնամած աղերսները պիտի կարենա ողորկել Արևմուտքի քար կտրած սիրտը, ոչ ալ փցուն խոստումները պիտի հաջողին վերջ տալ դարավոր իր տառապանքին:

Հայ ժողովուրդը հիմա կզգար, թե ինքը պետք է տեր կանգնի իր իսկ դատին:

Պոլիսը նույն այդ դարուն վերջերն է, որ կսկսի դեր ստանձնել հայ ժողովուրդի ճակատագրին մեջ: Ամբողջ երկուրեւկես դար ան գրեթե խարխափեր էր: Հիմա, ի հեճուկս տազնապաներուն, որոնք ամբողջ դար մը իր ճիգերը հոշոտեր էին և հարվածներուն, որոնք տեղացիներ էին իր վրա, պահիկ մը անգամ խառաղություն չտալով իրեն, ան կփորձեր արթննալ ու ճամբա որոնել իրեն և ուրիշներուն համար:

Դարը, որ կուգար, իր սթափման դարը պիտի դառնար տակավ, ու պիտի պատրաստեր զայն՝ ստանձնելու վաղվան իր առաքելությունը:

Պոլսո պիտի վիճակներ արդարև պաշտպան հանդիսանալ Հայ Եկեղեցվո, սրբանր դառնալ հայ մշակույթին, հայ տպագրությունը առաջնորդել իր իսկական առաքելության և լույս սրակել զանգվածներուն մեջ, ճամբա հարթել հայ աշխարհաբարին ու հայ գրականության առաջին կորիզներն ստեղծել հայ դպրոցներուն ու տեր կանգնիլ հայկական դատին:

Պոլիսը իր այդ դերը կստանձնեի դարհուրելի պայմաններու մեջ: Հայ Եկեղեցին, որ գերագույն կոչման էր եղեր հայ ժողովուրդի դարավոր մաքառումներուն, և որ դեպքերու բերմամբ գլուխ ու ղեկավար էր դարձած հայ ժողովուրդին, ամոքելու կոչված անոր ցավերը և ճանապարհ որոնելու դեպի բարձր նավահանգիստ մը, ինքը կապեր մեծ ճգնաժամ մը:

Ընկճված փոթորիկներուն առջև, որ դուրսեն կխուժեին իր վրա, և անկարող դարման գտնելու խոցերուն, որ զինք կկրծեին ներսեն, ան պահ մը մոռցած էր կարծես իր առաքելությունը:

Ոչ մեկ ժամանակ այնքան շվարած չէ Հայ Եկեղեցին հայ ժողովուրդին ուղի որոնելու իր ճիգերուն մեջ, որքան այս դժբախտ դարուն: Եվ ոչ մեկ դարու ընթացքին հայ հոգեւորականությունը այնքան չէ մոռնում Հայ Եկեղեցին հայ ժողովուրդին բարօրությանը պատնեշ դարձնելու իր փորձերուն մեջ, որքան նույն այդ դարուն, երբ ամենհի էին, որեւէ ատենն ավելի, հայ ժողովուրդը արեւկոծող փոթորիկները:

Ու հիմա, որ դար մը կդնենք դազող, շենք կրնար սարսուռով չհամակվիլ այս ահեղի պատկերին ի տես, ու շարսափիլ դժոգակ հոգեբունե առջև, որոնց կոչված էին լծվիլ գալոց սեղանները:

Շատ եկեղեցի է երգեր հայ բանաստեղծը՝ Հայ Եկեղեցվո պանծացման տաղը երգելու ժամանակ.

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է

հավաքին

Իմ պապերուս՝ որ հողեն զայն քար առ քար

հանեցին...

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց

ալեկոծ


նավահանգիստ մ'է խաղաղ...

Արդարև, ամբողջ դարեր Հայ Եկեղեցին պատնեշ մըն է եղեր հայ ժողովուրդի գոյության համար, պահպաներ է իր հովանիին տակ անոր հոգեկան ժառանգությունը, հուսադրեր է զայն փորձությանց ժամանակ և դիմացուցեր դարերուն:

Բայց այդ բերդը վաղուց փուլ եկած կըլար, եթե զայն չպաշտպաներ ինքը հայ ժողովուրդը, կտրժե շտար անոր վրա փորձված գրոհներուն և անխորտակելի չդարձներ զայն:

Հայ Եկեղեցին կուլ կերթար տազնապի դարուն, եթե անառիկ շմար ինքը, հայ հոգին: Ու հայ ժողովուրդն էր, խոնարհ զանգվածը, որ փշրեց դուրսեն խուժող ալիքները, ամլացուց ներսի դավերը, և իր հոգին պահեց անաղարտ:

(Շարունակելի)



Հ. ՔՅՈՒՐՏԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՃՇՏՈՒՄՆԵՐ

1. ՍՈՒՂՈՒՄԱՆԱՍՏԸՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Էջմիածին» պաշտոնաթերթի 1963 թվականի ապրիլի թիվին մեջ մեղվաջան և վաստակավոր բանասեր Հ. Ճ. Սիրունի կշարունակե իր իրապես շահեկան և արժեքավոր «Պոլիս և իր դերը» երկար ուսումնասիրությունը, որ, հուսանք, իբրև կարևոր ուսումնասիրություն, առանձին հատորով կարտատավի:

Սիրունիի այս ուսումնասիրության մեջ խոսք կըլլա Սուրբազանատուրի Ս. Գևորգ Եկեղեցիին մասին և անկե տարբեր կնկատվի 1480-ի և 1498-ի հիշված Զարխափան Ս. Աստվածածին եկեղեցին:

Բժիշկ Թորգոմյան և ողբացյալ Արշակ Ալպոյաճյան զայն ուրիշ տեղերու եկեղեցի կարծած են: Այսպես, Թորգոմյան այդ Քումբափուկ եկեղեցին, իսկ Ալպոյաճյան ալ Պոլսո Նդիրնեքափուկ կողմերը եղած լատինական Ս. Աստվածածին եկեղեցին նկատած են: Սիրունի ջանացած է ճշտել ու պարզել 1480-ի և 1498-ի հիշատակարաններուն թնճովը և սակայն չէ հաջողած Սուրբազանատուրի Ս. Գևորգը և Ս. Աստվածածինը նույնացնել:

1946-ին հրեա գրավաճառե մը ինձի առաջարկվեցավ գրչագիր Ավետարան մը, որուն գինը սակայն տարապայման բարձր ըլլալով չկրցա գնել և հավաքածոյիս մեջ անցնել: Գրչագրին մոտոս գտնված ժամանակ արտագրեցի շահեկան հիշատակարանը և զայն հրատարակեցի Նյու-Յորքի «Հայաստանյայց Եկեղեցի» պարբերաթերթին մեջ 1947 հոկտեմբերին, էջ 305: Այդ գրությունս անժանոթ մնացեր է հարգելի Սիրունիին, ուրկե անտարակույս պիտի կարենար օգտվիլ իր աշխատության համար:

Ավետարանին այդ հիշատակարանը հոս վերստին կներկայացնեմ, քանի որ անկե քանի մը լուսաբանություններ կրնանք ստանալ Պոլսո հին հայ գաղութին մասին: Ահա այդ հիշատակարանը.

«Փառք... Յամի թուաբերութեանս մերոյ սեռի ԶԻԴ (1495) կատարեցաւ Սր. Աւետարանս աստուածախօս մատեանս, խաւսեցեալ ի բանէն Աստուծոյ մարմնացելոյն վասն մերի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ: Աստուածասէր քրիստոնեայն խոճա Յովաննէսն, որ մեծաւ սիրով ստացաւ զսայ, յաղագս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց հաւրն Արեւին, և մաւրն Մարգրտին, և եղբարցն

Քարիմին և Նաղատանսպաղչին և զաւակին մղտեսի Ամիրին (ոչ գրչին ավելցված՝ Մխիթարին) և Սինանին, և կենակցին Շահփաշային և այլ ամենայն արեան մերձաւորացն: Լաւ համարելով զսա... ետ գրել զսա սիրով և մեծաւ հաւատով ձեռամբ մեղսասէր Աբրահամ արեղայի, որ անուամբ միայն կոչիմ արեղայ և գործով խաբեբայ: Արդ, որ հանդիպիք Սը. և պատուական Աւետարանին յիշեսցիք ի Քրիստոս զմղտեսի խոճա Յովանէսն, և զիրան ամենայն ընդանեաւք, զարմաւք և զաւակաւք և ասացէք Աստուած ողորմի: Կատարեցաւ Սը. Աւետարանս ի մայրաքաղաքս որ կոչի Կոստանդինուպոլիս, ի դուռն Սը. Աստուածածին, որ այժմ կոչի Սուլումանաստիր, ի հայրապետութեան Տեառն Սարգսի, և յարհի եպիսկոպոսութեան Տէր Կարապետի Կաֆայեցոյ...»:

Որոշ է, որ 1480-ի Ամիրդովլաթի Սաղմոսին և 1498-ի հիշատակարաններուն Չարխափան Ս. Աստվածածինը նույն է այս Ս. Աստվածածնի հետ, որ կհիշվի մեր այստեղ ներկայացուցած Ավետարանին հիշատակարանին մեջ: Ուրեմն Սամաթիո Սուլումանաստրերի Ս. Գևորգը ունեցած է երկրորդ անուն մըն ալ՝ Ս. Աստվածածին, որ ավելի գործածված է ժն դարուն: Սամաթիո Սուլումանաստրերը 1037-ին Ս. Կույսին անվամբ կառուցված վանք մըն էր, որ ըստ Հ. Ինճիճյանի, ունեւր «երրջակ եկեղեցի Ս. Գևորգ, Ս. Աստվածածին և Ս. Երրորդութիւն»:

Ես այստեղ մանրամասնութեան մեջ չեմ մտնել վստահ ըլլալով, որ մեղմաբան Սիրուին ինքն իսկ պիտի գործածն ու ընդլայնն այս հիշատակարանը, իր այնքան ընտիր ու շահեկան վերոհիշյալ գործին մեջ: Դիտել տամ միայն, որ հիշատակարանը Պոլսո պատմութեան մասին ունի ուրիշ նպատակներ ալ: Այսպես, հիշատակարանս կհաստատեն, որ Պոլսո Կարապետ պատրիարքը (1485—

1509) կաֆայեցի էր: Վերջապես, ինչպես որ Ալպոյաճյան ալ նկատած է հիշատակարանին հրատարակութեան առթիւ իր գրած հոգւածին մեջ («Հայաստանայց եկեղեցի, 1948 փետրվար, էջ 40»), մինչև վերջերս կարծւածին պես, 1475-ին բռնագաղթ զրիմցի հայերը միայն էդիրնեբափուի մոտ Սամրաթումուրը շին բնակեցված, այլ նաև Սամաթիա:

2. ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆ ՄԸ

«Էջմիածին» ամսագրի վերոհիշյալ թիվին մեջ, Ս. Փաշաճյան ստորագրած է երկու մանր հատվածն բաղկացյալ «Նյութեր Բուղարիո հայ գաղութի պատմութեան» հոդված մը, որուն երկրորդ հատվածը հնագույն Ավետարանի մը մասին է, որ այժմ կպահպի Բուղարիո Սոֆիա մայրաքաղաքին Վասիլ Կուլարովի անվան պետական մատենադարանին մեջ (նախկին ազգային մատենադարանը): Հարգելի հեղինակին անձանոթ մնացած է, որ այս երկաթագիր հնագործյան Ավետարանին ԶՂԵ (1346) թվալիւր հիշատակարանը հրատարակված է 1926 թվականին իմ կողմն «Հանդես ամսօրյա»-ի մեջ (էջ 344—345): Սակայն բուն գրչութեան այժմ եղծված և անրնթեռնելի հիշատակարանը, որ բոլորովին անձանոթ մնացած է հոգւածագիր Փաշաճյանին, նույնպես իմ կողմն առաջին անգամ ըլլալով թե՛ վերծանված և թե՛ հրատարակված է բուղարահայ տարեգրքի մը մեջ 1931-ին: Ահա այդ հիշատակարանը իր գլխավոր գծերուն մեջ.

«Շնորհիւ ամենակալին Ա[ստուծոյ] կատարեցաւ Աւետարանս ի թվականութեանս հայոց ՆԺԵ (966 Քրիստոսի): Զգրողս սորա յիշեսցիք և Ա[ստուծոյ] յիշողացտ ողորմեսցի, ամէն...»:

Բոլորովին անզարդ գրչագիր մըն է:



ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՏՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Սաղմոսավանքի գրատունը, որ կառուցված է 1235 թվականին, իր կոմպոզիցիայով զգալիորեն տարբերվում է վերը քննարկվածներից: Այն կառուցված է ավելի վաղ գոյություն ունեցող երեք շենքերին կից, ուստի նրա հատակագիծը ստացել է անկյունանման ձև: Նրա արևելյան կողմում գտնվում է բեմը, իսկ հարավ-արևելյան անկյունում՝ երկհարկանի խորանները (նկար 10):


Հատակագծի կապակցությամբ յուրօրինակ ձև է ստացել նաև ծածկը, որը բաժանված է երկու մասի: Տարածության հիմնական մասը ծածկված է երկու զույգ խաչաձևվող կամարների միջոցով, որոնց կրունկները տարբեր մակարդակների վրա են գտնվում, որ բացատրվում է շենքի չափերով և երդիկի անհամաչափ դիրքով: Կենտրոնական մասը ավարտվում է ութկողմանի միակ թաղով, որ պսակվում է ութկողմանի ուտոնդայով: Ծրկայնակի կամարների համաչափության առանցքից վրանը մի փոքր դեպի արևմուտք է շարժված: Այդ պատին է մոտեցել արևմտյան լայնակի կամարը և նա հենվում է ոչ թե հատուկ հենարանների վրա, այլ հենց երկայնակի կամարների վրա: Մածկի պարագծային մասերը կազմված են տարբեր մակարդակի վրա տեղավորված փոքրիկ կամարներից, տարբեր ձևի թաղերից և հարթ քարե առաստաղներից, որոնք ներքնամասին որոշակի յուրահատկություն են տալիս: Շենքի փոքր մասը, որ հարում է եկեղեցիներին, ծածկված է երեք միացող թաղերով:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1963 թվականի ՁԺ-ից և 1964 թվականի Ձ Ա-ից:

Սաղմոսավանքի գրատունը միջանցիկ է, ինչպես նաև Հոռոմոսավանքինը, ի տարբերություն մյուս գրատներից: Արևմտյան գլխավոր դռնից բացի, ուրիշ դռներով նա հանդիպակցում է ինչպես գավթի, այնպես էլ Ս. Աստվածածին եկեղեցու հետ, ուր կարելի է մուտք գործել միայն գրատան միջով: Այս հանգամանքները, ինչպես նաև բեմի և խորանների առկայությունը, թույլ են տալիս այն եզրակացությունը գալ, որ շենքը նախատեսված է եղել նախ եկեղեցական սպասեղենը պահելու համար և ապա միայն ձեռագրերը պահելու: Այդ է վկայում նաև անհրաժեշտ թվով որմնախորշերի բացակայությունը: Կարելի է ենթադրել, որ ձեռագրերը պահելու համար հարմարեցված են եղել ներքին խորանը և տարածությամբ փոքրիկ Ս. Աստվածածին եկեղեցին:

Իր բարձրությամբ գրատունը չի դիջում գլխավոր եկեղեցուն և գավթին: Ճակատները հարթ են և ավարտվում են ճակտոնապատերով (նկար 11): Շենքը պսակում է անհամաչափ տեղավորված կանոնավոր ուտոնդան, որը ներդաշնակություն է ստեղծում գլխավոր եկեղեցու զմբեթի և գավթի ուտոնդայի հետ: Շենքը լրացնում է վանքի անսամբլը և բարձրացնում նրա գեղարվեստական արժեքը:

Հետաքրքրություն է ներկայացնում ժայռափոր դահլիճը Գեղարդաձորի կիրճում, Գեղարդավանքի պարսպից դուրս, որն ուսումնասիրել է Թ. Թորամանյանը 1934 թվականին: Թեև այն կիսավեր վիճակում է մեզ հասել, բայց և այնպես, նրա ճարտարապետական առանձնահատկությունները և ար-



Նկար 10.—Սաղմոսավանք: Ընդհանուր հատակագծի մի մասը (1. գրատունը, 2. Ա. Աստվածածին եկեղեցին, 3. գլխավոր եկեղեցին, 4. զավիթը):

ձանագրությունը, որի մեջ հիշված է Պապակ իշխանի անունը, հիմք են տալիս այն վերագրել ԺԳ դարի երկրորդ կեսին²⁶։ Թ. Թորամանյանը, համեմատելով տվյալ դահլիճը Հոռոմոսավանքի, Հաղբատի, Սանահնի և այլ գրատների հետ, գտնում է, որ այն գրատուն է հղել և հնարավոր է համարում նաև, որ այն օգտագործված լինի որպես դահլիճ հասարակական ժողովների գումարելու համար։ Դահլիճի չափերը բավական մեծ են՝ լայնությունը 9 մետր է, երկարությունը 15 մետրից ավելի, բարձրությունը 5 մետր։ Առաստաղը հարթ է, հնարավոր է, որ դմբեթ և երգիկ ունեցած լինի վերևից լույս ստանալու

համար։ Որմնասյուների տարբեր խոյաներ ունեն և իրար հետ միանում են կամարներով։

Պատերն ունեն տարբեր չափի և զանազան ձևի որմնասյուներ։ Պեղումների ժամանակ գտնվել են շթաքարե (ստալակտիտե) զարդեր ունեցող բազմաթիվ ճարտարապետական բեկորներ։

Չի կարելի անուշադրության մատնել մի քանի գրատների առջև եղած նախասրահները կամ միջանցքները։ Նրանք կառուցվում էին հիմնական շենքից հետո, երբեմն երկու դար հետո (Սանահնի), և, ինչպես երևում է, գրատների օգտագործումն ավելի դյուրին դարձնելու նպատակն էին հետապնդում։ Այդ նախասրահները գրատների մուտքի մոտ որոշ տարածություն պաշտպանում էին մթնոլորտի աղղեցությունից՝ արևից, անձրևից, ձյունից և

²⁶ Թ. Թորամանյան, նշված աշխատությունը, երկրորդ ժողովածու, էջ 276—280։



Նկար 11.—Սաղմոսավանք: Գրատան տեսքը մուտքից:

շոգ ու սառնամանիք օրերին մեղմացնում էին օդի ջերմության խիստ փոփոխությունները: Այդ նախասրահներն օգտագործվում էին գիտնականների ու վանահայրերի կողմից այցելուների և սանների հետ անց կացվող զանազան զրույցների համար: Այնտեղ թաղվում էին նաև առանձնապես պատվարժան անձինք:

Համեմատաբար վաղ շրջանի նախասրահների թվին է պատկանում Սանահնի գրատան նախասրահը, որ ԺԳ դարի առաջին քառորդին է վերագրվում: Այն մի բավական ընդարձակ (2,66X10,14 մ.) սրահ է, արևմտյան կողմից բոլորովին բաց, ծածկը թաղակալ՝ չորս կամարների վրա: Հարավային պատը լայն, երկկամար մուտք ունի, մեջտեղում մի սյուն: Մուտքի երկու կողմերում կան փոքրիկ պատուհաններ:

Հաջորդի նախասրահը, որ կառուցված է գրատան վերակառուցման ժամանակ, բավական մեծ չափեր ունի, որ գերազանցում են հիմնական շենքի տարածությունը ավելի քան երկու անգամ: Նախասրահը գրատունը կապում է գլխավոր տաճարի հետ, որին շրջանցում է հյուսիսից ու արևելքից: Հյուսիսային թևում կա երկու մատուռ, այդ պատճառով էլ նա ծածկված է կիսաթաղով՝ չորս նեցուկա-

կամարների վրա, որը հազվագեպ երևույթ է Հայաստանի շինարարական պրակտիկայում: Արևելյան թևի կոմպոզիցիան ավելի բարդ է: Նա մեջտեղում լուսի համար փոքրիկ բակ ունի, իսկ ծածկը զանազան մեծություն ու տարբեր ձևավորության թաղեր ու կամարներ ունի, որոնք նախասրահին յուրօրինակություն և որոշակի սրտաբացություն են հաղորդում:



Շատ ավելի պարզ է Նոր Գետիկի նախասրահը, որ զբաղեցնում է գրատան և գավիթի միջև ընկած տարածությունը: Այն կառուցված է ավելի ուշ, հավանաբար ԺԳ դարի երկրորդ կեսին, զանգակատան շինարարության ժամանակ, և իրենից ներկայացնում է մի միջանցք, որ պաշտպանում է գրատան և գավիթի մուտքերը վատ եղանակներին, առանձնապես ձմռանը ձնից: Թաղակալ ծածկը պահվում է որմնասյուների վրա, որոնք իրար հետ կապված են ինչպես նեցուկակամարների, այնպես էլ որմնակամարների միջոցով: Վերջիններս իրենց հերթին ոչ խոր որմնախորշեր են կազմում:

Սաղմոսավանքում նախասրահն այժմ չի պահպանվել, բայց նրա երբեմնի գոյությունն է հաստատում գրատան արևմտյան մուտքի մոտ պահպանված քարե պատերի ստորին շարքը: Այն ոչ մեծ մի շենք էր 26,13 քառակուսի մետր տարածությամբ, որի մեջ բացվում էին գավիթի հարավային պատի կրկնակ պատուհանները:

Վերևում քննված գրատների կառուցողական առանձնահատկությունները վկայում են, որ նրանք սերտ կապ են ունեցել հայ ժողովրդի բնակարանային հիմնական բլբլ՝ գլխատան հետ: Նույնիսկ նախասրահները նույն նշանակություն ունեն, ինչ որ հայկական բնակելի տների սրահները:

Գրատների տարածությունը տատանվում է 70—80 քառակուսի մետրի սահմաններում—Սաղմոսավանքում և Հոռոմոսավանքում՝ 70, Հաղբատում՝ 72,85, Սանահնում՝ 81,18 քառակուսի մետր: Հայտնի են նաև համեմատաբար փոքր (Նոր Գետիկում՝ 50,4 քառակուսի մետր) և ավելի մեծ (Գեղարդում՝ ավելի քան 140 քառակուսի մետր) շենքեր:

Հատուկ ուշադրություն էր դարձվում ծածկին: Հաշվի առնելով հայ ժողովրդական տների ծածկի ճարտարապետական-գեղարվեստական հարուստ առանձնահատկությունները, գրատների ճարտարապետները գլխատների փայտե ծածկի ճարտարապետական ձևերը փոխադրեցին քարե մոնումենտալ ճարտարապետության մեջ: Գրատները համահնչուն են ընդարձակ մակերես և լավ լուսավորություն ունեցող ժողովրդական բնորոշ գլխատների հետ, որոնց ծածկը հենված է սյուների վրա: Զբավարարվելով ընդունված լուծումով, երբ երկու զույգ փոխադարձաբար



Նկար 12.—Սանահին: Գրատան հարավային և հյուսիսային պատերի որմնասյուները:

խաչաձևվող կամարները դասավորված են շենքի առանցքներին խստորեն համաչափ, ճարտարապետները կիրառում են այդ սխեմայի դանադան տարրերակները, ստեղծելով յուրօրինակ կառույցներ, որոնք բարձրացնում էին ներքնամասի ճարտարապետական-գեղարվեստական արժեքը: Եթե Հաղբատում և Հոռոմոսավանքում իր կիրառումն է գտել նոր Գետիկի ավելի կատարելագործված ծածկի ձևը, այս Սաղմոսավանքում, ուղղանկյուն հատակագծի և երդիկը դեպի ճակատային պատը մոտեցնելու հետևանքով խաչաձևվող կամարները դասավորված են առանքներին ոչ համաչափ, որը և բավականաչափ բարձրացրել է ծածկի ոչ միայն կառուցողական, այլև գեղարվեստական նշանակությունը:

Այլ կերպ է վարվել Սանահնի գրատան ճարտարապետը: Նա հրաժարվել է խաչաձևվող կամարների սխեմայից, որը սահմանափակում է կենտրոնական՝ լույս բաց թողնող մասի չափերը և կամարները ոչ թե պատերին զուգահեռ է դասավորել, այլ անկյունագծով: Դրա շնորհիվ, վրանի ստորին մասը մեծ չափեր է ստացել: Այդ և վրանի հաղարաշենի ձևով կառուցված լինելը ավելի լավ լուսավորություն են ապահովում, թեև երդիկը փոքր է:

Պատուհանների դասավորությունը լավ մտածված է: Հիմնականում լույսը թափանցում է երդիկից, որը ոչ միայն հավասարաչափ լույս է տալիս, այլև ծառայում է օդափոխության համար: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անցքեր էին բացում պատերի մեջ՝ երբեմն գետնից բարձր փոքրիկ նեղ պատուհանների ձևով: Նոր Գետիկում և Սաղմոսավանքում բացված են երկու կրկնակ նեղ պատուհաններ: Լույսի հիմնական աղբյուր հանդիսացող երդիկը հատակից ոչ պակաս քան 8 մետր բարձրության վրա կառուցելը և նեղ պատուհանները, որոնց միջով նույնիսկ փոքր երեխան չի կարող ներս մտնել, պատճառաբանվում են շենքում պահվող թանկարժեք իրերը պաշտպանելից ապահովելու անհրաժեշտությամբ:

Այս նույն նկատառումներով էլ, գրատան միակ մուտքի դուռը պատրաստվում էր շատ հաստ ու ամուր տախտակներից, քան եկեղեցիների դռները:

Ձեռագրերն ու թանկարժեք իրերը պահելու համար նախատեսված դանադան որմնախորշերը, հնարավորության սահմաններում, պատրաստված են մուտքից հեռու: Նրանց մեծությունը տարբեր է, որը, հավանաբար, կախված է այնտեղ պահվող իրերի չափերից: Նոր Գետիկում որմնախորշերը բարձր են,

սկսվում են հատակից, Հաղբատում՝ ավելի սովորական են, կողքերինը միատեսակ են, մեջտեղինները՝ լայն և բարձր, իսկ Սանահնում ամենադանազան ձևերի, սկսած ամենափոքրիկից՝ կանթեղի համար, մինչև մեծը՝ լայն և բարձր:

Բավական տարբեր են նաև գրատների ճարտարապետական ձևավորումները: Նոր Գետիկում, մասամբ էլ Հաղբատում, ճարտարապետական դեկորը նվազ է, մինչդեռ Սաղմոսավանքում, մանավանդ Սանահնում, կիրառված են շուշլորեն: Պոֆիլների, առանձին մասերի և քանդակների բնույթը արտացոլում են շենքերի կառուցման ժամանակը, և նրա կապը ժամանակաշրջանի մյուս կառուցումների հետ:

Սանահնում կամարների հիմքերը յուրօրինակ սյուների տեսք ունեն, որոնց նմանը չի հանդիպում Հայաստանի մյուս հուշարձաններում (նկար 12): Սյուների մարմինները կազմված են փոքր տրամաչափի երեքբառորդական քանդակազարդ սյուներից, որոնք տեղավորված են մեծ տրամաչափի հարթ կիսասյուների առջև: Հարավային պատի

կիսասյան վրա կան յոթը ալդպիսի փոքրիկ սյուներ: Նրանց խարիսխը կազմված է մի ընդհանուր և բարդ պրոֆիլ ունեցող վերին մասից, որն իր ձևով ընդգրկում է սյուների մարմինը: Խոյակները յուրահատուկ են: Հարավային պատի վրա նա մի նուրբ դուրս ընկած սալ է կիսազլանի վերևում, որը արևմտյան և հյուսիսային կողմերի կիսասյուների վրա բարդեցված է մի բեկումով երեքբառորդական սյուների վերևում: Արևելյան պատի խոյակը, բազմանիստ, երեսը քանդակազարդ պրիզմայի ձև ունի:


Կիսասյուների առանձին մասերը ներդաշնակ են և իրենց ձևերով ձուլվում են պատերի հետ, աչքի ընկնելով զարդաքանդակների նրբությամբ, որը նրանց թեթևություն և գեղեցկություն է տալիս: Զարդաքանդակների մոտիվներն են երկրաչափական զարդեր, հյուսվածքներ երկու-երեք թելերից, գալարներ, խաչեր և այլն: Արևելյան պատի խոյակի կենտրոնում խաչքար է պատկերված, իսկ հյուսիսային պատի խոյակի վրա՝ իրար փաթաթված օձեր, որոնց պոչերը գրկում են խոյակի հիմքը:



Նկար 13.—Սանահին: Գրատան ներքնամասը:

Որմնախորշերի քանդակները լրացնում են որմնասյուների զարդարանքը: Նրանց կիսակլոր և նավախելի ձև ունեցող որմնախորշերը շրջանակված են երկրաշափական զարդեր ունեցող պրոֆիլներով, որն ավելի սերտորեն է կապում որմնասյուները պատերի հետ, ստեղծելով ներքնամասի դեկորատիվ ձևավորման միասնություն (նկար 13):


Ի տարբերություն պատերի զարդարանքից, ծածկի զարդարանքը շատ ավելի պարզ է: Այստեղ կիրառված են հասարակ գոտիներ, բանի որ տարածական ձևը հանդես է գալիս




Ն կ ա ռ 14.—Սանահին: Գրատան և Ս. Գրիգոր եկեղեցու տեսքը հարավից:

որպես գեղարվեստական տարր՝ դիտողի վրա ազդելով իր չափերով, քարե կոնստրուկցիաների ձկունությամբ և նրանց կատարման վարպետությամբ: Հաջող գտնված համամասնությունները, ծավալի ամբողջությունն ու մասշտաբը, զարդաքանդակների նրբությունը Սանահնի գրատունը բնորոշում են որպես միջնադարյան Հայաստանի ճարտարապետության բարձր գեղարվեստական ստեղծագործություններից մեկը:

Սանահնի գրատան արտաքին զարդարանքը շատ ավելի համեստ է քան շենքերի ներքին զարդարանքը, թեև ներքնամասերի զարդերի առանձին տարրերն են, որ փոխադրված



Ն կ ա ռ 15.—Սանահին: Գրատան նախասրահի հարավային ճակատի լուսամուտը:



Ն կ ա ռ 16.—Նոր Գետիկ: Գրատան ծածկի մի մասը:

են ճակատների վրա: Ծենքերի անկյունները նուրբ քանդակներով զարդարված իրար հետ ոլորված գեղեցիկ սյուների տեսք ունեն: Մեկ մետր բարձրության վրա հարավային և արևելյան պատերը գրկող կիսագլանը, ասես բարե պարան լինի, որը արևելյան ճակատի պատուհանի շուրջը խալի ձև է ստանում: Մեծ չափերը, պրոֆիլների բնույթը և պորտալի սյուների հեռանկարային դասավորությունը, արեգակի լուսավորության ժամանակ բավական մեծ տպավորություն են գործում, այդ պատճառով էլ այստեղ չեն կիրառված մանր զարդաքանդակներ: Հետագայում արևելյան պատի մեջ զետեղված կրոնշտեյնների զարդաքանդակը թեև իր մեջ ունի ԺԳ դարում տարածված եռատերևը, այնուամենայնիվ իր ընդհանուր բնույթով համաձայնեցված է ներքնամասի քանդակների հետ:

Գրատան առջևում տեղավորված սրահի հարավային ճակատի կոմպոզիցիայի և զարդարանքի մշակման վրա մեծ ազդեցություն են գործել հարակից շենքերը (նկար 14): Սրահի ներքնամասը բավականաչափ լուսավոր է և երկկամար անցումի երկու կողմերում գտնվող պատուհանների կարիքն ամենևին չկար: Դրանք հարկավոր են միայն հարևան շենքերի հետ կապելու համար, որն արտացոլվել է նրանց չափերի, ձևի և շրջանակի ձևավորման մեջ: Պատուհանները սրահի ներսի կողմից չափերով հավասար են իրար, իսկ

զրաից նրանք խիստ տարբերվում են իրարից: Ս. Գրիգոր եկեղեցուն մոտ պատուհանը նման է այդ եկեղեցու պատուհանին: Այդ մի փոքրիկ բացվածք է, որ վերևից շրջանակված է կամարաղեղով, որի հորիզոնական հատվածներում տեղավորված են գլուխները իրար դարձրած աղավաղներ (նկար 15): Նրանից խիստ տարբերվում է մյուս, չափերով բավական մեծ պատուհանը, որն ամբողջ բարձրությամբ խոշոր պրոֆիլավորված պատի մեջ սուզված, շրջանակ ունի: Այդպիսի կոմպոզիցիան պայմանավորված էր դամբարանի հարևանությամբ, որն իրենից ներկայացնում է երկկամարանի բաց նախազավթ: Պատուհանը հանդիսացել է դամբարանի լայն և ցածր կամարային տարածություններն ու սրահի բարձր կամարային տարածություններն իրար հետ կապող օղակ: Ճարտարապետին հաջողվել է ոչ միայն իրար հետ ձուլել սրահի հարավային ճակատը տարբեր ոճ ունեցող շենքերի հետ, այլև որոշակի միասնություն ստեղծել ճարտարապետական անսամբլի հետ:

Նոր Գետիկի գրատունը քանդակազարդեր գրեթե չունի: Նրա որմնասյուները տարբեր են: Արևելյան և արևմտյան կողմում նրանց ճակատները կիսակլոր ձև ունեն, իսկ հյուսիսային և հարավային հենարանները՝ երկու կողմանի են, բարձրությամբ ակոսված փոքրիկ ակոսներով: Նրանք խառիսխ չունեն, իսկ



Նկար 17.— Հաղրատ: Գրատան ներքնամասի մի հատվածը:

խոյակների փոխարեն դրված են հատուկ սալեր, որոնց ներքին անկյունների տաշվածքները եռատերև քանդակներ ունեն:

Հասարակ լուծում ունի նաև դահլիճի ծածկը: Կամարների հատման տեղում կան ողորկ զնդիրներ, իսկ բեկված կողմերի վրա, վերելում և ներքևում, ունի համեստ պրոֆիլով գոտիներ, ահա կենտրոնական մասի ամբողջ ղարդարանքը (նկար 16): Ավելի հարուստ ձևավորում ունեն անկյունային մասերի ծածկերը: Նրանք ձևավորված են տարրեր ձևի և մեծության եռանկյունիներով, որոնք իրենց դասավորությամբ կազմում են իրար վրա դարսված ութթևանի աստղեր և ութանկյուն բաղաձայնիկներ:

Գրեթե նույն ձևավորումն ունի Հաղբատի գրատունը (նկար 17): Որմնասյուները միատեսակ են, նրանց խարիսխները նման են խոյակներին: Նույն ձևի որմնասյուներ կան և սրահում (նկար 18): Որմնախորշերը հարթ են և ունեն պրոֆիլացված իմպոստներ: Համեմատաբար հարուստ է վրանը: Նա ունի հարթ և ուղիղ կողմեր: Հիմքը շրջանակված է երեք շարք եռանկյունի ատամներով, որոնց վերևում տեղավորված են շրջանակներով և զնդերով զարդարված եռանկյունի սալեր: Այդ սալերը կողմերում դրված են ուղղահայաց, իսկ անկյուններում՝ թեքությամբ, զազաթով ներքև, որով և քառակուսի հատակագծից անցում է ստեղծվում զեպի վրանի ութանկյուն հիմքը:

Սաղմոսավանքի գրատան որմնասյուները գրեթե նույնպիսի ճարտարապետական ձև ունեն, ինչպիսին ունեն Հաղբատի որմնասյուները: Ամենից հարուստ ձևավորում ունի ծածկը, որին, ըստ երևույթին, ճարտարապետը մեծ նշանակություն է տվել (նկար 19):


Վրանի հիմքը նստած է բարդ պրոֆիլ ունեցող քիվի վրա: Անցումը զեպի ութանկյունը, ինչպես և Համադասպի շենքում Հաղբատում, կատարված է կոնսոլների օգնությամբ, որոնք ներքևում ձևավորված են զանազան ձևի եռատերև քանդակներով, որոնք յուրօրինակ կոնքեր և թաղեր են կազմում:

Դրանցից վեր, ութ անկյունների վրա գտնվում են կորդակը փոքրիկ կամարներից և եռատերևներից կազմված գոտիները, որոնց շնորհիվ անցում է կատարվում զեպի կլոր գմբեթը: Գմբեթի ներսում, փոքրիկ կամարներից վեր, կա երկտող մի արձանագրություն խոշոր տառերով, որը լրացնում է ծածկի դեկորատիվ զարդարանքը:

Մածկի թևերի մասերի հարթ մակերեսները ծածկված են երկրաչափական հյուսածո քանդակներով, ձևով տարբեր՝ հինգթևանի և ութթևանի աստղերով, եռանկյունիներով և ութանկյուն-բաղաձայնիկներով: Բեմի կոնքից վեր, պատի վրա, կա ծագող արևի բարձրաքանդակը, իսկ կոնքին կից կամարի թաղազազաթի վրա՝ կան հրեշտակի և թևերը կիսարաց ճանկերում գտնուած արժիվի բարձրաքանդակներ:



Նկար 18.—Հաղբատ: Նախասրահի հյուսիսային թևի ներքնամասը:



Նկար 19.—Սաղմոսավանք: Գրատան ծածկի մի մասը:

Ինչպես երևում է, ճարտարապետին չեն բավարարել Սաղմոսավանքի գրատան ծածկի տարբեր ձևերն ու մանրամասնությունները, այդ պատճառով էլ նա դիմել է նաև գունալի ձևավորման: Ծածկի առանձին մասերը ոչ միայն շարված են կարմիր և սև քարերով, այլև ներկված են կարմիր, ճերմակ ու դեղին ներկով, որը ներքնամասին հեքիաթային շուրջ է տալիս:

Ոչ պակաս յուրօրինակ լուծում ունի գրատան արտաքինը: Արևմտյան գլխավոր ճակատն ավելի շեշտելու նկատառումով, արևելյան և հարավային ճակատները շատ համեստ զարդարանքներ ունեն, որոնք բաղկացած են պատուհանների նրբորեն պրոֆիլացված երեսակալներից, հասարակ քիվերից և անկյունների գլաններից: Արևմտյան ճակատը զարդարված է իրար վրա տեղավորված խոշոր, բարձրաքանդակ խաչերով, որոնցից հատկապես աչքի է ընկնում ներքևի խաչը: Նա շրջապատում է պատուհանի խաչաձև բացվածքը, որի շուրջը քանդակված են առյուծի, տարբեր դիրքերում գտնվող աղավաղների պատկերներ և երկրաչափական հյուսվածք ունեցող վարդակներ: Ծակատի տարբեր մասերում զետեղված են խաչքարեր, որոնցից մի քանիսը՝ կամարաձև որմնախորշերում, ինչպես նաև փորագրված են բազմաթիվ խաչեր, որոնց մի մասը պատկանում է ուշ ժամանակի: Ավելի ուշ ժամանակի է պատկանում նաև մուտքի պորտալը: Ինքը դուռը զարդարանք չունի, քանի որ տեղավորված էր սրահի ներսում:

Միջնադարյան Հայաստանի այս դպրոցները և գրատները վկայում են ոչ միայն երկրի ճարտարապետության բարձր վերելքի մասին, այլև բնորոշ են մշակույթի ընդհանուր զարգացման հետ ունեցած բազմակողմանի կապերով, մշակույթ, որը կյանքի կոչեց ճարտարապետությանը հարուստ, չափերով նշանակալից և յուրօրինակ այդ կառույցները: Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում, դպրոցներն ու գրատները գտնվում էին վանքերին կից: Այդ իսկ պատճառով, նրանք կազմել են վանքերի ճարտարապետական անսամբլի բաղկացուցիչ մասը, այն լրացնելով և հարստացնելով իրենց արտահայտիչ և յուրահատուկ ճարտարապետական ձևերով:



Հ. ԴԱՎԹՅԱՆ

ԺԶ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՓԱՅՏԱԳԻՐ (ՔՍԻՆՈԳՐԱՖ) ԲՆԱԳՐԵՐՈՎ ՄԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ


Հայտնի է, որ տպագրության գյուտից առաջ, նախքան շարժական տառերով գրքեր տպագրելը, գոյություն ունեին գրքերը բազմացնելու մի ավելի պարզ միջոց՝ փայտագրության եղանակը: Բնագիրը փորագրվում էր համապատասխան չափի տախտակների վրա, ապա արտատպվում թղթի վրա: Որևէ գրքից մի քանի օրինակ ձեռագիր ընդօրինակելուց շատ ավելի դյուրին էր այդ, քանի որ միևնույն տախտակից կարելի էր ստանալ տասնյակ օրինակներ: Մեզ են հասել ԺԶ դարի առաջին կեսերում փայտագրությամբ տպված ավելի քան 30 անուն, գլխավորապես լատիններեն գրքեր:

Նվրուպայում տպագրության գյուտը շուտով դուրս մղեց գրատպության այդ ձևը: Փայտագրությունը հարյուրամյակների կյանք ունեցավ միմիայն Չինաստանում, ուր այն սկիզբ էր առել Թ դարից էլ առաջ և լայնորեն կիրառվում էր մինչև ԺԹ դարի առաջին քսանամյակը: Ի վերջո, սակայն, այնտեղ ևս հիմնականում գործածությունից հանվեց:

Գոտեմբերգի գյուտից հետո, փայտի վրա փորագրելու միջոցով էին արվում միայն գրքերում զետեղված պատկերները, գլխազարդերը, վերջնազարդերը և դրանց վրա հանդիպող մակագրությունները:

Կա՞ն արդյոք փայտագրությամբ տպագրված հայերեն գրքեր:

¹ Մեզ հասած չինարեն առաջին փայտափոր գիրքը 868 թվականն է կրում, իսկ շարժական տառերով չինարեն առաջին գիրքը տպագրվել է 1819 թվականին:



1596 թվականին Փարիզում տպված հայերեն փայտագիր բնագրերով լատիններեն գրքի անվանաթերթը

ազաւ Թք Կիրակէի

Հայր մեր որ յերկինսդ ես. նք եղեցի անունքդ
 Էկեցի արքայու Թի քո. եղեցի Կամք քո.
 Ոպ յերկինս և յերկրի զհաց մեր հանազորդ
 տուր մեզ այսաւ ր՝ և Թող մեր զպարտամեր
 որպէս. և մէք Թողումք մերոց պարտաւյան
 աց. և մե տասր զմեզ ի փորձու Թի. այլ իրկեա՛
 լմեզ ի չարե. զի քոէ՝ արքայու Թի զօրոքի.
 և փառք յաւիտեանս յաւիտեանից ամէ—Ն:

1596 թվականին Փարիզում տպված գրքի 78-րդ էջի Ռայերեն փայտագիր «Հայր մեր»-ը

Անցյալում կարծիքներ են հայտնվել, թե 1512—1513 թվականներին Հակոբ Մեղապարտի տպագրած գրքերը ոչ թե շարժական տառերով, այլ փայտագիր են եղել: Սակայն հետազոտում այդ կարծիքը հիմնովին հերքվեց², ենթադրվում է նաև, որ 1567 թվականին Աբգար Դպրի տպագրություն համարվող «Փոքր բերականութիւն»-ը տպվել է փայտագիր տախտակների միջոցով, կնքագիր (կնիքներ փորող—Հ. Դ.) Հոթորի ձեռքով, դեռևս Աբգարի Կոստանդնուպոլիս գալուց առաջ³: Այս ենթադրության օգտին խոսող փաստերից մեկն էլ այն է, թե այդ գրքից այնքան քիչ է տպվել, որ մինչև օրս որևէ օրինակ չի գտնված: Քանի որ գիրքը հայտնաբերված չէ, առաջիմ անհնար է հաստատ խոսք ասել: Ուրեմն, մինչև այժմ հայերեն փայտագիր որևէ գիրք կամ առանձին հատված հայտնի չէր: Վերջերս մեր ձեռքն ընկավ Երևանի պե-

տական հանրային գրադարանի եվրոպական հնատիպ ֆոնդերում պահվող ԺԶ դարի լատիներեն մի հրատարակություն, որն ուղագրով է թե՛ իբրև հայոց լեզվին նվիրված, հայագիտական ուսումնասիրություն և թե՛ նրա մեջ եղած հայերեն փայտագիր բնագրերով: Հրատարակվել է 1596 թվականին, Փարիզում, և կոչվում է «Paradigmata de quatuor linguis orientalibus praecipuis» («Նմուշներ արևելյան չորս հիմնական լեզուներից») (նկար 1):

Ինչպես երևում է անվանաթերթից, գիրքը նվիրված է հնագույն չորս լեզուների՝ արաբերենի, հայերենի, արամեական լեզվի (սիրիական) և եթովպերենի ուսումնասիրությանը: 196 էջանոց այս գրքում հայերենին հատկացված է բավականին մեծ տեղ: Բացի նրանից, որ սկզբում այլ լեզուների հետ խոսվում է նաև հայերենի մասին, ամբողջովին հայերենին է նվիրված 67 էջ (59—126 էջերը):

Ահա այս աշխատության սկզբի 8-րդ չհամարակալված էջում գետնիված է «Rhythmus Armenicus» վերնագրով մի հայերեն ոտավոր, իսկ 78-րդ էջում՝ «Հայր մեր»-ը (նկար 2):

² Այդ առթիվ տե՛ս Գ. Լեոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 46—48:

³ Ա. Ալպոյաճեան, «Տպագրության արվեստ և հայեր», «Արոր», 1913, գիրք Ա, էջ 38:

Հիշյալ երկու բնագրերն էլ ոչ թե շարված են շարժական տառերով, այլ փորագրություններ են, այսինքն տպված են փորագիր տախտակների միջոցով: Այդ հաստատվում է հետևյալ երկու հիմնական հատկանիշերով.

ա. Ուշագիր ղննելիս անմիջապես նկատվում է, որ նույնանուն տառերը նույնանման չեն: Մինչդեռ շարժական տառերով տպագրություններում, օրինակ, միևնույն գլխագրերը կամ բոլորագրերը անպայման նման են միմյանց:

բ. Նույն տառատեսակին (գարնիտուր) պատկանող տպագրական տառերը իրենց լայնքով, բարձրությամբ համաչափ են, այլապես տպագրություն չի ստացվի, իսկ ներկա դեպքում որոշ տառեր բարձր են, մյուսները ունեն ձեռագրանման երկար պոչեր և այլն:

Ուշագրավ է դրբի սկզբում բերված միջնագրայան տաղերգուների նմանողությունը (խմիտացիա) կառուցված հետևյալ ոտանափորը.

Ալ ստուա յժ գթած և ողորմած ունին դնէ
իւր ծառային.

Ով հաւատայ տղիդ սրտիւ նայ կատարէ
զիւր խնդրելին.

Ղվ որ խնդրէ որ տեսանէ և գիտանայ
դբանքն իրաւին.

Արուեստ առնէ զգիրքն ալ ստուա յժ ալին
և զունկն դնէ վարդ ալ պլ ետ յին.

Թէպէտ բանքն աստուծովորիս ուր յալ էս
երազը կու անցանին.

Այլ ոչ պիտու է ի բուն լինել ալ պիտու է
զիրան երազին.

Կամեցեալ բան մի ասել թէպէտ սիրելիքն
իմ լսէին.

Իմաստութիւն] հայելին հային թէ ինչ
գեղեցիկ պատկերք տեսանին.


Ով Թումանյան մտացդ դուռն ի բաց արայ
որ [ի]մաստութիւն]բ մտանին.

Որ սրտին դուռն [ի]մաստութիւն]բ ի
բաց անէ ամէն մարդ զինք հաւանին:

Թե սույն ոտանափորում հիշատակվող Թումանյանը ո՛վ է և ի՛նչ մասնակցություն է ունեցել դրբի հայերեն բաժինների հեղինակման հարցում, առայժմ հայտնի չէ: Ակնհիշ է մի բան, որ Փարիզի առաջին հայերեն հրատարակությունը ոչ թե 1633 թվականին լույս տեսած Ֆրանցիսկո Ռիվոլայի «Բառագիրք Հայոց» խորագրով հայ-լատիներեն բառարանն է, ինչպես համարվել է մինչև այժմ, այլ դրանից մոտ չորս տասնամյակ առաջ տպագրված սույն լեզվաբանական աշխատությունը:

Այսպիսով, մեր մատենագիտության մեջ հայտնի մինչև 1596 թվականը լույս տեսած օտարալեզու, բայց հայերեն բնագրերով չորս գրքերի⁴ կողքին ավելանում է ևս մեկը՝ հայագիտության և հայ տպագրության պատմության համար արժեքավոր այս «նմուշներ»-ը:

⁴ Այդ գրքերի նկարագրությունները տե՛ս 1963 թվականին Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի հրատարակած «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ի 6, 7, 17 և 19 համարների տակ:



ԲԱԶՄԱՎԷՊ*

17ա

(Ընդհատված ձեռագիրը ապա շարունակվում է)։

|| 1833 թուական

Անկրկմիտ գրով, թէ Նորին Վեհափառ Օծուքիւն ըստ խնդրոյ իմոյ արձակեցէ զմեզ, ես հայցեմ ի ձեռն յատանայն ձեր զհրաման ի կաթողիկոսէն զալ ի Քա- նաքեռ, ուր գնամ ես այսօր, իսկապէս հաւատարիմս առնեմ զձեր հայրութեան անսուտ բանիւ կուսակալի, թէ աշխատութեամբ ձեր, զոր ցուցանէք վասն որդանն կարմրոյ, պսակեցիք։ Արժանապէս կատարեալ վերա- պատուութեամբ մնամ Զեր Սրբազնութեան, ողորմած Տէր, խոնարհ ծառա, կենազ Վասիլի Բեհբուզով, ի 14 յունիսի, 1833, Երեւան։

Ըստ այսմ գրոյ առաքեաց զիս Նորին Սրբազան Օծու- քիւն առ Նորին պայծառափայլութիւնն ի Քանաքեռ, որ մինչ ներկայացայ, ասաց՝ հրաման է Նորին բարձր զե- րազանցութեան ըստ ժամանակին զնաս զտեղի որդանցն յազազս ժողովելոյ և ես գրեմ, ասաց, մօլրովներին հրաման, որքան մարդ որ հարկաւոր է վասն ժողովելոյ որդան կարմրոյ, տան քեզ օգնութիւն և ինչ ինչ խարճ որ լինի, մօլրովն հողասցէ. յանձնառու եղէ կատարել զհրամանն Նորին և մինչ արձակեաց զիս զալ յԱթոռս, ասաց՝ 3 փութ որդն կամիմ տաս. ես համեմտութեամբ ասացի՝ տուղն Աստուած է. և մինչ պայմանեալ ժա- մանակն եհաս մեզ առ ի գնալ անդոր, խնդրեցի որ գնամ ի խոր Վիրապ նստեմ և ոչ մնամ ի մէջ թուր- քարեակ զիդեղ. կամեցաւ լինիլ այնպէս, որ և գնացի ըստ ժամանակին։

Օգոստոսի 20-ին գնացի Երեւան, ներկայացայ Նորին պայծառափայլութեանն, կրկին յիշեցի վասն 3 փութ

որդն խնդրելոյ թէ՛ շո՞րն կամիս 3 փութ լինել, թէ՛ կենդանին. յերբ շորացեալն ասաց, մնացի տարակոյս, ըստ որում այնքան և Նորա կիսոյ չափ չէի ևս ժողո- վեալ. ինչ և իցէ՝ յանձն առի զաշխատութիւնն յուսալով Աստուած, գնացի, որ և յաջողեցաւ մեզ զայն գործն. ընդ յաջողելոյն Աստուծոյ զտի 3 փութ շորացուցեալ. ըստ եղանակի գրութեան նոցին, մեռուցի զկենդանի որդն անուշահամ ըմպելի եռացեալ ջրով և ապա սփռեալ յարեռ ի վերայ կտաւուց շորացան թէպէտ, բայց իւրն նոցա արտաքս թորէր, ուր դնեաք տօպրակով, իբր ջուր թրջէին զտեղն, և այլն։

Ի գնալս և ի վերադառնալս անդրէն, զինչ ծախս որ արարեալ էի, ոչ առի պրաւօն⁵¹, այլ միայն ծառային իմոյ վարձն տուաւ 2 թուման 3 ռ. և մինչ վերադարձայ Երեւալ Երեւան յանձնեցի 3 փութ շորացեալ որդն Նորին պայծառափայլութեանն, ընկալաւ ուրախութեամբ շնոր- հակալ լինելով, վասն որոյ խնդրեցի ամենատա⁵² վասն ծառայութեան, տուաւ յօժարութեամբ, թարգմանութեամբ հանգեքձ, համար 3380։

Նախ քան պայմանեալ ժամանակն ևս գրեաց մեզ այնմ թուոյ գնալ առ պարօն Ֆօն Բէնտլէն խնդիր առ մեզ ըստ հրամանի Նորին բարձր զերազանցութեանն և հրա- մանի առ Նորն պարօն Ֆօն Բէնտլէն, համար 1941, 19 հուլիսի 1833, Դարաշիշակու։

|| 1834

Մինչ Նորին պայծառափայլութիւնն գնաց ի Տփլիս քաղաքն և մատուցեալ էր 3 փութ որդն շորացեալ, ես ինքն ընկալեալ էր շատ զոհոնակութեամբ, կուսա- կալն կովկասեան գետի, վասն որոյ ձեռամբ Նորին պայ- ծառափայլութեանն յղեալ էր մեզ 1834 ամի. մարտ 28.

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1963 թվակա- նի № ԺԲ-ից և 1964 թվականի № Ա-ից։

⁵¹ Իրավունք, հասանելիք։— ⁵² Վկայական։

զյգեալն նորին բարձր գերազանցութեան ամատիստ ախար ազամանդեայ մեծագոր մատանին ի վայելս մեր, որոյ վասն մեծ գոհունակութեամբ օրհնեցին երկրորդն սրբազան հայրապետքն նորին բարձր գերազանցութեանը և նորին պայծառափայլութիւնը. եւ, խոհաբ՛ ծառայ նոցանց, եւ շնորհակալութեամբ զիր գրեցի առ նոսա:

Օրինակ նորին բարձր գերազանցութեան գրոյն առ իս այս է:

1834, մարտի 7, որում գրէ այսպէս.

Գերապատիւ Իսահակ եպիսկոպոս.

Կառավարիչն Հայոց նահանգի ղեկեւր մայիօր կնիազ Բեհրուդին ծանոյց ինձ բազմավաստակ աշխատանքն ձեր ի ժողովելն ձեր զորքն կարմիր, որ գտանի ի նահանգի Հայոց. ախորժելի պարտ անձին համարելով զգոհունակութեամբ իմ մատուցանել ձեզ վասն այսորիկ, ի նշան կատարելալ երախտագիտութեան իմոյ առ ձեզ յաղագս աշխատանաց ձերոց, ամենախոնարհարար խնդրեմ ընդունել զազամանդեայ մատանին ամատիստ ախար, զոր առաքեմ ընդ այսմ յուսալով, զի դուք և զկնի այսորիկ ոչ թողջիք զորձակից լինել ըստ այսմ գործոյ բազմաօգուտ աշխատանք ձերովք, պատիւ ունիմ անսուտ յարգանք և անձնընծայութեամբ մնալ ամենախոնարհ ծառայ բարոն Գրիգորի Բողեն. Նո 1348 ի Յիֆլիդ, Հայոց եպիսկոպոսին Իսահակայ (օրինակ հասցէին է այս): Էջմիածին:

Պատասխանի գրութեան նորին բարձր գերազանցութեան մեր կողմանէն գրեալ էր ըստ խնդրոյ իմոյ նորին պայծառափայլութեան հրամանովն պարոն Ղազեն և նորին գրովն ղեկեւրալի ստացայ և յղեցի 1834 մայիսի 20 առ նորին բարձր գերազանցութեամբ համար 47 ընդ նաղիկովին:

Այսմ թուոյ 22 յունիսի 1834, համար 5477, նորին պայծառափայլութեան գրեաց առ մեզ յերկարօրէն, թէ այսմ ամի առանել ևս ջանադիր լնր որ շատ ժողովես: Վասն ծովացեալ մեղաց իմոց երաշտ դուրով ոչ կարացաք աւելի ժողովել, որպէս անցեալ ամին, որ անձրեւային ժամանակին բնաւ չին դուրս գալ ի բունտոյ: Մտքը նաչի նաակատիկնոց օրն սկսաւ զայ անձրեւն, տեկաց մինչև 4 օր, մնացինք անգործ մեք և մշակքն:

Մէկ փութ և կէս հազիւ եղև. և մինչ ժամանակն է՛ր ժողովելոյ, ղեկեւրայն դնացեալ էր ի Յիֆլիդ և մեր կառավարութեան յանձնեալ էր Շօպէն մայօրին և նա՛ մինչ լուաւ, թէ նորին բարձր գերազանցութեան զալու է ի Հայաստան, քաղաքն Երեւան, պաշարում է վասն կառավարութեան և մեզ մոռացաւ. երբեմն փոխանակ օգնելոյ, զանազան նորին էր պահանջում յինէն. ալն, սպիտակն ՝ որձն, ձուն, իւր սէզն հողով, յաղաքս այսպիսեաց ևս տարակուսելի եղև մեզ, առանել ևս՝ անձրեւն խափանեաց և ժամանակն է՛նաց: Վասն որոյ ամօթաբար եղէ՛, ամէն բանք մեծաւորաց դէմն ասելն չի լինում. և այնպէս են կարծում, թէ չեմք հետեւիլ:

Նախ քան զժամանակն որդանք յայնեւոյն ի բնոյ, ընդ հոր Վիրապայ առաջնորդ Սիմէօն վարդապետին և ընդ թարգման Առլանովին գնացի յայնկոյս Նրանսիայ, յաղագս տեսանելոյ անդ ևս զտեղի որդանցն, որ և մինչ անցաք Նրանսի գետն դժուարութեամբ, որ ինձ համար շատ դժուարին է այնպիսի գետերն ձիով անցանելն.

տեսի յեղերսն դեռոյ անդ, որքան բաւ է տեսնել աշաց, է զտեղի որդանցն կարմրոյ յոյժ յոյժ բազմութեամբ: Զկնի երկու աւուրց դարձաք յետս ասովնաս, և եկեալ ժամանեցաք ի սուրբ վասն հոր Վիրապայ և սկսաք ժողովել հրամանաւ պարոն Ֆօն Բլենտէլին զմշական, օր աւուր սկսան ժողովել. մշակքն ի հեռաստանէն եկեալ, շատն ձերք էին և երեխայք, որ նոցա բանն չէ այն. կտրել մարդոց, մանաւանդ տեղւոյ բնակիչ կանանց բուն է, որ իբրև զմանուշակ կամ որպէս զբանձար հետեւամբ ժողովն, երեխայքն խաղով անցուցին, ձերքն հազիւ զնան տեղի գտանելոյ և կտրեալքն տրտնջալով աստ և անդ հազիւ հազ ոմն 2 դրամ, ոմն 4, 5, 8, 10, 12 դրամ հաղով հազ կարեն ժողովել և ոչ աւելի. մին հատ տղայ հնգետան ամաց ամէն օր ժողովի 14 կամ 16 դրամ. եթէ նրա նման ժողովէին ամենեքեանն, 10 փութ կարամ ասել թէ կարէին ժողովել:

Ի հեռաստանէն եկեալ մշակքն զուր անցուցանեն ժամանակն տրտնջալով և լաւ չէ որ իրեանց բանիցն և զործիցն յետ են մնում. և շատ մեղք է նրանց բերին. լաւ դարաթով մարդն մէկ խտրի չէ կարելի որ ժողովի: 2—3 հողով որ ախատեն, հազիւ կարեն ժողովել մին իստիլ և այն շատ դժուարութեամբ, ընդ որում, որպէս այն, մինչ կլանէ ի բունտ ի ծագման արեւուն մինչև 3 սճաթ մնան յերես գետնոյն և ապա կորնչեն, որ մին հատ գեղի համար չեն կարող գտանել որ արեն տարանալ. ոմանց մըշիւնն, ոմանց թոշունն տանեն, ոմանք ոտեսակոխ լինին ի պաճարեղիսաց որ անդ տանեն արօտ և այսպէս փշանան և կորնչեն. ասացի թէ անձրեւ դայ բնաւ չերին, քանի որ դեռտին թաց է, որոյ փորձն բազում անգամ առեալ եմ:

Թէ լսեն ինձ վասն մշակացն նորին, որ ժողովը ժողովրդոց մեծ բազմութեամբ ժողովում են զուր տեղի. չէ օգուտ նորին տէրութեան, այլ այս է օգուտն զոր են վասն նորա տնօրինեցի և տնօրինեմ. այն զիւղն, որ գտանի որդն, նորա զիւղացուն այն ամսոյն ազատութիւն տան թագաւորական հարկէն և հրամայեն նոցա տունն որ 10 հոգի ՝ աւելի լինեն, նոքա տան 3 կամ 4 խտիլ, այն որ 7 կամ 8 հոգիք լինին, նրանք տան 3 խտիլ. այսպէս ջամ աննելով որ ժողովեն, տես թէ քանի՞ օգուտ լինի տէրութեան և ժողովրդոյն. առանել նոցա, որք ի հեռաստանէ գան և ժողովն բնաւ, այլ ըստ հարկի պահանջման ասեն, թէ մեք այսքան այսքան մշակք տուաք այս ինչ ժամանակի որ շատ ծանր է և զուր նոցա զալն ի հեռուտեմն:

Սույն դիտմամբս օգուտ համարելով, գրեալ եմ նորին պայծառափայլութեանն և նորին գերազանցութեանն ևս. փոխանակ պատասխանի շնորհակալութեան ի նոցանէ ոչ ընկալայ մինչև ցարդ, այլ ոմն ի մեր ազգէ, մինչ եկն աստ ի Յիֆլիդու, աստ և անդ ցանեաց այս բանն թէ՛ ամէն մարդ կուսակալ է ճանաչում և գիրէ գորում. զինչ փրաս գոյհաստ, որ ասացի այս դիտաւորութեամբն գրեալ եմ նորին բարձր գերազանցութեանն, որ բաժնաւ են ինձ թէ՛ ամեն մարդ կուսակալ է ճանաչում: որովհետեւ նորին բարձր գերազանցութեանն գրեալ է: Եւ առ իս շնորհակալութեան ընդ ազամանեանց՝ ամատիստ ախար մատանոյն վասն որոյ և եմ վստահացայ և

կամեցայ օգուտ տնտեսական ծանուցանել նորին բարձր գերազանցությունները:

Համարեցէք ինձ և նման պարոն Յովսէփ Տուպու-վին, որպէս նա տալ ծանօթութիւն ըստ մտաց իւրոյ օգուտ տնտեսական, նշանակէ և ես կամեցայ տալ օգուտ որպէս գրեալ եմ. եթէ տեղիք տալին այսմ բանիցս, առաւել ևս ծագումն լինելոյ մտացս այսպիսի օգտաւէտ բանք, որ յայտնի են բազմաց սրբազնագունից և վեհագունից ծառայութիւնս զանազան:

Խոստմունքս վասն նոր ի նորոյ յառաջ ածել և ի լոյս ընծայել զանազան բանք, որ ոչինչ համարեն այսպիսի ծառայութիւնս:

Ասացէք ինձ, թէ ամէն Երոպա և հօր տնտեսութիւնք որ պայծառ անուն ունեն, ուստի՞ է պայծառութիւնք նոցա. ո՞չ ապացէն արհեստաւորք են, որ զանազան հնարս գործածեն, իւրաքանչիւր քաղաքի գործաւորքն, իւրաքանչիւր տէրանք. ես ըստ իմ տկար կարեաց ոչ խնայեցի աղքատ քսակին իմոյ և ոչ խնայեմ բնաւ յաղաքս զանազան բանիցն ծախուց փորձելոյ և զհնարն գտանելոյ, որ Սրբոյն Աթոռոյս և զահալալի սորին և սրբազան սինօթի անունն, եղչիրն բարձր առնեմ. թէ ինձ ոչ լինեն կամակից և օգնական, ո՞վ է այն, որ զուր տեղն խմսախանայ՝ իւր քսակին վնաս տայ, եթէ մինն ոչ կորուսանեմք, տասն ուստի՞ գտանեմք:

19

|| Այո, կորուսանել հարկաւոր է մինն վասն տասին, որ մինչ որոնես միոյն, գտանես տասն ի միասին:

Այնմ ժամանակին, որ նոր էի ուսեալ քաղաքի լա-չիարդն, Երեւանու պղնձահանքի վերակացու Ղազար ոմն օրհնեալ, որոյ հոգին Տէրն լուսաւորեցեց, հետու նմա նշան լաչիարդի քար փորք. նրա նմանութեամբ թէպէտ եզիտ, ոչ էր այնքան ազնիւն, բայց փորձ նորա բազում անգամ զանազան կիրպիւ առի և տեսի մի և նոյն բանն առնէր ի գործ արկանելս, վասն այն ետու նմա մին թուման, մին շախու և մին մահրամայ ծաղկեալ, ողորմութեամբն Աստուծոյ, որքան մինչև ցգնալն մեր ի Հաղբատ ունէի ի նմանէ և անդ ևս որոնեցի և գտի դրամով իմով և այն, որոյ պակասութիւնն ոչ կրեցի:

1818 ամին Առաքել եպիսկոպոս ոմն ի Քէթիւրտաղու, եկն աստ վասն եպիսկոպոսութեան. նա խնդրեաց յինն 100 դրամ լաչիարդ, որ թէ կամենայի կարօղ էի տալ կէսն, բայց ոչ ետու այնքան, կարծելով, թէ վասն թանկագին լինելոյն ոչ առնէ. խոստացայ տալ 10 դրամ, որ ետու նմա, դրամն 5 ռեալի. տես դու աստ, եթէ մինն ոչ կորուսանէի, զի՞րդ կարէի գտանել այնքան ռեալն, որ շատ փողման եղէ նրա ուզածն չի տուի և մինչ տարեալ մատուցի նմա, մին քիսայ զանշիրլու ռուբիայթ թափեաց առաջիս, աչքերս բաց մնաց, որ չէի տեսեալ և շատ փողման եմ մինչև ցայժմ. այս քանս վասն միոյ կորուսանելոյն և բազումն գտանելոյ գրեցի օգտասէր և շահասէր ընթերցողացդ, ի ծանօթութիւն և ի խմսատութիւն և այլն:

Նոյն մատանի քարանց միջին գտի առաւել հազուագիտ և թանկագին քար մի, որում դահնա Ֆրանկի ասեն. գիրք մի ևս գտի, որում գրուալ էր արարողութիւնն ու փորձառութիւնն դահնային, յորմէ օգուտ ևս գտի բազում անգամ, կարօտելոցն առանց խնայելու ետու ի փառս Աստուծոյ, որ այժմ լուծիմ բնաւի:

1822 ամին ընդ լուսահոգի սրբազան Տեառն մերոյ Եփրեմայ օծելոյն Աստուծոյ և հոգեւոր ծնողին իմոյ մտաց ի Յնիսաւնտուպօլ քաղաքն. գտի անդ ևս քար մի, որոյ անունն ըստ պատմութեան Առաքել պատմագրին, էրամահի և ըստ աշխարհի լեզուաւ, լերդա-քար ասեն և նոյն քարին հնտ սկազոյն քար մի ևս ելանէ, նոյն բնութեամբ որոյ անունն եղի հանքային մեկան, որ լաւ գիր գրէ իբրև թանաք, մինչ չըրով լուսնս ի վերայ կարծր վիմի, որոյ փորձն առեալ եմ և նովաւ գրեալ եմ խնդիր առ հոգեւոր ծնողն իմ օծելոյն Աստուծոյ Տեառն Յովհաննու սրբազնագոյն հայրապետին մերոյ, որոյ Տէր տացէ կեանս խաղաղականս. այսմ բանիս վկայ ևս ապա լուսարար գերապատիւ և աստուածափառ բարձր սրբազնութիւն Բարսեղ Արհիւն, որում ընծայեալ եմ 2 տեսակն ևս 1835 ի գնալն իւր ընդ օծելոյն Աստուծոյ ի Տփլիս:

Այսմ ամի 1834 մայիսի 21-ին Տփլիսայ նորոգ զէտն աստուածափառ բարձր սրբազնութիւն Կարապետ արհիւն եկն ի սենեակն մեր, Բարսեղ արհիւն աւագ եղբայրն մեր, ասաց ինչ ինչ որ ունես բեր տեսնի. զրմզն ու ձու նորին, լաչիարդն և քարն նորա, պատաշն վասն տպարանի գրեանց լուսանալոյ, նշտայն, սոսինձն վասն կցանի և զպլամի ծանկեանն, նաև նոյն քարիցն խամահի՞ն, || որոյ արարողութիւնն թէ յինչ պէտս ունի քարն այն, գրով մատուցի նորին բարձր սրբազնութեան, բայց նա ոչ գտաւ առ իս բարբար, միաբանութեանն դրամ բաժանեաց, ինձ ոչ տուաւ, որ չէր վայել իւր պաշտութեանն. քարի բնութիւնն է այս, ըստ պատմութեան Առաքել պատմագրին թէ՛ ամէն ցեղ ուռոյցի զեղ է, մինչ վարդեջրով լեռուն ի վերայ եսան քարին և քսեն, ուռուցին ցրով և բժշկէ, որոյ փորձն ես առի ի Հաղբատ 1822 թուին. թէ չըրով միայն լուսնս ի վերայ չախմախաքարին որ չուրն կարմրի մին գինւոյ թատով չափ տան այնմ, որ պատահի երկիւղ, ըմպել բանին, տանի երկիւղն 2 և 3 անգամ ըմպելն առաւել օգնէ. զեղնութիւն սխալայ թէ ունենայ որ, սոյնպէս ըմպել տան քանիցս, բժշկէ Աստուծով. օձահարին և կարճահարին շուտով հարեն թքով կարծր քարի վերայ և քսեն, առ ժամայն տանի ցաւն և բժշկութիւն գտանի Աստուծով. փանգահարիցն առաւել է սա գիտողի մօտն, բայց զի՞նչ օգուտ գտանին այսպիսի բանքս, որոյ վասն արժանի է ասել՝ հաստ ու բարակն այ մէկ գին, վայ զայ բարակ մանողին: Թէ սոստ է բանս այս, ոչ, այլ է ստոյգ:

1. 1836 մինչ լուսահոգի Յովհաննէս կաթողիկոս հոգեւոր ծնողն իմ, էր ի Տփլիս քաղաքն, որ ի ժամանակ պարապ մնալոյ, վասն որոյ եղեալ ունէի յառաջագոյն մտացս վասն ծաղկելոյ զՔաղիկոսիս, իբր պլան գտնողի սիգաբեր որդանցն կարմրոյ, ըստ Մովսէսի Խորենացւոյն, որ ասէ՛ զոյ Երեւան որդն սիգաբեր և այլն: Ես ամենախոնարհ ծառայս նոցին վեհապետիցն և օծելոյն Աստուծոյ հայրապետին Տեառն Տեառն Եփրեմայ առաջնոյ հոգեւոր ծնողին իմոյ և երկրորդին՝ Յովհաննու 8-րդ Կարբեցւոյ հոգեւոր ծնողին իմոյ, հարազատ որդի գլով նոցին, որ յատուրն Դաւիթ լուսահոգի կաթողիկոսին ասացի աշակերտեալ եմ ծաղկարարութեան արհեստին, ծառայելով ոսկերիչ, ծաղ-

կանկար և գրազիր Տէր Յովհանն սրբակրօն քահանային և յաւուրսն Գանիէլ սրբազան կաթողիկոսին յառաջին հոգեւոր ծնողէս սկսեալ մինչ ցարդ՝ ծաղկեալ եմ զկոնդակսն, զօրհնութեան թուղթսն, Էկա հասաւինն, և քաշուածքն, հանդերձ ճաճանճան և իր գրով նոցա:

Ասացի և ասեմ բեզ, ով ընթերցողդ յայսմ տետրակիս, լուր և ի միտ առ զամենայն բանսն հանգամանօք: Ի 1836 ամին, ի մեծի պահոց աւուրսն, ի լոյս ընծայեցի զլորենին թաշկինակն զարմանալի միեւնոյն գրութեամբ, որում նկարեալ էի զտեղի սիզաբեր որդանցն կարմրոյ, իրրե զպլան, էր ընդ եզերս նոցա ծաղկաւէտ հաշիայ, և ի մէջն էր Մասիս լեւոն դաշտովն իւրով, որում զլուսն ձինսպատ, նաւն Նոյեան տապանի, ծխածանն աղեղնաձև, զսուրբ աղբիւրն բժշկարար, զստորոտ նորա մեծ գետն Նրասիս, այսկոյնս Նրասիսայ խոր Վիրապն, հանդերձ իւր լեւոնանման բլրօքն և շրջապատ նորա յայսկոյս և յայնկոյնս ևս է Սեւա շուրն, Ծորլու գիւղի հանդն, որ կից է Սարուանլար տաճկարեան գիւղին, սկսեալ աստէն դհա՝ հասիր Իւլայի, Դարդալու, խոր Վիրապ, Դաշլօրլու, Ննջու, Ծարբրու դահնայիցն սկսեալ մինչև ցլարաղալայ լի է յնզր Նրասիսայ յայսկոյս և յայնկոյնս. ևս է ի Բայրամալու, ի Բաշքեանդ և այլն, որ որ աչք մարդոյ բանէ, ընդ ամէն տեղիս լի է, մարդ պէտք է որ կորուսանէ մինն և զտանէ տասն, որպէս ևս կորուսի յառաջագոյն մինն և զտի Աստուծով իմով զվերջին աւուրսն իմ տասն:

|| 1836 ամի Տեառն և ի միջի սորա թիւն 1837:

1. 1836 մարտի 18. Նուիրեցի, ընծայեցի, յղեցի Նորին Վեհափառ Սրբազան Օծութեանն որ էր ի Թիֆլիզ, շատ զօրհնակութեամբ ընկալեալ էր և զբեալ շնորհակալութիւն և ընդ օրհնութեան գրոյն շուխայ մի ևս էր Նուիրեալ մեզ, որ այժմ ունի առ իւր, Գէորգ եպիսկոպոս հոգեւորիկ Նորին Վեհափառութեանն:

2. Մինն ի սոցանէ մի և նոյն պլանն որդան կարմրոյ, նուիրեցի Նորին Բարձր Սրբազանութեան Տեառն Ներսէսի բարեբարին իմոյ ի 1834 ամին, ի մարտի 8, ի ձեռն թշկինան, բարձր արժանապատուութեան խաչափառ Յովսէփ վարդապետ եղբորն իմոյ որ Նորին Վեհափառութիւնն ի 1842 ամն Տեառն օգոստոսի 6-ին գրեալ շնորհակալութիւնն յաղագս թաշկինակին, ստացայ ի սեպտեմբերի 9:

3. Մին հատն ևս նուիրեցի Լեղկաց ծայրագոյն նուիրակ բարձր սրբազանութեան Պօղոս արքեպիսկոպոս հոգեւոր եղբորն մերոյ, յաղագս սիրոյ և վասն զանազան կերպ նկար ի վերայ կտաւոյ և զեփեղն զեղօրէից նորա խընդրեցի որ բերցէ վասն իմ և 6 մսխալ իւղալի դրմզ կտու նորին սուրբ եղբայրութեանն, թէ հարիցէ գտանել անդ իւղահան վարպետ դրմզի, արարողութիւն նորին գրեալ բերցէ վասն մեր. ի վերադառնալն իւր ի Սուրբ Աթոռ 1843 ամին պատմեաց նա վասն թաշկինակին մերոյ որ ընծայեալ էի Նորին հարազատ եղբայրութեանն և ասաց՝ ի ժամանեմն իմ ի Կալիկաթայ, ընծայեցի բարեպաշտ պարոն Յովհաննէս Մեղրում Մանուկին, որ շատ հարգանք ընկալաւ ասէ և յարշիկալով և շուշաբանդով զարարեալ եզ ի տան իւրում և ասաց, համարեցի ալնպէս թէ՛ Սուրբ Աթոռն և նրեան քաղաքն ինձ բաշխեցիր:

Ի սոցանէ մին հատն ևս միեւնոյն ձեռնով որպէս պատմեցի թէ ըզտեղի սիզաբեր որդանցն կարմրոյ, իրրե պլան արարեալ նկարեցի, ընծայեցի յատուկ բարեբարին իմոյ նորին պայծառափայլութեանն տեսնոն Վասիլ կենազ զենեալ մայիօր Յովսէփիլ Բեհրուդովին, որ նա ևս մեծ զօրհնակութեամբ ընկալաւ և նոյն բանն ասաց թէ՛ այնպէս համարեցի, որ Նրեան և Սուրբ Աթոռն ինձ բաշխեցիր. վասն այն ասեմ սմա բարեբար իմ, որ ինքն ընկալաւ զինդիրս վասն մատուցանելուն իմոյ զպարագայսն դրմզի արարողութեան և դրմզն հանդերձ սիզաբեր որդովն, և զձուս նորին, առանձինն և այլն, որ մատուց առաջինն նորին բարձր զեղազանցութեան բարոն Բօզէն կուսակալին կովկասեան զեղին. 1830 և ևս ի ձեռն այսր երկուց զխաւորացն մատուցի նորին կայսերական բարձրութեան 1834 ամի (հոկտեմբերի 5-ն էր նորին կայսեր մեծութեան գալն) կենարարին մերոյ զօթնոցով ի ձեռն ծառային ձերոյ և մերս հարազատ աշակերտ Գէորգ Աղազատովին և ի միջի նոյն բօթնոցին ունէի պատրաստի ապակեայ տուփ մի խնկալի. այս է կենդանի որդն կարմրոյ մաղեալն առանձին և զսիզովն ընդ հողով առանձին, նոյն տիտովն որ 2 աշկանի էի շինել տունալ և զձուս նորին առանձին. և մինչ նորին Վեհափառ Սուրբ Օծութեանն հրամայեաց տանիլ ի սրբազան սինթարանի դռն, մինչ ևլ անդէն կայսեր ամենաողորմածաբար կանգնեաց անդանօր, էր ընդ նորին կայսերական մեծութեան մերձ կանգնեալ պարոն Բօզէն կուսակալ, կաթողիկոսն, սրբազան սինհոդոսը, պայծառափայլ զենեալն, հայք, տաճիկք և քուրդք և ամէն բազմութիւնք շատ, մինչ կտես սուրբ կայսեր զնոր տեսարանն, ուրախ եղև և ի ծոցոյ իմմէ հանեալ զիօշորացոյցն կտու ձեռամբ իմով նորին կայսերական մեծութեան. առեալ ի ձեռանէ իմմէ և նայեցաւ նովա զմանրահատ ձուսն զրմզոյ և ետ ինձ զիօշորացոյցն ասելով զիօշորօշ⁵⁴ 2 անգամ և հրամայեաց իւրոյ ատուութեանդին տանել ընդ իւր, միեւնոյնն որ յառաջագոյն նուիրեալ եմ նորին պայծառափայլութեանն և նա մատուցեալ է Պասկելիին և լետ նորա պարոն Բօզէնին, որ նա ի 1830 նուիրեալ է նորին կայսերական մեծութեանն, որ անունն իմ յայնմ ժամանակին կազնթիւ հրատարակեալ են, որպէս յայտնի է տեսողացն և լսողացն. մինն կորուսի և զտասն ի միասին զտի Աստուծով իմով:

Նորին կայսերական բարձրութիւն մինչ ևլ եկեղեցոյն զնաց... անդէն ուսումնարանն շրջելով առաջի սենեկացն միարանից, ևս կանգնեալ կայի ի մէջ պարտիզին իմոյ, եկեալ կամէր գնալ ներսն Վեհարանն, անդ ևս ունէի մարդ մի ապակեայ յօրինեալ և ի մէջն լի նոյն կենդանի որդ. եցոյց սուրբ տեսնոն մեր նորին կայսերական բարձրութեան, ետես զայն և ապա տարեալ բօթնոցովն⁵⁵ կանցելարի⁵⁶ առաջին տեսն որպէս պատմեցաք:

Թէպէտ գրէ իմաստունն թէ՛ համբաւ բարի պարարէ զուկերս, սակայն երկնիմ ևս յայնմանէ, որ ասէ՝ վա՛յ մարդոյն այնմիկ, որոյ անունն մեծ է քան զգրափքն. միայն ձեր բարի աղօթքն ապաւինելով, յուսամ թէ՛ բա-

20ր

րի լինել մեզ, ոչ անձինս այլ հոգույս ողորմեսցի Աստուած ձեր բարի մաղթանքն:

|| Յամի Տեառն 1836 ի քանինս ապրիլի, միշտ մտախոհ լինելի, վասն կոտորակի թղթոցն, մանաւանդ որք ի բերանս մամլոյ կազմարարին թափէին, իբրեւ անպիւրանեալ, և առ ոտս կոխողեալ անցանէին և ոչինչ համատեղելի, հոգմատար լինելը, առաջի տպարանին որ ներսն իբրեւ, հոգմատար լինելը, առաջի տպարանին որ ներսն էր զնոնս տպարանն այնմ ժամանակին, մինչ կամեցայ ընթերցման լսեցի թէ՛ համամշին ժողովիւ է զբաղման կոտորակ թղթոցն առ ի այրել բաղնիքումն որ նստաւ շերմասցի ջուրն. զնացի բաղնիքայնին մուննալ արարի. և նա ասաց՝ կէսն այրեցի, օգուտ չեղև, կէսն էլ տարի տուն բարձի մէջ ընկաւ. այնմ միջոցի որ թափէին, լէր զարթնալ միտք իմ, երբ պակասեցաւ սկսայ մտախոհ լինիլ վասն թղթահանութեան թէ՛ յո՞ր եղանակաւ կարնմ կազմել, որ պիտանի բան լինի, առի և թերի սակաւ ինչ զնմանէ:

Յաւուր միում աշակերտութեանս ժամանակին պատմեալ էր լուսաճողի տեսնուն Յօհան վարդապետս, որ ինքն 12-ամեայ հասակի իւրում յաւուրս բազմաշահ և նորահրաշ Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսին յերևանցաւ, որոյ յաւուրն ծաղկեցաւ Սուրբ Աթոռ մայրս մեր Սուրբ Էջմիածին, վասն թղթահանութեան և տպարանին, որ իբրեւ զճրագ լոյս տայ յաշխատանս նորա եղեալ ի վերայ աշտանակի, որոյ հօդի Տէրն լուսաւորեսցէ ի պրքայութեան իւրում, դասելով ընդ երանելի հայրապետն:

Ասացի թէ լուսաճողի տեսնուն Յօհան վարդապետն էր պատմեալ ինձ մասնաւոր կերպիւ և ի մտախոհ լինիլս, յուսացեալ բազմաշնորհ պարգևն Հոգւոյն Սրբոյն, եղի մտացս արարողութիւն թէ՛ յո՞ր կերպ առնեմ, մինչ զի ի ննջելս խնորհցի ի Տեառնէ և տուաւ ինձ զհայցուածս իմ...: Այնի այսր, ի լուսանալ առաւօտուն, զկոտորակսն թղթոց եղի ի մէջ ջրոյ թրջոց և հանեալ եղի ի մէջ հաւանկի և սանտի տօռամբ⁵⁷ այնքան ծեծեցի, որ եղև իբրեւ դմածոցիկ իմն և հանեալ եղի մարուր աման և լցի նորա վերայ ջուր, խառնեալ՝ եղև կաթնաման. ուշիկ ուշիկ հանեալ եղի ի վերայ կտոր մի մաճուղի, ի վերայ տախտակի եղեալ, տարածեցի ձեռովս, դարձեալ մաճուղ և հարթ հաւասար տախտակ և քար ծանր եղի ի վերայ նորա մինչև քամեցաւ լուսապէս ջուրն և հանեալ շորացոցի, կոկեցի, գրեցի և տեսի, որ ընդունեաց զգիրն և ոչ ծրեաց. ուրախացայ. դարձեալ ուրախացայ. և արարի 4 հատ մենձ կէս թապաղայի չափ, մինչ աւարտեցի, խնդիր արարի տպարանի վերաւ տեսուչ բարձր խաչապատկ նիսիայ անուանեալ Յովհաննէս վարդապետին՝ առ ի տպել զպատկերն Սուրբ Էջմիածնի, որ եղ առաւ ի գործարանն և տպեց 3 հատ պատկեր Սուրբ Էջմիածնի ըստ փափաքանացս: Եւ ուրախացաւ փառս ետու. Աստուծոյն մերոյ, որ առատապէս տայցէ հօգին Սուրբ Աստուած որ գիտօղն է ամենայն գաղտնեաց և տայ պարգևս անատօրէն խնդրողին:

Ասացի թէ՛ ի կոտորակէ թղթոցն, որք ելանէին ի բերանս մամլոցն կազմարարի յօրինեցի, տպեցի և մի վասն այսօր և վասն զանազան գործոց ի վերայ սոյն

թղթոյ գրեցի առ Նորին Սրբազան Օծութեան յաղագս ծանօթութիւն տալոյ:

1835 հոկտեմբերի 26, Սրբազան Տեառն մեր Յովհաննէս կաթողիկոսն զնաց ի Թիֆլիզ առ կուսակալն վասն զանազան խնդրեաց. այնրմ միջոցի որ պարտաւ էի մնացեալ վասն ծաղկելոյ զթուղթսն Սրբազան Վեհապետին, սկսայ այսպէս բանին հետեիլ յօգուտ Սրբոյն Աթոռոյն և սորին աստուածընտիր զահակալացն, որոց եղչիրն բարձր է և բարձր եղիցի Աստուծով իմով յախտեան՝ ժամանակաց:

|| Հետեւումն իմ այսպիսի բանից, օգուտն շատ է և շահաբեր և պտուղ յաշխատանացս օգուտ ընծային, որպէս յաւուրս հանգուցեալ կաթողիկոսին, այսմ թուոջ զեկտեմբերի 22-ին, ի վերայ իմս յօրինեալ թղթոյ մատուցի խոնարհաբար խնդիր Նորին Վեհափառ Սուրբ Օծութեանն ի ներկայութեան գերապատեալ բարձր սրբազան և ասպիտափառ Բարսեղ արքեպիսկոպոս առաջ լուսարարին և նոյն պատուով Յովսէփ արքեպիսկոպոսին և լուսաճողի հիւրընկալին և իւրոյ հարազատ պաշտօնէիցն, զյօրինեալսն իմ զկոտորակէ թղթոցն յարմարեալ թուղթն, պատկերսն, զպատաշն, որ կալաքարի աղն է, զտոսինն նորածն յաղագս կոնդակաց կցանքին, զկանաչ ծանկան:

Այսու օրինակաւ ընծայեցի և ետ մեզ պարզև Ա պաճախ ոսկի միայն, շէն կենայ իւր հօր օճաղն, որ այսքան աշխատանացս, այնքան վարձ ետ:

Նորին Վեհափառ Սուրբ Օծութիւն սրբազնակառար կաթողիկոսի ամենայն հայոց Տեառն Յովհաննէս և կայսերապետակալ ասպետի:

Ի նուստ ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ մահտեսի Տէր-Գրիգորեան երևանցաւ ամենախոնարհ ընծայարեւութիւն:

Ի վաղ ժամանակաց հետէ տեսեալ եմ զբազմաթիւ կոտորակաւ թղթոց որք ելանէին ի մամլոյ կազմարարացն, վատնեալս յումպէտս իբրեւ անպիտան ինչ արտաքս ընկեցեալս և ոչնչացեալս, ցանկայի և խորհէի դտանել հնար իմն վերստին թղթացուցանելոյ զայնս, առ ի լինիլ պիտանի յօգուտ Սրբոյն Աթոռոյն, վերջապէս փորձ փորձեալ զտի զհնարն որով ի բաղադրեալ յիշեալ կոտորակացդ արտադրեցի ըստ կարի զկրկին տեսակս թղթոյ:

Եւ քանի օրէնք են յամէն լուսաւորեալ աղինս և ի տէրութիւնս զայսպիսի նորահնար գիտս՝ որք ըստ տեղւոյն պիտանի և օգտաւէտ համարեալ ունիցին յայտնեալ կամ առաջի առնել նախապետաբար վեհադուհեցն, ամին իրի եւ ոչ նուազ օգտակար Սրբոյն Աթոռոյն համարելով զայս զիմ գիտս, արժան դատեցայ առաջի առնել ամենախոնարհաբար ըստ այսմ Ձերումդ Վեհափառ Սուրբ Օծութեանն ի տեսութիւն:

Եւ յաւելում. խոստանալ եթէ զսոյն նորադիւտ արտադրութիւնն իմ Վեհափառ Օծութեան Ձեր եւ համարելով օգտաւետ հրամայեցէ պատրաստել զգործիս ինչ կարևոր առ ի նոյն, կարօղ եմ շնորհիւ Ձեր զլաւագոյնն կամ ըզնորագոյնն եւ արտադրել:

Բայց յայսմանէ իմովս սեպհական աշխատութեամբ հնարեալ ունիմ նաև զպատաշն ասացեալ սպիտակ աղն

⁵⁷ Սանդի թակիլ:

յաղագրա լուսնալույզ զգրիս տպարանին, զնշշտալ⁵⁸ վասն և դստսնձ նորատեսակ ի պէտս կցանի կոնզակաց, և այլոց այսպիսեաց, զայսոսիկ ևս սակաւ օգուտ համարելով Սրբոյն Աթոռոյ, Ընծայարեւելով, հոգեւոր Տէր, զայսպիսի դիւտ իմ Ձերումդ Վեհափառ Օծուիկան որպէս պտուղ ինչ՝ ճշմարիտ շնորհաւորութեան իմոյ և հաւատարմութեան առ Սուրբ Աթոռ մայրս մեր և առ Ձեզ, մնամ խորին հպատակութեամբ իմով և նոյնպիսի շնորհաւորութեամբ Վեհափառ Օծուիկան Ձերում ամենախոնարհ ծառայ՝

Մաղկազարդ Իսահակ Լալիսկոպոս

Համար 106, 1836, 22, 12:

ի Սուրբ Էջմիածին:

|| 1837

Հինի այս պատմութեանս, ի 1837 ամի Տեառն յունուարի, ետու բերել առ իս Աֆանդով օրհնեալ Կարապետն, որ դիտէ օրինաւոր հիւսնութեան արհեստն, ետու շինել դիւն մի 12 շափալախով⁵⁹, վասն թուղթ շինելոյ օրինակ, ըստ ծագման մտացս Հոգւոյն Սրբով, որ ազդեաց ի հնարս գտանելոյ դձեն և եղանակն, որոյ ձեն ըստ օրինի նկարեալ էի իբրև պլան. շինեաց ըստ արտօրմանացս լուսապէս, 6 շափալախն յաջ, 6-ն ահեակ. ի պտոյտ տալն զարկէր կտկտալով շամաթայ առնելով:

Որոյ խարճն ևս արարի և ի ծայր դնկին ետու շինել ջրաղաց մի ըստ օրինի ցիցն, տապարակն, էր երկաթեայ ընդ պտոյտ տուող կէս երկաթն, որ փոխանակ ջրոյ պտոյտ տար ոմն որ, որ երկալ ունէլ մտացս ըստ պատմութեան լուսաշողի Դաւիթ խանին Մատուրեան և ընդ պատմութեան մանաւանդ, որ զիրք մի ևս եցոյց մեղ լուսաշողի աղայ Յակոբ Շահան Զրպետեանի, մինչ էի ի Բիֆլիզ ընդ հոգեւոր ծնողին իմոյ Տեառն Նիփրեայ սրբազան կաթողիկոսին և ի տեսանելն իմ զգիրք նորին, որ լի էր զանազան պատկերօք, և ամէն մին պատկեր զանազան դործանութեան աշխարհի ցուցանել և ասէ՛ր՝ այս դործաւորքն են Փարեժ քաղաքի կոյրքն և զանազան ցաւազնեալքն, որ նորին կայսեր հրամանաւ ժողովեալ են ամէն կոյրք և կաղք և այլքն ամէն և կարգեալ են ի վերայ նոցա գործաւար ուսուցիչք, որոց տան ուսումն առնուլ և դործ գործել, որպէս տեսի ևս այնձ դրբողն և նկարեցի ի նոյնանէ զքանի մին պատկերսն, ոյք էին տպարանի դործաւորքն, մրաղարկն, շարիս պտոյտ տուողն, զրաշարն, մամլոյ քաղաղն, զիրք կաղաղողն, ուսուցանողն կանգնեալ առողջ մարդ և ուսանողն կոյր որ նստեալ աթոռով ուսանէր ի վարպետէն, որ մատաւրն ցուցանէր զգրաշարութիւնն. ճօպան դործող, խոնճան⁶⁰ գործող կին ոմն կոյր և այլք ևս զանազան բանից և դործոց պատկերք, մինչ տեսի զնոսա, նկարեցի ի նոցանէ զքանի մի պատկերսն որ գրեցի դործոց անուանքն, և այլու ձևով կամէլ և ևս առնել, ի ձեռն կոյր՝ Քիւրալը Յակոբեան, որ այն ձեն ետու շինել զշարխն, որ մարդն պտտէ, մինչև ջրով պտտելու շարիս շինելն ընդ ժամանակին:

Սե այս շարիս խարճն դուր և ընդ վայր գնաց. ևս կամեցայ ընդ նստին որպէս Փարեժ քաղաքի եղելոցն

նմանեցնեմ. բայց, բայց, բայց և և և ա գին [ասին] [վայ] [գայ] [բայրակ] [մանողին]:

Օրցս շարի կէս, տապարակն ևս՝ շահի կէս, օրն Ա և երա դուրս խարճն, հացն, գինի, պարգևն և միջի միլն կեն ու մեռ այս վայս անելով զնացին և դեռ ևս գնան ընդ երկայն ճանապարհ:

Ով որ ընդունի բանս այս ընդ դիտարութեան և երկայնամտութեան իմոյ օրհնեալ է, և օրհնեալ եղիցի յԱստուծոյ. և որ որ բամբասէ դիւս և զարարողութիւն իմ կարճամտութիւն համարէ, կարճակեաց լինի նա, որ արհամարհեաց ասացի յառաջագոյն թէ՛ եթէ մինն ոչ կորուսանեմք վասն տասին, ասա ինձ, ո՛վ հայր և եղբայր մեր, տասն միասին ուստի՛ գտանեմք. զրէ մարգարէն բացարձակ համարձակ թէ՛ երթալով երթալին և լալին, ոյք բարձեալ տանէին զերթմանիս իրենանց. զալով կենցեցն և ցնծացեցն, որոց առեալ բերցնէ... ի սկիզբանից լաց, և ի հնձնից զլիւրաց ծիծաղեալ և օրհնեալ զնա՝ որ նստի ի բարձունս Սաղմոս և օրհնութիւն:

|| 1839

Ի 1839 ամի Տեառն յունիսի 12 օրն, Նորին Վեհափառ Սուրբ Օծուիկան յղեալ էր մեղ մօտ շաթիր Մատթէոսն թէ՛ գնա, Մաղկազարդին աւետիք տուր և ասա նմա՝ նորին կայսերական բարձրութիւն հրամայեալ է ամ ըստ ամէ որքան կենդանի ևս, ստանաւ տարին 200 մանէթ արծաթոյ, ի մերմէ զանձարանէն, վասն որոյ շաթիրաշի Մատթէոսին ետու պարգև 4 մանէթ և Թովմայ Ծովաշէփիւ աղայ պրօկուրօրն ևս էր գրեալ մեղ. աւետեաց զիր բերօղ եսասաւոյ Գէորգին ևս ետու Ա ու:

Մաներուք և տեսէք, հարբ իմ և եղբայրք, Սոյն թիւ որ ի վերն է, մարտի 14-ին թագաւոր կայսրն բարեհաճեալ գրեալ վասն մեր ընդ խնդրոյ Նորին Վեհափառ Սուրբ Օծուիկան, նոյն հրաման կայսրն ընկալեալ է նոյն ինքն Սուրբ Օծուիկան և յունիսի 12 օրն աւետատուն է յղեալ մեղ, որով ուրախ եղէ և զօհոթեալմար փառս մատուցի բարձրելոյն Աստուծոյ, օրհնելով կեանս խաղաղադալեանս խնդրեցի յԱստուծոյ վասն նորին կայսերական մեծութեան և Նորին Վեհափառ Սուրբ Օծուիկան և սրբազան սինօթին, և այլն:

Հրամանս այս մնաց մինչև ցրիկտեմբերի 8, որ հրաման առի Նորին Սրբազանէն և զնացի Երեւան և առի ի մարտի 14-էն ըստ նշանակութեան բարձր հրամանի նորին կայսերական մեծութեան 142 մանէթ և 77 արծաթ կոպէկ:

Դարձեալ ասեմ, ի սոյն թիւ յունիսի 12 օրն, որ մեղ յայտնեալ հրամանն նորին կայսերական բարձրութեան, Նորին Վեհափառ Սուրբ Օծուիկան հրամայեաց զանձապահին, որ Մատթէոս Եպիսկոպոսն էր այն ժամանակի զանձապահն, որ Սուրբ Աթոռոյ զանձապահնէն, ամ ըստ ամէ տալիս էին մեղ, 1830 ամէ սկսեալ մինչև 1839 տարին, 30 թուման Երեւանու գնար դրամ, որ 1828 ամին, զկնի վերադառնալոյ Տեառն Եփրեմայ սուրբ կաթողիկոսին ի Տփլիս քաղաքէն, ի քանիսն օգոստոսի նոյն թիւ, հրամանաւ սրբազան սինօթին կարգեալ էին մեղ տարին 28 թուման:

Սե ի լընտրողութեան ժամանակին վասն նոր օծելոյն 8-րդ Կարբեցոյ խնդրեցի ի Նորին բարձր Սրբազանէն որ դեռ չէր օծեալ, հրամայեցէ տալ մեղ տարին 30

22ա

⁵⁸ Ցորենից պատրաստած օսլա:—⁵⁹ Թիարբրան:—

⁶⁰ Վարտիթի, մեջքի կապ:

թուման, որ ամեն տրեթմ⁶¹ լինի 10, վասն լաւապէս գիտելոյ զհաշիւն, խոստացաւ տալ և ի ձեռն Բարսեղ եպիսկոպոսին յղեաց մեզ 2 թուման. հրամայեաց զանձապահին տալ մեզ տարին 30 թուման... յօրէ յայնմանէ տարին ստանայի 30 թուման և հանդերձն իմ ընդ հասարակ միաբանիցն տալիս էին և դեռնա են տալիս ամ ըստ ամէ հասարակ շոր:

1639 ամին յունիսի 12 հրաման արար սրբազան կաթողիկոսն զանձապահին, որ այլևս չտան Աթոռոյ զանձարանէն մեզ, որ ինքեանք էին արարեալ և կարգեալ Թարգ գիտութեան իմոյ և ինքն էր կարգեալ 1828 և 1830 դարձեալ ինքն հրամայեաց շտալ... 1839 ի յունիսի 12:

1839: Այս ամի շատ նեղութիւն կրեցի պարտ վեր առնելով, մինչև ցեղկտեմբերի 8, և զինչ և որքան ստացայ, հազիւ կարացի տալ պարտն իմ և ձմռան փայտ և մոմն միայն առի և սպասեցի 1840 ամի տրեթն ստանալով:

Իսկ ի 1840 ամի Տեառն ի փետրուարի 2, վասն ծովացեալ մեղաց իմոց, շատ սաստիկ սանջու⁶² պատահեցաւ մեզ և մինչև ցետուր Զատիկն տե՛նաց (աշխարհի վերայ այսր ամի վիճ մեծ է, որ ասէ Սուրբ Անտառանն), և 2 ոտքս զամիք անձին իմոյ փակեցին սաստկութեամբ, ուսան, նստան, դարձեալ ուսան, տղրուկով, հաճամաթով⁶³, զանազան սպիղանիս առնելով թէպէտ ուսոյցն դադարեցաւ Աստուծով իմով, սակայն 2 ոտքս թուլացան ծնկներէս սկսեալ, որ առանց օգնականի ոչ կարէի ելանել, դուրս գնալ և դալ, մինչև 2 ցուպ կոնստակս || զնեղոյ հտու շինել, որ հազիւ կարէի ել ու մոտ առնել և այնպէս երբեմն գնայի լեկեղեցին աղօթել. ըստ այնմ որք ասեն թէ՛ անդադայ ղօնաղ, ոչ գին օթաղ. յիրբմն մեր ներքին այգիներն էի գնում, վայ էն գնալուն որ գնում էի, նոր ոտն ելեալ երեկայի նման, տօտա տօտա էի անում և ի վերադառնալ իշով էի գնում տուն:

Մինչ Հաղբատ էաք ի 1822, 1823, 1824, 1825, 1826, 1827. ի սոյն թիւ Վարդապետ օրն գնացինք ի Տփլիս ընդ Տեառն Նփրեմայ սրբազան կաթողիկոսի հօգևոր ծնողին իմոյ, վասն մեծ պատերազմի պարսիցն ընդ ռուսաց և նորին նոր կայսեր Նիկողայ պայծառափայլութեանն առաջնոյ. ասացի թէ՛ մինչ Հաղբատ էաք, էր անդ միաբան հին ծերունի, միամիտ աղանի Ստեփան վարդապետ ոմն շինօղեցի, երբեմն ասէր ի խօսակցութեան ժամանակին սորա նորա այս բանն թէ՛ իշին նստես. Աստուած ողորմի նորա միամիտ հօգևորն. նա թէպէտ շախալով ասէր, ոչ քուֆըռ և ոչ անէծք չէր ի բերան նորա, այս միայն թէ՛ բարկութեան ժամանակին, թէ՛ սիրոյ առարկայ եղեալ ժամանակին, իշին նստես ասէր, վասն որոյ ի վերայ իմ կատարեցաւ բանս այս, որ իշով գնացի մերս փնայ Յովակիմի այգին որ ի Քանաքեռ է, ընդ Ապուհայաթ չրին մերոյ և վերադարձայ իշով մեր տունն և ի ելն օգոստոս ամսոյն, դիմեալ ի Սուրբ Աթոռն, եկի նոյն դրութեամբն կալսակալով⁶⁴,

⁶¹ Երրորդ մասը: — ⁶² Փորացավ, խիթ: — ⁶³ Ապակայ շիշ, որի մեջ վառված բամբակ կամ թուղթ են պտտեցնում և փակցնում մարմնի ցաված մասի վրա: — ⁶⁴ Սայլակ:

որ այն էր խախուտ. Փարաքարու Վանանց այգւոյ յետկոյսն, շարէք⁶⁵ զատար հեղի, բեկաւ կալսակայն, որ մերս հաւատարիմ Աղազատով Գէորգն սաստեաց սպասաւորացն այնր կալսակայի, որք էին տաճիկք. զնացեալ նրեանու նորն բերին, նստաք մեք և ի մէջ զիշերի եկեալ ժամանեցաք ի Սուրբ Աթոռն 2 փայտի ցպոյ, որ այժմ, ողորմութեամբն Աստուծոյ, միով փայտի շրջմ և այլն:

Ի 1840 ամին, այսմ տկարութեանս մէջն, շունէի դրամ մի թէ շատ և թէ քիչ, վասն որոյ ողորմութեամբ խնդրեցի ի Նորին Վեհափառ Սուրբ Օծութենէն, հրամայեաց զանձապահին, որ էր Մատթէոս եպիսկոպոսն, թէ զինչ և ուզէ տուր և դաւել առ, որ հատուցանէ զեզ զպարտն իւր. ես ողորմութիւն խնդրեցի, նոքա պարտք հտուն և առին. գրէ մարգարէն ի բերանոյ 7-ն կանանց, որ ասէ. 7 կին ըմբռնէին զայր մի և ասէին, զհացս մեր կերիցուք և զհանդերձս մեր զգեցցուք, բայց միայն անուն քո կոչեսցի ի վերայ մեր:

Տես դու, ո՛վ հայր և եղբայր իմ ցաւակից. առաջինն, որ մեք թողաք զամէն և եկաք զինի քո, արդ զի՛նչ լինիցի մեզ. ասացին առաքեալքն Քրիստոսի, և նա իւր աստուածային սուրբ բերանովն և անսուտ բանին խոստացաւ նոցա, նստուցանել յարջալութեան իւրում զերկոտասան աթոռ, դատել զերկոտասան ազգն Բարայիլի. հարկ էր Նորին Վեհափառ Սրբազան Օծութեանն նմանիլ Քրիստոսի, որ փոխանորդ էր, ողորմութիւն համարէր տալ և ոչ պարտ... Զարմա՛ք են և զարմանալի որ հա՛մ միաբանս մեր Սրբազան Աթոռոյ ի մանկութենէն իմէ՛, հա՛մ 50 թուին Հայոց ՌԽՄ աշակերտութենէն սկսեալ մինչև ցայսօր կամ ի ծաղկարարութենէն, որում ժամանակին անլացոյցի զծառայութիւնքն իմ հաւատարմապէս և ոչ նուազեցայ որպէս ի վեր անդր ծանեալք զպատմութիւն իմ ախորժալի, ասա, ո՛վ երանեալ Տէր, զի՛ արարի, միթէ պակաս ծառայեցի Զեզ քան զմիւրն և զԴանիէլ գերեզմանի սրբազան կաթողիկոսացն. ոչ բնաւ. հապա վասն է՛ր հրամայեցիր, թէ հատո սպարաւոզ զանձապահին, մի՛թէ կորած տեղ էր որ հտուր, միթէ՛ զկին այնր շծառայեցի, որ դեռնա կամ ի նոյն պաշտոնի ծառայութեամբ իմով այսմ ցաւազարեալ տեղովս. ո՛չ ապաքէն և ես մի էի ի նոցանէ, որ տիւ և զիշեր ծառայէին ձեզ. նոցա հարկւաւորն և հազարաւորն շրաւակեացաւ, մեզ զի՛նչ եղև առաջի ձեր. միթէ՛ օտար ոք քի, և թէ՛ ոչ գիտեանայի բնաւ ծառայութեան ձե. գոնէ հարկաւոր էր վասն աղքատ միաբանութեանս շահեալ լինէիր և այս Թուղթը շուտ տուր, արասին կուլ տուր, նահատակ կենդանի:

|| 1840 ամի Տեառն ի մէկէն յունուարի, մինչև ցվեր զեկտեմբերի, հազիւ թէ կարացի ընկալնու զկայսերականն ողորմութիւնն. պատճառն էր այն, որ Թիֆլիզու զանձապահէն չէր եկեալ հրաման Ցերեանայ կազնեւայի⁶⁶, որ ի 27 հազիւ ստացալ 200 արծաթ մանէթն և Սրբոյ Աթոռոյն ըստ հրամանի Նորին Վեհափառ Սուրբ Օծութեանն տալու էի 25 թուման, որ և հտու ի ներկայութեան աստուածափառ Յովսէփ արքեպիսկոպոսին 81 մանէթ և Ա սաղ արասի Մատթէոս եպիսկոպոս զանձապահին և առ զավդերս Ես ոչ քաղցեալ այս պարտս

⁶⁵ Քառորդ ժամ: — ⁶⁶ Գանձապահ:

վճարելով, բայց դեռևս նորա քաղցեալը եւ Աստուծով իմով:

1840: Այսմ թուոյ, մինչ կայի մէջ նեղութեան իբրեւ անդամաւործ ի տան հօր իմոյ անայցելու, թէ և եղբարք և ամէն ազգականք իմ ցաւին, զի՛նչ օգուտ ի նոցանէ, և թէ ոչ էր օգնեալ ինձ փոքր մի ևս, բնական էր անձն իմ ի դժոխս ընդ մարգարէին: Արդարև օգնեաց ինձ Տէր ի սէր սուրբ յարութեան. որ ի մէջ մահճի կայի Սուրբ Զատիկի ճրագաւոյց երեկոյին, որ ցուցակ մատիս ծայրին թաթախեալ զգեղնուց ձուռս և ոչ թացեալ և զի մատս ի վերայ լեզուի իմոմ, որպէս թէ թաթախեցայ ըստ կանոնի հարցն սրբոց նաւակատիս առնելով. և ի գիշերի Սուրբ Յարութեան Տեառն, մատաղի շուրն բերիլ ետու, ըմպեցի և գտի բժշկութիւն Աստուծով իմով...:

... || Այսմ ամի, 1843, ողորմութեամբն Աստուծոյ, այգեաց ողկոյզն այնքան առատ գոլով, ոչ բաւականանայր կարասքն Սրբոյ Աթոռոյս...:

... Երկնչիմ արդարև երկնչիմ ես այսմ և ոչ երիցս. ես որ երեք անուամբ մի է և մի տէրութիւն և

մի աստուածութիւն, Հայր անպատճառ, Որդին անճառ և Սուրբ Հոգին գերափառ. ես քանցէ զյանցանս իմ և ձեր, թողլով զյանցանս մեր որ սխալեցաք, և ազահութեամբ իմով բարկացուցի զՏէր Աստուած հարցն մերոց. թո՛ղ Տէր, թո՛ղ զյանցանս իմ, ազալեմ զքեզ, միջնորդութեամբ անարատ ծնողի քոյ Սուրբ Աստուածածնիդ և աստուածընկալ սուրբ խաչիդ, որոց երկրպագեմ, ի փառս սուրբ աստուածութեանն քոյ, ընդ համօրէն զունդս սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց. ընդ որս ազալեմ զքեզ, Տէր, հայեաց յիս և մի՛ տար զիս հօրիս այս և փրկեա՛ զիս յաննեքելի տանջանաց. վասն իմ ասէ ով որ՝ եթէ արժանի լինէիր փայ և բաժնի, քեզ ևս տային փայ և բաժին. ուրեմն լուռ լիւր և որ իմաստունն է ի ժամանակին այսմիկ, լռեսցեն, զի ժամանակն չար է, ասէ իմաստուն՝ դու խնդրեա ի Տեառնէ աղօթիւք նախ զարքայութիւն և ապա զայդ ամէն յաւելցի ձեզ. ասէ Աստուած՝ խնդրեցի և լուաւ ինձ, ետու փառք յամենայն բոլորի, նմա եղիցի որ... յաւիտեանս, ամէն, ալէլուիա:





Ս Փ Յ ՈՒՌ Գ ՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՈՎ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԷՄԻԼԻԱՆՈՍ ՀՈՒՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

1963 թվականի դեկտեմբեր 3-ի երեքշաբթին տոնական օրվան մը երևույթ առած էր Ստամբուլի Գուրուլեշմե թաղի Նրեման Ս. Խաչ եկեղեցիին համար։ Ուրիշ տարիներ Ս. Մինասի տոնին սովորական պատարագ մը կ՝ամատուցվեր այս եկեղեցվո համանուն մատուռն մեջ, թե՛ ի հարգանս օրվան սուրբին և թե՛ ոգեկոչելու համար հիշատակը Գրիգոր և Հովսեփ Կարապետյան սրբազաններուն, որոնց ջանքերով հաստատված էր մատուռը։

Այս տարի սակայն այս եկեղեցիին մեջ պատմական հանդես մը տեղի ունեցավ։

Թուրքիո հայոց ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի խնդրանքին ընդառաջելով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հատուկ կոնդակով պատված և լանջախաչի տվչութունը կատարվի դեկտեմբեր 3-ին Գուրուլեշմեի եկեղեցիին մեջ և հրավիրեց նաև Նորին Սրբազնութուն Տ. Աթենագորոս Պատրիարքը ներկա ըլլալու։

Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք տնօրինեց, որ Վեհափառ Հայրապետի կոնդակի ընթերցումը և լանջախաչի տվչութունը կատարվի դեկտեմբեր 3-ին Գուրուլեշմեի եկեղեցիին մեջ և հրավիրեց նաև Նորին Սրբազնութուն Տ. Աթենագորոս Պատրիարքը ներկա ըլլալու։

Եկեղեցին լեցված էր հայ և հույն հավատացյալներու խուռն բազմությամբ։

Ժամը 11-ին ժամանեց Նորին Սրբազնութուն Տ. Աթենագորոս Պատրիարքը, Ս. Սինոդի անդամ չորս հայկականներով և այլ հետևորդներով։ Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքը ընդունեց Տիեզերական Պատրիարքը եկեղեցվո մուտքին։

Հավարտ սուրբ պատարագի, պատրիարքական փոխանորդ Տ. Հարություն քահանա Հալաճյան կարգաց հանդիսավորապես հայրապետական կոնդակը, որուն հաջորդեց նույնին հունարեն թարգմանության ընթերցումը։

Ապա խորան բարձրացան զույգ պատրիարքները և էմիլիանոս սրբազան։

Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարք, անդրադառնալի հետո հայրապետական կոնդակի գրության և եղբայրական ոգիին, հիշատակեց Տ. էմիլիանոս հայկական ծառայությունը իբրև հունարենի դասատու Թուրքիո հայոց Պատրիարքության Ս. Խաչ դպրեմանքի մեջ, ինչպես նաև իր աշխատանքները հայ և հույն համայնքները և եկեղեցիները իրարու մոտեցնելու մարզին մեջ, և վերջապես հունարեն իր երկասիրությունը Հայ Եկեղեցիի մասին։ Ապա սրտագին բարեմաղթություններով անցուց էջմիածնական ականակուռ խաչը էմիլիանոս սրբազանին պարանոցին և հանձնեց հայրապետական կոնդակը։

Նորին Սրբազնութուն Աթենագորոս Պատրիարքը թարգմանի միջոցով իր գոհունակությունը հայտնեց այս պարգևաբաշխության համար, անդրադարձավ Հայ Եկեղեցիի մատուցած ծառայության քրիստոնեական դատին։ «Խորքին մեջ նույն են երկու եկեղեցիներու խորհուրդները,— ըսավ Տիեզերական Պատրիարքը,— և ես պիտի չվարանիմ Ս. Հաղորդութուն առնելի Հայ Եկեղեցիի սուրբ սկիհին»։

Տ. Շնորհք պատրիարք խոսք առնելով ըսավ, թե «Նորին Ամենապատիվութունը մեր ժամանակներու ամենն լուսամիտ և ճշմարիտ քրիստոնյա առաջնորդներն մեկն է»։ «Սիրո հաղորդությունը,— շարունակեց ամենապատիվ Պատրիարքը,— արդեն իսկ իրականություն մըն է սույն եկեղեցվո մեջ երկու համայնքներու պետերուն և իրենց ժողովուրդին միջև։ Էականը և Աստուծո հաճելին այս է, ինչպես կհաստատեն Աստվածաշունչը. «Այսու դիտասցեն, թէ իմ աշակերտք իցէք, եթէ սիրիցէք զմիմեանս»։ Իսկ խորհուրդներու հաղորդվիլը ժամանակներու բերելիք բարիքը պիտի ըլլա քրիստոնյա եկեղեցիներու համար»։



Հուլյն Օրթոդոքս Եկեղեցու տիեզերական պատրիարք Աթենագորասը և Թուրքիայի հայոց պատրիարք Տ. Շնորհրդարքեպիսկոպոսը իրենց հետևորդներով Պոլսի հայոց Պատրիարքարանում

Ապա երկու պատրիարքները առաջնորդվեցան հայոց Պատրիարքարանը, ուր ամենապատիվ Տ. Շնորհրդարք ճաշկերույթ մը պատրաստել տված էր ի պատիվ նորին Սրբազնություն Աթենագորաս Պատրիարքին։ Սեղանը, որուն շուրջ բազմեցան երկու եկեղեցիներու պետերը և բարձրաստիճան եկեղեցականներն ու երկուստեք աշխարհական ներկայացուցիչներ, եղավ ճշմարիտ քրիստոնեական ինքնազգացման, խորհրդանշական սիրո սեղանը։ Ամենապատիվ Տ. Շնորհրդարք բաժակ առաջարկեց նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարքի կենացը։ Աթենագորաս Պատրիարք ջերմ և սրտաբուխ բառերով բարեմաղթություններ քրավ և բաժակ առաջարկեց Ամենայն Հայոց Վեհապառ Վաթողիկոս Վազգեն Ա-ի կենացը, հայտնելով միաժամանակ իր խնդակցությունը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և Անթիլիասի միջև գոյացած հաշտության համար։ Ապա էմիլիանոս սրբազանը, հայտնապես զգացված ոգիով, հայերեն լեզվով

կարդաց փոքր ուղերձ մը, հայտնելով իր երախտագիտությունը Վեհապառ Վազգեն Ա Վաթողիկոսին Ամենայն Հայոց և ամենապատիվ Տ. Շնորհրդարքին՝ իրեն ընծայված շնորհքին և պատիվին համար։ Շահան ծայրագույն վարդապետը բաժակ առաջարկեց հունաց Պատրիարքարանի ներկա Ս. Սինոդի անդամներուն կենացը և անոնցմե մին փոխադարձեց՝ բաժակ բարձրացնելով հայոց Պատրիարքարանի կրոնական ժողովի անդամներու կենացը։

Սեղանին վրա սիրավիր մաղթանքները և Պատրիարքարանի դահլիճին մեջ եղբայրական զրույցները շարունակվեցան մինչև ժամը 4, երբ նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարք հրաժեշտ առավ և առաջնորդվեցավ պատրիարքաբանիստ Մայր Եկեղեցին, ուր իր ուխտն ու աղոթքը կատարեց և ապա իր հայրական խոսքն ու օրհնությունը տալով, մեկնեցավ ծափահարությանց, սիրո և հարգանքի արտահայտություններու մեջ։

ԲՂԹԱԿԻՑ



ՌՈՒՄԱՆԱՅԻ ՀԱՅԱԳԵՏ ՊՐՈՖ. ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒԻ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ



Ռումանահայ գաղութը և հայագիտությունը պրոֆ. Վլադ Բենցեանուի մահով ծանր կորուստ կրեցին:

Հայ ժողովուրդի մեծ բարեկամին մահը սուգի մատնեց իր մերձավորները, բարեկամներն ու ծանոթները, որոնք ղինքը սիրեցին իր մարդկային առաքինություններուն և գիտնականի բարձր արժանիքներուն համար:

Հանգուցյալի ի կենդանության հայտնած փափագին և իր ընտանիքի խնդրանքին ընդառաջելով, թաղման կարգը կատարվեցավ հայ եկեղեցիին մեջ, իսկ թաղումը՝ հայկական գերեզմանատունը:

Վլադ Բենցեանուի մահը Բուխարեստի հայության համար եղավ սուգի օր մը և ան խոտն բաղմունքամբ ներկա եղավ հուղարկավորության՝ հարգանքի իր տուրքը մատու-

ցանելու համար իր մեծ բարեկամի հիշատակին:

Թաղման արարողության նախագահեց Ռումանիո հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան:

Դամբանականներ խոսեցան առաջնորդ հայր սուրբը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի, էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության և Ռումանիո հայ համայնքի անունով, դոկտ. Գրիգոր Փամբուքճյան՝ Ռումանիո հայոց թեմական խորհուրդի, Միհայիլ Գուբոլու՝ Արևելագիտական ընկերության, Երվանդ Մելիտոն՝ Բուխարեստի հայ համայնքի, Տիգրան Տեր-Գրիգորյան՝ «Նոր կյանք» թերթի խմբագրության, Հ. Ծ. Սիրունի՝ իր աշխատակիցներուն և բարեկամներուն կողմից, հանգուցյալի համալսարանական պաշտոնակիցներեն մին և անոր դասընթացներուն հետեւող ուսանող մը:

Առաջնորդ հայր սուրբը իր դամբանականին մեջ վեր հանեց արժանիքները հանգուցյալին, որ ոչ միայն զբաղեցավ հայ ժողովուրդի մշակութային անցյալով, այլ սիրեց հայ ազգը հարազատի մը պես ու եղավ գրեթե հայ մը:

Բոլոր դամբանախոսները ընդգծեցին Վ. Բենցեանուի գիտնականի թանկագին ծառայություններն ու արժանիքները, որոնցմով ան արժանացած էր ընդհանուրի հարգանքին:

Հանգուցյալի մտերիմ բարեկամ Հ. Ծ. Սիրունի դամբանականին մեջ ի միջի այլոց ըսավ.

«Թանկագին բարեկամ, քեզի հետ ժամադրություն տված էինք ճիշտ այսօր. պիտի գայի ողջերթ մաղթելու քեզի՝ Հայաստան մեկնելուդ առթիվ: Ծակատագիրը ուրիշ կերպ էր տնօրինել, ավա՜ղ, Եկեր եմ ճամբելու շատ հեռավոր աշխարհ մը, ուրկե երբեք դարձ չկա, մինչ անդին, Երևանի բարեկամներդ անձկությամբ կսպասեն քեզի այս պահուս:

Մեր վերջին հանդիպման պահուն, քանի մը օր առաջ, կըսեիր, թե կարոտցած ես Հայաստանը, կուզես անգամ մըն ալ ողջունել Մա-



Պրոֆ. Վլադ Բընըցեանուի դագաղը շրջապատված հուղարկավորներով

սխն ու էջմիածինը, անգամ մըն ալ տեսնել հայ ժողովուրդը իր ճիգերուն մեջ: Ի՞նչ փուլթ, թե կաղզույրի պետք ունեիր: Հայոց աշխարհը ուժ և ավիշ պիտի տար քեզի:

Քու ուսուցիչներդ՝ Անտուան Մեյն և Ֆրեդերիկ Մակլերն ալ զբաղեր էին հայ ժողովուրդով և հայ լեզվով, բայց բուկդ գիտնականի հետաքրքրութենեն շատ անդին անցավ: Դուն հոգվով ալ շփման մեջ մտար հայ ժողովուրդին հետ, ապրեցար անոր հոգեբով: Դուն արժանի եղար քու ուսուցիչներուդ:

Դուն նույնացար հայ ժողովուրդին հետ, հայ համարեցիր քեզ ու հարազատի մը պես ոգևորվեցար անոր վերելքով: Ու հայ ժողովուրդն ալ քեզ իրը նկատեց: Ու վերջապես եկար հայ մեռելներուն հետ միասին հանգչելու ցուրտ հողին տակ ալ: Եթե հոգիդ զգար ինչ որ այս պահուս տեղի կունենա դագաղիդ

շուրջը, ավելի խաղաղ պիտի քնանար հավիտենական քունը»:

Պրոֆ.-դոկտ. Վլադ Բընըցեանու իր խանդավառությամբ ու մարդկային վերաբերմունքով գրաված էր բոլորի սիրտն ու համակրանքը: Իր հարատև ջանքերուն շնորհիվ կարելի եղավ հիմնել Արևելյան ուսումնասիրություններու ընկերությունը, որ իր շուրջը համախմբած է 40 հետազոտողներ:

Վ. Բընըցեանու մահացավ իր ուժերու ծաղկման շրջանին, երբ ինք նվիրված էր ավելի խոր ուսումնասիրություններու, մասնագիտական ընագավառներու մեջ:

Մաղթենք, որ իր գործը շարունակողներ հանդես գան Ռուսաստանի մշակութային աշխարհին մեջ ու հավերժացնեն իր հիշատակը կենդանի գործերով:

ԹՂԹԱԿԻՑ





Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Գ Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Նոր բառարան.— Հայգրքի գրախանութներում շարունակվում են Ա. Մ. Սուքիասյանի հեղինակած «Հայոց լեզվի հոմախոսների բառարան»-ի բաժանորդագրման աշխատանքները։ Շուրջ 90 մամուլ ծավալ ունեցող այս աշխատությունը իր մեջ պարունակում է արդի հայերեն գրական լեզվի արևելահայ և արևմտահայ ճյուղավորումների, ինչպես նաև գրաբարի, միջին հայերենի և բարբառների ավելի քան 80 հազար հոմանիշ բառ և դարձված։

Բառարանում տրվում են բառի բոլոր իմաստներն ու իմաստային նրբերանգները արդի հայերեն, արևմտահայերեն և բարբառային բոլոր համապատասխան հոմանիշներով, անհրաժեշտության դեպքում տրվում են նաև հակիրճ բացատրություններ։ Բառարանում կարգավորված են նաև ուղղագրական նորմաները։

Այս բառարանում առաջին անգամ պատշաճ տեղ է հատկացված նորաբանություններին և այն բառերին, որոնք տեղ չեն գտել Ա. Մալխասյանցի ջառհաստոր բացատրական բառարանում։ Այդ կարգի բառերի թիվը մոտ 30 000-ի է հասնում։

Այսպիսով, սույն աշխատանքը միաժամանակ և՛ հոմանիշների, և՛ բացատրական, և՛ ուղղագրական բառարան է։ Բառարանը նորմատիվ բնույթ ունի, բառերը գնահատված են արդի հայերեն գործող նորմաների տեսանկյունից։ Իր նորմատիվությամբ այն կարող է ուղեցույց ձեռնարկ ծառայել բառերի ճիշտ գործածության համար։

Բառարանը նախատեսված է գրողների, թարգմանիչների, ուսուցիչների, գիտության և մամուլի աշխատողների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտության և ընդհանրապես հասարակության լայն խավերի համար. այն կնպաստի հայոց լեզվի բառապաշարի իմաստային և ոճական հարստության լուրացմանն ու խոսքի մշակույթի բարձրացմանը։

Արժեքավոր աշխատություն Հաղբատի վանքի մասին.— Հայաստանի գիտությունների ակադեմիան վերջերս հրա-

տարակել է հայտնի հնագետ, դոկտ. պրոֆ. Կարո Ղաֆադարյանի մեկ նոր աշխատությունը, նվիրված Հաղբատի վանքին, նրա ճարտարապետությանը և արձանագրություններին։

Աշխատությունը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում հեղինակը տալիս է Հաղբատի ճարտարապետական հուշարձանների կառուցման պատմությունը, հիմք ունենալով այդ մասին եղած տարեգրություններն ու արձանագրությունները։ Գրքի երկրորդ մասում տրված են այն բոլոր արձանագրությունները (թվով 257 հատ), որոնք հայտնաբերված են հռչակավոր վանքի, նրան կից կառուցումների պատերին և շրջակայքում գտնվող խաչքարերի վրա։ Այդ արձանագրությունների մեջ հիշատակվում են պատմական գործիչների անուններ, տրված են հրամանագրեր և տարբեր բովանդակությամբ կարգադրություններ։ Բացի պատմական իրադարձությունների ուսումնասիրության նյութ ծառայելուց, այդ արձանագրությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև հայոց լեզվի կարգացման ուսումնասիրության տեսակետից։ Յուրաքանչյուր արձանագրության դիմաց հեղինակը տվել է ընդարձակ բացատրություններ և մեկնաբանումներ։ Գրքում վետեղված են բազմաթիվ լուսանկարներ։

Մարտիրոս Մարյանի արվեստանոցում.— Գրեթե օր չի անցնում, որ հայ ժողովրդի մեծատաղանդ զավակ, Սովետական Միության ժողովրդական նկարիչ Մարտիրոս Մարյանը հյուրեր չունենա։ Նրան այցելում են երևանցիները, Սովետական Միության և արտասահմանյան երկրներից Երևան այցելող տուրիստները, արվեստագետները, գրողները, գիտնականները։ Նկարչի արվեստանոցը իրոք որ դարձել է Երևանի տեսարժան վայրերից մեկը։ Եվ ամեն ոք հիացմունքով է դիտում վարպետի գործերը, որոնց ընդհանուր թիվը արվեստանոցում հասնում է շուրջ 1 000-ի։ Այստեղ դուք կտեսնեք Հայաստանի սքանչելի բնանկարները՝ ողողված հայկական թեժ արևով, կտեսնեք

բոլորովին նոր դիմանկարներ, գծված սարյանական խորությամբ, դիմանկարները անվանի մարդկանց, իր այցելուների՝ ամերիկացի գրող Ջոն Շտեյնբերգի, կոմպոզիտոր Դ. Շոստակովիչի, երգչուհի Զ. Դոլուխանյանի, հայ գրողների Կոստան Զարյանի, Հովհաննես Դոկասյանի և ուրիշների:

Չնայած 84-ամյա պատկառելի հասակին, վրձինի մեծ վարպետը խանդավառ կերպով շարունակում է իր գեղանկարչական աշխատանքները: Վերջերս նա ավարտեց էսքիզները այն որմանկարների, որոնցով կնկարապարդվեն Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի նոր կառուցվող շենքի ճեմասրահի պատերը:

Հայ գրականության մեծ բարեկամը.— Վերջերս Հայաստանի գրական հասարակությունը լայնորեն նշեց ռուս ականավոր բանաստեղծ-գրականագետ Վալերի Բրյուսովի ծննդյան 90-ամյակը: Վ. Բրյուսովը ծնվել է 1873 թվականին և մահացել 1924-ին: Նա անգնահատելի ծառայություն է մատուցել հայ գրականության՝ թարգմանելով և ռուս ընթերցող հասարակության ներկայացնելով հայ քնարերգության լավագույն նմուշները, սկսած վաղ միջնադարից մինչև քսաներորդ դարի սկիզբները: Այդ թարգմանությունները 1916 թվականին լույս տեսան Մոսկվայում, առանձին մի սովոր ժողովածուով՝ «Հայաստանի պոեզիան» ընդհանուր խորագրով:

Հայ բանաստեղծներին թարգմանելու համար, Վ. Բրյուսովը հատկապես սովորել է հայերեն լեզուն, նույնիսկ գրաբարը: Նա մեծ վարպետությամբ թարգմանել է միջնադարյան մեր տաղերգուների (Շնորհալի, Ջուչակ, Ֆրիկ, Սայաթ-Նովա), ինչպես և տասնիններորդ և քսաներորդ դարերի հայ պոեզիայի լավագույն կտորները: Իր կալմած ժողովածուի համար Վ. Բրյուսովը գրել է ընդարձակ ներածական, որի մեջ մեծ գովեստով ու բարձր գնահատականով է խոսում հայ ժողովրդի մշակույթի և հայ պոեզիայի մասին, գտնելով, որ այդ պոեզիայի առանձին նմուշներ կարող են վարդ կալվել համաշխարհային գրականության գանձարանում:

Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ կառավարական հանդիսավոր հոբելյանական երեկո, մասնակցությամբ Սովետական Միության տարբեր հանրապետություններից ժամանած անվանի գրականագետների և հայ արվեստի ու գրականության բազմաթիվ ներկայացուցիչների:

Հակոբ Պարոնյանի հոբելյանի առթիվ.— Հայաստանի գրական հասարակությունը պատրաստվում է լայնորեն նշելու հայ մեծանուն գրող-երգիծաբան անմահ Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյա հոբելյանը, 1964 թվականի մայիսին:

Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը և Երևանի պետական համալսարանը կկազմակերպեն գիտական նստաշրջաններ՝ նվիրված Հ. Պարոնյանին: Պետհրատը ներկայիս հրատարակում է Պարոնյանի երկերի ժողովածուն տաղը հատորով: Առաջին հատորն արդեն լույս է տեսել. հոբելյանի օրերին լույս կտեսնեն 2-րդ և 3-րդ հատորները: Մեծաքանակ տպագրությամբ առանձին կհրատարակվի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը՝ սփյուռքահայ ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարու-

խանի նկարապարդմամբ: Կհրատարակվի Հ. Պարոնյանի ընտիր երկերի մի հատորակը ռուսերեն: Լույս կտեսնի առանձին մենագրություն տաղանդավոր գրողի կյանքին և ստեղծագործությանը նվիրված: Պատրաստվում է կինոակնարկ Հ. Պարոնյանի մասին: Գրականության և արվեստի թանգարանը կազմակերպելու է ցուցահանդես նվիրված Պարոնյանին: Հանրապետության քաղաքներում և գյուղերում կկարդացվեն դասախոսություններ հոբելյանի մասին:

Հոբելյանի առթիվ կապի մինիստրությունը բաց է թողնելու առանձին դրոշմանիշներ Հ. Պարոնյանի նկարով: Երևանում, Հ. Պարոնյանի անվան դպրոցի առջև, դրվելու է գրողի կիսանդրին:

Նկարիչ Ստեփան Աղաջանյանի հիշատակին.— Լրացավ հայ ականավոր նկարիչ Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը: Գեղանկարչության այդ տաղանդավոր վարպետը արվեստի ասպարեզ մտավ անցյալ դարի վերջերին և իր ավելի քան 40 տարվա բեղմնավոր աշխատանքով մեծապես հարստացրեց հայ գեղանկարչության գանձարանը: Միաժամանակ դիմանկարների մեծ վարպետ էր Աղաջանյանը:

Հայ արվեստի ու գրականության աշխատողները և հայ հասարակությունը վերջերս Երևանում ջերմորեն նշեցին Ստեփան Աղաջանյանի ծննդյան 100-ամյակը:

Հոբելյանի առթիվ Հայաստանի պետական պատկերասրահում բացված էր մեծանուն նկարչի լավագույն գործերի ցուցահանդես:

«Սասունցի Դավիթ» դյուցազնավեպը աշխարհի լեզուներով.— Հայաստանի գիտությունների ակադեմիան ռուսերեն լեզվով հրատարակության է պատրաստում հայ ժողովրդական անմահ ավանդակեպ «Սասունցի Դավիթ»-ը: Ավանդակեպի 10 տարբերակների թարգմանությունը կատարել և ծանոթագրությունները գրել է անվանի բանասեր պրոֆ. Կարո Մկիթ-Օհանջանյանը:

«Սասունցի Դավիթ»-ը հրատարակվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով, ըստ որում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, չեխերեն, չինարեն, ռումիներեն, բուլղարերեն և այլն: Եռտուվ այն լույս կտեսնի լեհերեն: «Յունեսկո»-ի հանձնարարությամբ, պոեմի ֆրանսերեն նոր թարգմանություն է կատարել հայտնի հայագետ, ֆրանսիացի պրոֆեսոր Ֆրեդերիկ Ֆեյդին:

Սկսած 1939 թվականից, երբ նշվեց «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի ստեղծման 1000-ամյակը, պոեմը լույս է տեսել Սովետական Միության գրեթե բոլոր ժողովուրդների լեզուներով, սովետական լավագույն բանաստեղծների թարգմանությամբ:

Սկարլատտի «Տիգրան» օպերան.— Երևանի արվեստի և գրականության թանգարանը փառիպաբան հայ կոմպոզիտոր Ավետիս Մանանդյանից իբրև նվեր ստացել է իտալացի հռչակավոր կոմպոզիտոր Ալեքսան Սկարլատտի «Տիգրան» օպերայի պարտիտուրայի մեկ օրինակը: Այդ օպերան Սկարլատտին գրել է իտալացի դրամատուրգ Դոմենիկո Լալլին՝ համալուծ թատրերգության հիման վրա և առաջին անգամ այն բեմադրել 1715 թվականին Նեապոլի օպերային թատրոնում:

Երևանի երաժշտագետները հետաքրքրությամբ ծանոթացան «Տիգրան» օպերայի թե՛ երաժշտության և թե՛ լիբ-

րետություն: Նրանք գտնում են, որ օպերայի երաժշտությունը անպայման մեծ արժեք է ներկայացնում իր բազմաթիվ և հարուստ բովանդակությամբ: Անկասկած, օպերան հնարավոր է բեմադրել Երևանում, եթե գրվի նոր լիբրետո և որոշ շտկումներ կատարվեն երաժշտության պարտիտուրայի մեջ:

Երևանի երաժշտական ուսումնարանի 40 տարին.— Լրացավ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի հիմնադրման 40 տարին: Իր գոյության ընթացքում ուսումնարանը տվել է բազմաթիվ կոմպոզիտորներ և երաժիշտ-կատարողներ, որոնցից շատերի անունները բաժ հայտնի են մեր հանրապետության սահմաններից շատ հեռու: Նրանցից շատ-շատերը ներկայիս աշխատում են Հայաստանի երաժշտական դպրոցներում և ուսումնարաններում իբրև դասատուներ:

Հորեյանական հանդիսավոր երեկոյին եկել էին բազմաթիվ հյուրեր Թբիլիսիից, Լենինականից, Կիրովականից և այլ վայրերից, որոնք ջերմորեն ուղունեցին ուսումնարանի մանկավարժական կազմին և նշեցին դպրոցի գնահատելի ծառայությունները հայ երաժշտական մշակույթի պարզացման գործում: Վերջում տեղի ունեցավ մեծ հաջողությամբ ուսումնարանի աշակերտության մասնակցությամբ:

Հայաստանի պետական էստրադային նվագախմբի 25 տարին.— Լրացավ Հայաստանի պետական էստրադային նվագախմբի 25 տարին: Այս նվագախումբը հայտնի է ոչ միայն Հայաստանում: Նվագախումբը կազմակերպվել է մի խումբ երաժիշտների ջանքերով և պետական օժանդակությամբ: Նրա առաջին ղեկավարն է հանդիսացել արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Արտեմի Այվալյանը, որը գրեթե 15 տարի ղեկավարել է նվագախումբը: Ներկայումս այդ հանրաժանոթ կոլեկտիվի ղեկավարն է արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Կոնստանդին Օրբելյանը:

Գրականության և արվեստի թանգարանի նոր նյութերը.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանը վերջերս նոր նյութեր է ստացել: Մոսկվայի արվեստի ինստիտուտի դասախոս Մարիա Մսերյանցը թանգարանին ուղարկել է իր եղբոր՝ Լևոն Մսերյանի ձեռագիր աշխատությունները՝ նվիրված հայոց լեզվի բարբառների և Հայաստանի մի շարք պատմական հուշարձանների ուսումնասիրության: Լևոն Մսերյանցը ժամանակին եղել է Մոսկվայի և Վարշավայի համալսարանների պրոֆեսոր և Վարշավայի հայագիտության:

Մոսկվայից ստացված է նաև անցյալ դարի վերջերի և քսաներորդ դարի սկզբների դրամատուրգ և թատերական գործիչ Լմանուել Բախչիսարյանի հարուստ արխիվը: Է. Բախչիսարյանը ապրել ու գործել է Ղրիմում և Նոր-Նախիջևանում: Նա գրել է մի շարք թատերական գործեր:

Մոսկվայից թանգարանին նվեր է ուղարկված նաև գրականագետ-մանկավարժ-թարգմանիչ Սիմեոն Համալյանի (Ս. Գամալով) արխիվը: Ս. Համալյանը հայ դասական և ժամանակակից գրողների մի շարք արժեքավոր գործերը հաջողությամբ թարգմանել է ռուսերեն:

Գիրք Երևանի մասին.— Երևանի պետական համալսարանը ռուսերեն լեզվով հրատարակել է պատմական

գիտությունների թեկնածու Ա. Սիմոնյանի աշխատությունը, որը կոչվում է «Երևան»: Գրքում տրված է Հայաստանի մայրաքաղաքի պատմությունը վաղապես շրջաններում, նրա այսօրվա կյանքը՝ տնտեսությունը, մշակույթը, ճարտարապետությունը, շինարարությունը: Գրավիչ և հետաքրքրական կերպով հեղինակը պատմում է նաև քաղաքը կերտող մարդկանց մասին:

Սովետական իշխանության տարիներին մի քանի անգամ վերանայված և ընդարձակված է քաղաքի գլխավոր հատակագիծը: Նոր, վերջին հատակագծով Երևանը զբաղվելու է 15 000 հեկտար տարածություն և 1980 թվականին ունենալու է մեկ միլիոն բնակչություն:

Գրքում ընդարձակ տեղ է տրված Երևանի մշակութային կյանքին: Հատուկ գլուխներ նվիրված են արվեստի, գրականության, գիտության պարզացման և ցույց է տրված, որ Երևանը հանդիսանում է Սովետական Միության խոշոր գիտական կենտրոններից մեկը:

Երևանը 1964 թվականին.— Վերջերս Երևանի քաղաքային սովետի նիստը քննության առավ մայրաքաղաքի շինարարության և բարեկարգման 1963 թվականի արդյունքները և հաստատեց 1964—1965 թվականների ծրագիրը:

Անցյալ 1963 թվականին Երևանում կառուցվել և օգտագործման է հանձնվել 221 000 քառակուսի մետր բնակարան: Կառուցվել է ևս մի ջրմուղ, որով քաղաքին տրվող ջրի քանակը մեկ վայրկյանում ավելացել է 160 լիտրով և ներկայիս կազմում է 2 600 լիտր: Կառուցվել են դպրոցական նոր շենքեր, մանկապարտեզներ, կինոթատրոն, հիվանդանոց: Բարեկարգվել և ասֆալտապատվել են շատ փողոցներ, ասֆալտապատված փողոցների տարածությունը կազմում է 932 000 քառակուսի մետր:

1964 թվականին քաղաքային շինարարությունը ավելի լայն ծավալ կստանա: Կկառուցվեն շատ ավելի բնակարաններ և դպրոցներ քան անցյալ տարի: Խոշոր միջոցներ են հատկացվելու ջրմուղի և կոյուղու ցանցի ընդարձակման: 15 կիլոմետրով քաղաքում կընդարձակվի գալանուղի ցանցը: Կավելանա էլեկտրաքաղաքի, տրոլեյբուսների, ավտոբուսների, տաքսի մեքենաների թիվը: Կառուցվելու է մեկ նոր, տասնմեկհարկանի հյուրանոց, վերականգնվելու է «Սևան» հյուրանոցը:

Կրթական գործը Հայաստանում.— Հանրապետության հանրակրթական դպրոցներում (տարրական և միջնակարգ) ներկայիս սովորում են ավելի քան 450 000 աշակերտներ: Այս թիվը 39 500-ով ավելի է քան 1962—1963 ուսումնական տարում: Անցյալ տարի միջնակարգ դպրոցները տվեցին 4 400 շրջանավարտներ:

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական դպրոցներում սովորողների թիվը կազմում է 52 200 մարդ, որից 29 100 հոգի սովորում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1963 թվականին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները տվեցին 2910 շրջանավարտներ, որոնցից 471 հոգի տարբեր մասնագիտության ինժեներներ:

Նոր հիվանդանոց.— Այս տարի Երևանում, Հրապարանի աջափնյա թաղամասում, սկսվելու է կառուցումը բացառիկ բարեկարգ մի հիվանդանոցի, որը նախագծել է ճարտարապետ Աշոտ Ղապարյանը: Հիվանդանոցը պիտի

համապատասխանի ժամանակակից բժշկության բոլոր պահանջներին: Հիվանդների սենյակները ունենալու են միայն մեկ կամ երկու մահճակալ, օդի մաքրությունը կարգավորող սարք, պանելային ջեռուցում, փոշեռսիչ հարմարանք և հեռուստատեսային գործիքներ, որոնց միջոցով հիվանդները կկարողանան «տեսնվել» իրենց հարապատների հետ: Ֆիզիոտերապևտիկ բաժինը, բացի ամեն տեսակի բուժասենյակներից, կունենա նաև ջրաբուժարան: Հիվանդանոցի 6-րդ և 7-րդ հարկերում տեղավորված կլինեն օդաբուժարանը և արևային բուժման բաժանմունքը: Վիրաբուժական բաժինը կահավորված կլինի ամենաբարդ գործիքներով և հնարավոր կլինի կատարել ամենաբարդ տեսակի վիրահատումներ: Վիրահատման սենյակները կունենան հեռուստատեսային գործիքներ, որոնց միջոցով բժիշկները և ուսանողները կկարողանան հետևել վիրահատման գործողությանը:

Արդյունաբերության պարգագումը Հայաստանում.— Տարեցտարի արդյունաբերության պարգագումը ավելի նոր թափ է ստանում Հայաստանում: Անցյալ 1963 թվականին Հայաստանի Մինիստրների սովետին ենթակա կազմակերպությունները արդյունաբերական շինարարության վրա ծախսել են 140 000 000 ռուբլի, կամ 11 տոկոսով ավելի, քան 1962 թվականին: Միայն մեկ տարում ջահագործման են հանձնվել 15 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց թվում Երևանի ջերմաէլեկտրակայանը, Ագարակի պղնձամոլիբդենային գործարանը, Իջևանի գորգագործական ֆաբրիկան, Սևանի ապակեմեկուսիչ գործարանը և այլն և վերկառուցվել ու ընդարձակվել են մի շարք այլ գործարաններ:

Մեկ տարվա ընթացքում Հայաստանում բանվորների և ծառայողների թիվն ավելացել է 34 000 մարդով և ներկայիս կազմում է 530 000 մարդ:

Բնակարանային շինարարությունը Հայաստանում.— Անցյալ տարի Հայաստանի քաղաքներում (ներառյալ նաև Երևանը) և քաղաքատիպ ավաններում կառուցված և օգտագործման հանձնված բնակարանների ընդհանուր տարածությունը կազմել է 830 000 քառակուսի մետր: Այդ թվից 650 000 քառակուսի մետրը կառուցված է պետության հաշվին, իսկ մնացածը՝ անհատ քաղաքացիների միջոցներով և պետական վարկերի օժանդակությամբ:

Բացի այդ, գյուղական վայրերում գյուղացիները և գյուղի մտավորականները պետական վարկերի օգնությամբ կառուցել են ավելի քան 6 000 բնակելի տներ:

Հայաստանի բնակչության թիվը.— Հայաստանի Մինիստրների սովետին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչության տվյալներով, հանրապետության բնակչության ընդհանուր թիվը առ 1-ը հունվարի 1964 թվականի կազմել է 2 070 000 մարդ: Մեկ տարվա ընթացքում բնակչության թիվն ավելացել է 62 500 մարդով:

Հետաքրքրական թվեր.— Անցյալ 1963 թվականի ընթացքում Հայաստանում պետությունից նպաստ են ստացել 150 000 թոշակառուներ, 21 000 ուսանողներ, 83 000 բազմապատկեր մայրեր: Պետության հաշվին ավելի քան 43 000 երեխաներ խնամվել են մանկապարտեզներում և մանկամստիկներում, իսկ 66 000 բանվորներ, ծառայողներ և դպրոցականներ հանգստացել ու բուժվել են սանատորիաներում, հանգստյան տներում և պիոներական ճամբարներում:

